

# ՆԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ն Ա Ն Դ Ե Ս

---

---

2007

2

---

---

Հրատարակվում է  
Հայաստանի Հանրապետության  
պետական կառավարման ակադեմիայի  
գիտական խորհրդի որոշմամբ

# ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գլխավոր խմբագիր՝  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ տնտեսագիտության թեկնածու

*Խմբագրական խորհուրդ՝*

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր (նախագահ)
ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ	ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար
ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ	ՀՀ Նախագահի օգնական
ՄԱՆՎԵԼ ԲԱԴԱԼՅԱՆ	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ
ԳՎԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՎԱՅԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԷՂՈՒԱՐԴ ՕՐԴՅԱՆ	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՐԱՆՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ	հոգեբանական գիտությունների դոկտոր
ՄԵԼՍ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ	հոգեբանական գիտությունների դոկտոր
ԳԱՐԻԿ ԹԵՆՅԱՆ	քաղաքագիտության դոկտոր
ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ	քաղաքագիտության դոկտոր
ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵԶԻՐՅԱՆ	կենսաբանական գիտությունների թեկնածու (պատասխանատու քարտուղար)

«ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»  
Երևան

**Академия государственного  
управления  
Республики Армения**

**ПУБЛИЧНОЕ УПРАВЛЕНИЕ**

*Главный редактор:*

**Оганес Арутюнян** кандидат экономических наук

*Редакционный совет:*

<b>Армен Арутюнян</b>	доктор юридических наук, профессор ( <b>председатель</b> )
<b>Армен Геворгян</b>	руководитель аппарата президента РА
<b>Виген Саргсян</b>	помощник президента РА
<b>Манвел Бадалян</b>	председатель Совета гражданской службы РА
<b>Гагик Арутюнян</b>	доктор юридических наук, профессор
<b>Ваге Степанян</b>	доктор юридических наук, профессор
<b>Ашот Хачатрян</b>	доктор юридических наук, профессор
<b>Юрий Суварян</b>	доктор экономических наук, профессор
<b>Эдуард Ордян</b>	доктор экономических наук, профессор
<b>Грант Аванесян</b>	доктор психологических наук
<b>Мелс Мкртумян</b>	доктор психологических наук, профессор
<b>Гарик Керян</b>	доктор политических наук
<b>Мариам Маргарян</b>	доктор политических наук
<b>Хачатур Безирджян</b>	кандидат биологических наук ( <b>ответственный секретарь</b> )

---

**Public Administration Academy of the  
Republic of Armenia**

**PUBLIC ADMINISTRATION**

*Editor-in-Chief:*

**Hovhannes Harutyunyan** doctor of Economics

*Editorial Council:*

<b>Armen Harutyunyan</b>	Doctor of Sciences (Law), Professor ( <b>Chairman</b> )
<b>Armen Gevorgyan</b>	Chief of Staff to the President of the RA
<b>Vigen Sargsyan</b>	Assistant to the President of the RA
<b>Manvel Badalyan</b>	President of Civil Service Council of the RA
<b>Vahe Stepanyan</b>	Doctor of Sciences (Law), Professor
<b>Gagik Harutyunyan</b>	Doctor of Sciences (Law), Professor
<b>Ashot Khachatryan</b>	Doctor of Sciences (Law), Professor
<b>Yuri Suvaryan</b>	Doctor of Sciences (Economics), Professor
<b>Eduard Ordyan</b>	Doctor of Sciences (Economics), Professor
<b>Hrant Avanesyan</b>	Doctor of Sciences (Psychology)
<b>Mels Mkrtyunyan</b>	Doctor of Sciences (Psychology), Professor
<b>Garik Keryan</b>	Doctor of Sciences (Political Sciences)
<b>Mariam Margaryan</b>	Doctor of Sciences (Political Sciences)
<b>Khachatur Bezirjyan</b>	Doctor of Biology ( <b>Executive Secretary</b> )

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Հանրային կառավարում</b>	<b>6</b>
<hr/>	
<b>ՀՈՎՅԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</b>	
<i>ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԵԴԵՐԱԼԻԶՄԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳՎԱԿՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ.....</i>	<i>6</i>
<b>Իրավագիտություն</b>	<b>17</b>
<hr/>	
<b>ՓԻՐՈՒՋ ՍԱՐԳՍՅԱՆ</b>	
<i>ԲԱՆԿԵՐԻ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԲԱՆԿԵՐԻ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԱՊՅ ՄՈԴԵԼԱՅԻՆ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....</i>	<i>17</i>
<b>ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</b>	
<i>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ԲՆՈՒՅԹԻ ԵՎ ԴՐԱ ՏԵՍԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ.....</i>	<i>28</i>
<b>ԳՈՒՐԳԵՆ ԱՖՐԻԿՅԱՆ</b>	
<i>ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ.....</i>	<i>44</i>
<b>ՏՆՍԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (Կառավարում)</b>	<b>51</b>
<hr/>	
<b>ԲԵՆԻԱՄԻՆ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ</b>	
<b>ԱՐԱ ԳՅՈՒՐՅԱՆ</b>	
<i>ՄԱՐԴՈՒ ԳԻՏԱԿՑԿԱԾ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐԴՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ՝ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾՈՆ.....</i>	<i>51</i>
<b>ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ</b>	
<i>ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԿԱՐԳՎԱԿՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ.....</i>	<i>65</i>
<b>Քաղաքագիտություն</b>	<b>76</b>
<hr/>	
<b>ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ</b>	
<i>ՔԱՂԱՔԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ.....</i>	<i>76</i>
<b>ԳՈՌ ՍԵՎՈՍՅԱՆ</b>	
<i>ԷԹՆԻԿ ԽՄԲԵՐԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ.....</i>	<i>89</i>
<b>Հուշագիր հեղինակին</b>	<b>98</b>
<hr/>	

## СОДЕРЖАНИЕ

<b>Публичное управление</b>	<b>6</b>
<b>О. АРУТЮНЯН</b> СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ БЮДЖЕТНОГО ФЕДЕРАЛИЗМА И МЕХАНИЗМ РЕГУЛИРОВАНИЯ.....	6
<b>Юридические науки</b>	<b>17</b>
<b>П. САРГСЯН</b> СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ЗАКОНОДАТЕЛЬСТВА О БАНКРОТСТВЕ БАНКОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И МОДЕЛЬНОГО ЗАКОНА СНГ “О БАНКРОТСТВЕ БАНКОВ”.....	17
<b>А. АРУТЮНЯН</b> КЛАССИФИКАЦИЯ ОСНОВНЫХ ПРАВОВЫХ ПРИНЦИПОВ ГОСУДАРСТВЕННОЙ СЛУЖБЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ПО ХАРАКТЕРУ И ЕЕ ТЕОРЕТИКО-ПРАКТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ.....	28
<b>Г. АФРИКЯН</b> КОНСТИТУЦИОННЫЙ СУД РА, КАК ОРГАН КОНСТИТУЦИОННОГО ПРАВОСУДИЯ.....	44
<b>Экономика (управление)</b>	<b>51</b>
<b>Б. ЕГИАЗАРЯН</b> <b>А. ГЮРДЖЯН</b> ИСПОЛЬЗОВАНИЕ СПОСОБНОСТИ ОСОЗНАННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ЧЕЛОВЕКА-ВАЖНЕЙШИЙ ФАКТОР РАЗВИТИЯ ОБЩЕСТВА.....	51
<b>А. ГРИГОРЯН</b> ЗАРУБЕЖНЫЙ ОПЫТ АНТИМОНОПОЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ ЭКОНОМИКИ.....	65
<b>Политология</b>	<b>76</b>
<b>М. МАРГАРЯН</b> ПОЛИТИЧЕСКИЕ СЕТИ В СТРУКТУРЕ ПУБЛИЧНОЙ ПОЛИТИКИ.....	76
<b>Г. СЕВОСЯН</b> ЭТНИЧЕСКИЕ ГРУППЫ КАК ИНФОРМАЦИОННЫЙ ФАКТОР ТРАНСФОРМАЦИИ ПОЛИТИЧЕСКОЙ СИСТЕМЫ.....	89
<b>Памятка автору</b>	<b>98</b>

# CONTENTS

<b>Public Administration</b>	<b>6</b>
<hr/> <hr/>	
<b>H. HARUTYUNYAN</b> <i>BUDGETARY FEDERALISM COMPARATIVE ASSESSMENT AND MECHANISMS OF REGULATION.....</i>	<i>6</i>
<b>Law</b>	<b>17</b>
<hr/> <hr/>	
<b>P. SARGSYAN</b> <i>COMPARATIVE ANALYSIS OF LEGISLATION ON BANCROPTCY OF BANKS OF THE REPUBLIC OF ARMENIA AND CIS MODEL LAW "ON BANCROPTCY OF BANKS".....</i>	<i>17</i>
<b>A. HARUTYUNIAN</b> <i>THE CLASSIFICATION OF THE MAIN JURIDICAL PRINCIPLES OF THE PUBLIC SERVICE OF THE REPUBLIC OF ARMENIA ACCORDING TO ITS ESSENCE AND VIEW-APPLICABLE MEANING .....</i>	<i>28</i>
<b>G. AFRIKYAN</b> <i>THE CONSTITUTIONAL COURT AS A TRIBUNAL WHICH CARRYES OUT THE CONSTITUTIONAL JUSTICE.....</i>	<i>44</i>
<b>Economics (Management)</b>	<b>51</b>
<hr/> <hr/>	
<b>B. YEGHIAZARYAN</b> <b>A. GYURJYAN</b> <i>UTILIZATION OF INDIVIDUAL'S CAPABILITY OF CONSCIOUS ACTING AS A STRATEGIC FACTOR FOR SOCIETY'S DEVELOPMENT.....</i>	<i>51</i>
<b>A. GRIGORYAN</b> <i>INTERNATIONAL PRACTICE OF ANTIMONOPOLY REGULATION OF ECONOMY.....</i>	<i>65</i>
<b>Political science</b>	<b>76</b>
<hr/> <hr/>	
<b>M. MARGARYAN</b> <i>POLITICAL NETWORKS PROMOTING PUBLIC POLICY .....</i>	<i>76</i>
<b>GOR SEVOSYAN</b> <i>ETHNIC GROUPS AS INFORMATIVE FACTOR IN POLITICAL SYSTEM'S TRANSFORMATION.....</i>	<i>89</i>
<b>Instruction to the author</b>	<b>98</b>
<hr/> <hr/>	

**ՀՈՎՅԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր,  
տնտեսագիտության թեկնածու*

**ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԵՂԵՐԱԼԻՋՍԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ**

Ընդունված է բյուջետային ֆեդերալիզմը բաժանել երկու ոլորտի՝ ներքին և արտաքին: Ներքին ոլորտը կատարում է պետական իշխանության մակարդակների միջև բյուջետային միջոցների կենտրոնացման, բաշխման և վերաբաշխման գործառույթները: Արտաքին ոլորտն արտացոլում է բյուջետային հարաբերությունների վերջնական նախատեսվածությունը՝ իրականացնելով պետության հասարակության «սպասարկումը»: Նշենք նաև, որ այն ամենն որքան էժան է ստացվում, այնքան արդյունավետ է գնահատվում բյուջետային ֆեդերալիզմի համակարգի գործունեությունը:

Բյուջետային ֆեդերալիզմի հիմնական բարդություններից է համարվում բյուջետային համահարթեցումը, որը ստորաբաժանվում է հորիզոնականի և ուղղահայացի: Ուղղահայաց համահարթեցումն այնպիսի գործընթաց է, որի դեպքում իշխանության տարբեր մակարդակների մարմինների բյուջեներում հաշվեկշռվածություն է հաստատվում ծախսերի և իրատեսական եկամտային ռեսուրսների (հարկային մուտքերի) միջև: Բյուջետային համակարգի վերին մակարդակի վրա պարտավորություն է դրվում այն առումով, որ եթե ցածր մակարդակում եկամտային մասի իրական ապահովման հնարավորությունները բավարար չեն պատվիրակված և կամավոր լիազորությունների կատարման համար, ապա կենտրոնական իշխանությունը պարտավոր է տրամադրել այդ տարածաշրջանին կամ տեղական ինքնակառավարման մարմնին (այսուհետև՝ ՏԻՄ) չբավարարող բյուջետային ռեսուրսները:


Կենտրոնական իշխանությունը՝ ի տարբերություն ցանկացած տարածաշրջանի, տիրապետելով տնտեսական կարգավորման և հարկային ստացումների ծավալների առավել մեծ հնարավորությունների, պետք է փոխհատուցի տարածաշրջանների բյուջեների պակասուրդը դաշնային բյուջեի մակարդակով կուտակված միջոցների հաշվին:

Ուղղահայաց համահարթեցումը միանշանակ պետք է համատեղվի հորիզոնականի հետ, որը կնշանակի դաշնության սուբյեկտների միջև դոտացիայի և հարկերի համամասնական բաշխում՝ տարածաշրջանային գործոններով պայմանավորված տարբեր տարածաշրջանների հնարավորությունների անհավասարության բացառում:

Այսպիսով՝ ստացվում է, որ դաշնային բյուջեի ծախսերին սոցիալ-տնտեսական խնդիրների որոշման հետ մեկտեղ ավելանում են բյուջետային համակարգի հավասարակշռությունն ապահովող ծախսերը: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկում ենք դաշնային բյուջեի ծախսային ուղղվածության օրինակելի տարբերակը (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1

**Դաշնային բյուջեի ծախսային ուղղվածությունը**





Եթե առավել համառոտ ներկայացնենք, ապա բյուջետային համահարթեցման համակարգը որոշում է դաշնային բյուջեի և դաշնության սուբյեկտների միջև այնպիսի փոխգործունեություն, որը հնարավորություն է ընձեռում երկրի ցանկացած քաղաքացու (անկախ նրանից, թե որ տարածաշրջանում է ապրում) ստանալ պետական ծառայությունների որոշակի մակարդակ:

ՌԴ-ում բյուջետային համահարթեցման երկու ուղղությունն էլ ընթացել է բավականին դժվարություններով: Հորիզոնական համահարթեցման ուղին իր կիրառումը չի ստացել այն պարզ պատճառով, որ պետության կողմից երաշխավորված լիազորությունների կատարումն առանձին տարածաշրջաններում և տեղական ինքնակառավարման մարմիններում կապված է եղել այդ տարածաշրջանների տնտեսական վիճակի զգալի տարբերություններով, ծախսերի այլ մակարդակով և բյուջետային հնարավորությունների բարձր աստիճանավորմամբ:

Պետության կողմից երաշխավորված յուրաքանչյուրին սոցիալական ստանդարտի ապահովման վրա էական ներգործություն են ունենում շուկայական գործընթացները և այդ փուլում շարունակվող տնտեսական ճգնաժամը, ինչը պարտադրում է կազմակերպություններին հրաժարվել սոցիալական ծախսերից ու կրճատել աշխատողների թվաքանակը: Վերջիններիս պաշտպանվածության խնդիրը ծանրանում է պետության ուսերին: Այդ գործոններն իրենց հերթին առաջ բերեցին այնպիսիները, որոնք բնական աշխարհագրական գործոնների հետ մեկտեղ պետք է հաշվի առնվեն բյուջետային ապահովվածության հորիզոնական համահարթեցման դեպքում: Դրանցից են և՛ բնակչության շերտավորումը՝ ըստ եկամուտների մակարդակի, և՛ ըստ տարածաշրջանների միջև կենսամիջինումի տարբերությունների, և՛ ըստ գների տարբեր մակարդակների: Այս բոլորն էլ ավելի են բարդացնում բյուջետային համահարթեցման խնդիրը:

Ուղղահայաց բյուջետային կարգավորման կազմակերպումը նույնպես կապված է որոշակի դժվարությունների հետ: Ներկայումս դրա հիմքում դրվում են այնպիսի սկզբունքներ, որոնք որոշակի ձևով խթանում են դաշնության սուբյեկտներին մեծացնելու իրենց բյուջեների պակասուրդը: Ակնառու օրինակ է «Ֆինանսական օժանդակության տարածաշրջանային հիմնադրամ»-ից տրանսֆերտների տեսքով միջոցների բաշխման մեթոդաբանությունը: Ուղղակի նշենք, որ դրա կիրառման դեպքում իրականացվում է տարածաշրջանների դասակարգում երկու հիմնական խմբերում՝ այսպես կոչված «կարիքավորների», որոնց սեփական եկամուտները փոքր են երկրում միջին ցուցանիշից և «հատուկ կարիքավորների», որոնց բյուջետային ծախսերը գերազանցում են եկամուտներին:

Այսպիսով, տարածաշրջանային բյուջեների պլանավորման գործընթացում հաշվարկային գերածախսը ծածկվում է դաշնային բյուջեի հաշվին, որը մեկ անգամ ևս հաստատում է կիրառված մեթոդաբանության թերությունները:

Այդ ամենի բնական արդյունք է համարվում այն, որ կենտրոնական իշխանության բյուջեի պակասուրդը նվազեցնելու ձգտումը բախվում է տարածաշրջանների տնտեսական հիմնավորվածությունների դիմակայությանը:

Վերոնշյալ փաստարկներից ակնհայտ հետևում է, որ բյուջետային համակարգի բնականոն զարգացման համար բյուջետային համահարթեցման ձևերն ու միջոցները լուրջ բարեփոխումների կարիք ունեն: Մասնավորապես, երբ խնդիրը վերաբերում է դաշնային կառուցվածք ունեցող երկրներին, ապա ֆինանսական օժանդակության տարածաշրջանային հիմնադրամի միջոցների բաշխման դեպքում անհրաժեշտաբար պետք է հաշվի առնվեն տարածաշրջանների ինչպես բնական, աշխարհագրական, բնակլիմայական, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները:

Կարող ենք նշել նաև, որ բյուջետային համահարթեցումը ինքնին չի համարվում բյուջետային ֆեդերալիզմի որոշող նշան, քանի որ իր տեղն ունի նաև ունիտար պետություններում: Այն միայն իր ձևով է արտացոլում բյուջետային ֆեդերալիզմի հարաբերությունները, իսկ իր էությանը հանդես է գալիս որպես միասնական պետության, հասարակության միասնական ֆինանսական և տնտեսական համակարգերի գործունեության օբյեկտիվորեն անհրաժեշտ ձև: Միաժամանակ միավորում է դաշնային պետությունը, նաև ժողովուրդներին և քաղաքացիներին:

Հարկ է նշել, որ բյուջետային ֆեդերալիզմի ճակատագիրը կախված է ոչ այնքան ընտրված ձևաչափից, այլ հենց պետության՝ որպես միասնական ամբողջություն, տնտեսական ճգնաժամը հաղթահարելու, շուկայական տնտեսակարգին բնորոշ ֆինանսական կայունացման այլ ռազմավարության անցնելու կարողություններից: Չպետք է թուլատրել այնպիսի իրավիճակ, երբ բյուջետային ֆեդերալիզմի զարգացումը ինքնին վերածվի քաղաքական և տնտեսական ճգնաժամի արագացման գործոնի՝ ավելի թուլացնելով դաշնային (համապետական) բյուջեն, տնտեսության իրական հատվածի առողջացման փոխարեն ակտիվացնելով պայքարը դաշնային հարկերի բաժանման հարցում, հանգեցնում է երկրի արժեթղթերի շուկայի ճգնաժամին՝ պայմանավորված դաշնային (պետական) և տեղական ինքնակառավարման մարմինների փոխառությունների միջև առկա մրցակցությամբ, սահմանափակում է կենտրոնական իշխանության հնարավորությունները միասնական էմիսիոն, վարկային և տոկոսադրույքի քաղաքականությունների իրականացման գործընթացում, ինչպես նաև բյուջեի պակասուրդի կրճատման ուղղությամբ:

Բյուջետային ֆեդերալիզմն անհրաժեշտ է ավելի շատ մերձեցնել ընդհանուր մակրոտնտեսական քաղաքականության շուկայական բարեփոխումներին: Բյուջետային ֆեդերալիզմի բարդությունների որոշումը վերջնական արդյունքում հնարավորություն կընձեռի ապահովել երկրի քաղաքական և տնտեսական կայունությունը, միաժամանակ բարձ-

րացնելով շուկայական տնտեսակարգի անաչառությունը և կառավարումը:

Անցումային փուլ ապրած երկրներում բյուջետային ֆեդերալիզմին և դրա շրջանակներում ձևավորվող միջբյուջետային հարաբերություններին բնորոշ է ցածր արդյունավետությունը: Մասնավորապես, դաշնային պետություններում հիմնական պատճառներից է տարածաշրջանների միջև եկամուտների բարձր աստիճանավորումը, որը պայմանավորված է արտադրական հզորություններ տնօրինելու բարձր կարողություններով: Ունիտար պետություններում հորիզոնական համահարթեցման պայմաններում առկա է լինում հարկային ապառքներ մասնավորապես այն հարկատեսակների գծով, որոնց գանձման գործառույթը վերապահվում է ՏԻՄ-երին:

Ըստ եկամուտների հորիզոնական աստիճանավորման՝ խորացումը նպաստում է միջոցների ծավալային աճին, որոնք անհրաժեշտ են տարածաշրջանները կամ համայնքները երկրում նույնանուն ցուցանիշի միջին մակարդակին հասցնելու համար: Միջտարածաշրջանային աստիճանավորման ուժեղացման պայմաններում ակնհայտ է, որ մեծ ծավալի ռեսուրսներ կհոսեն աղքատ տարածաշրջաններ: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում գործող տրանսֆերտների հատկացման մեթոդաբանությունը հանգեցնում է անցանկալի երևույթի դրսևորմանը: Այն դեպքում, երբ տարածաշրջանային մարմնի կամ համայնքի սեփական եկամուտների փաստացի ծավալը կրճատվում է, ապա բարձրանում է կենտրոնից ֆինանսական օժանդակություն ստանալու իրավունքը: Ակնհայտ է, որ այդպիսի կառուցակարգի պայմաններում թուլանում է սեփական եկամուտների հավաքագրման ներուժի օգտագործման ձգտումը, որը դրական գնահատականի երբևէ չի կարող արժանանալ:

Այսպիսի պայմաններում անհրաժեշտ են արմատական փոփոխություններ տրանսֆերտային քաղաքականության ուղղությամբ, որոնք կնպաստեն տարածաշրջանների ու համայնքների ֆինանսական ինքնուրույնության և պատասխանատվության բարձրացմանը, բյուջետային ճգնաժամի հաղթահարմանը, սոցիալ-տնտեսական բարեփոխումների արագացմանը: Տարածաշրջանների ու համայնքների հետաքրքրվածությունը բարձրացնելու համար անփոփ բյուջեի հետ հատկացված եկամուտների ծավալների առաջադրանքների կատարման և կենտրոնից ֆինանսական օժանդակության հատկացման միջև անհրաժեշտ է հաստատել ուղղակի կախվածություն: Կենտրոնական իշխանությունը պետք է մշակի և իրականացնի տարածաշրջաններում և համայնքներում բյուջետային առողջացման երաշխավորված ծրագիր, որին կիստևի ֆինանսական օժանդակության հատկացումը: Տվյալ դեպքում որպես հիմնական փոփոխականներ կարող են լինեն հետևյալները.

- կարևոր նշանակության՝ առողջապահության, գիտության, կրթության, սոցիալական ապահովության, ծախսերի բաժինը տարածաշրջանային բյուջեի ծախսերում,
- բնակարանային-կոմունալ ծառայությունների և հասարակական տրանսպորտի վճարման մեջ բնակչության բաժինը,
- գների վարչական վերահսկման առկայությունը,
- հայրենական ապրանքների և ծառայությունների տարածաշրջանային շուկաներ թուլատրելիության սահմանափակության առկայությունը և ինտենսիվությունը,
- բյուջետային կախվածության սահմանները,
- հարկերից ազատումը և հարկային արտոնությունները:

Տարածաշրջանների և համայնքների բյուջեների առողջացմանը պետք է նպաստի դրանց բյուջետային գործընթացի կանոնակարգումը, մասնավորապես բյուջեի հողվածների թափանցիկության ապահովումը, դրանց համապատասխանումը ընդհանուր դասակարգման սկզբունքներին, տարածաշրջանային արտաբյուջետային հիմնադրամների առկայության դեպքում դրանց միջոցների կոնսոլիդացումը տարածաշրջանային և համայնքային բյուջեներ, ինչպես նաև բյուջեների զանձապետական կատարումը:

Միջբյուջետային հարաբերությունների բնականոն գործունեության կարևոր պայման է համարվում կենտրոնական իշխանության կողմից ֆինանսական վերահսկողությունը տարածաշրջանային կամ համայնքային բյուջեների ճիշտ և նպատակային ծախսման ուղղությամբ: Անհրաժեշտ է ավելի բարձրացնել վերստուգումների դերը հատկապես տրանսֆերտների օգտագործման նպատակայնությունը ճշգրտելու ուղղությամբ: Կարևոր է նաև տարածաշրջանի կամ համայնքի եկամտային բազայի ներուժի, այդ թվում նաև որպես սեփականություն հանդիսացող բնական պաշարների, անշարժ գույքի և օգտագործման զնահատականը: Համանմանորեն պետք է զնահատվեն բյուջետային համակարգի սուբյեկտների ծախսերը, որպեսզի բացառվի չհիմնավորված ֆինանսական օժանդակության հատկացումները:

Վերը շարադրվածի տրամաբանական զարգացումը կարող է դառնալ իշխանության համապատասխան մարմինների կողմից հատկացված միջոցների փաստացի օգտագործման արդյունավետության պարտադիր հաստատման պահանջը: Այդպիսի պաշտոնական հաստատումները կարող են դառնալ հերթական ֆինանսական օժանդակության միջոցներ ստանալու լրացուցիչ հիմքերը: Այդ դեպքում կարևորը ոչ թե ստացված միջոցների լրիվ ծախսելն է, այլ հենց տարածաշրջանում կամ համայնքում որոշակի փոփոխականների բարելավման կամ կայունացման համար դրանց օգտագործման արդյունավետությունը:

Միջբյուջետային հարաբերությունների մոդերնացման համար կարևոր նշանակություն ունի պետության կողմից ֆինանսական օժանդակության գործիքի փոփոխությունը: Այդպիսին պետք է դառնան ոչ

թե «համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման» ոչ թե հռչակագրային, այլ որոշակի խնդիրները, որոնք կարող են պետության կողմից հատկացված միջոցների հաշվին համարժեք լուծումներ ստանալ հաստատված ժամկետում: Փաստորեն, նման մոտեցման դեպքում այդպիսի խնդիրների լուծման նախաձեռնությունը պետք է բխի ֆինանսական օժանդակություն հավանական ստացողների՝ տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններից, որը համարժեք կլինի բյուջետային միջոցների նպատակային օգտագործման պատասխանատվությունը կրելու պատրաստականությանը և հայտարարված արդյունքների ձեռքբերմանը:

Դժվարություններով հանդերձ՝ հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում զգալի են ձեռքբերումները, չնայած առաջիկայում ևս հարկ կլինի կատարելագործել բյուջետային ֆեդերալիզմի գործող համակարգը: Փաստենք, որ մենք նույնպես համակարծիք ենք տնտեսագիտության դոկտոր Վ. Լ. Հարությունյանի այն տեսակետին, որ «Հայաստանում գործող բյուջետային ֆեդերալիզմը թերություններ ունի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների մասով...» [1, էջ 31]: Ակնհայտ է, որ պետական բյուջեի կողմից ՏԻՄ-երի չֆինանսավորվող լիազորությունների կարգավորման խնդրի լուծումը կախված կլինի բյուջետային ֆեդերալիզմի գործող ձևաչափի և այն կարգավորող օրենսդրական հիմքերի կատարելագործմամբ: Այդ խնդրի լուծումը Վ. Լ. Հարությունյանը կապել է «Բյուջետային ֆեդերալիզմի և միջբյուջետային հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի ընդունման հետ և առաջ է քաշել այն տեսակետը [1, էջ 32], ըստ որի համայնքներն աստիճանաբար պետք է բեռնաթափվեն պետության պատվիրակված և կամավոր ավելորդ լիազորություններից: Հատկանշական է, որ, ըստ այս տեսակետի, պարտադիր լիազորությունները պետք է սահմանվեն համայնքների գործառույթների իրականացման մասով, ինչն ակնհայտ իրատեսական է և ճշմարտացի: Շարունակելով Վ. Լ. Հարությունյանի տեսակետը՝ ներկայումս բյուջետային ֆեդերալիզմի գործող ձևաչափում առկա թերությունների լուծման համար առաջարկում ենք ամբողջական հայեցակարգ, որի ելակետում պետք է դրվի յուրաքանչյուր բյուջետային տարվա համար «Հայաստանի Հանրապետությունում բյուջետային ֆեդերալիզմի կարգավորման մասին» ՀՀ օրենքի ընդունումը, ուր կսահմանվեն ինչպես տարբեր մակարդակների բյուջեների լիազորությունները, այնպես էլ, ըստ նախորդ տարվա ֆինանսական կայունության դասակարգման արդյունքների, կամրագրվեն ֆինանսական օժանդակության ենթակա համայնքները:

Շուկայական հարաբերությունների արմատավորման զուգընթաց, հանրապետության իշխանության կենտրոնական և տեղական կառավարման մարմինների ձեռքում պետական ու տեղական բյուջեներն այսուհետ ծառայելու են որպես կարևոր ֆինանսական լծակներ տնտեսության ճյուղային և տարածքային վերակառուցման, սոցիալական

նոր ենթակառուցվածքների ստեղծման ու զարգացման հիմնախնդիրները լուծելու գործում: Ներկայումս երկրի 926 համայնքից շատերն ունեն սակավաթիվ բնակիչներ, տրանսպորտային և այլ անբավարար ենթակառուցվածք, և որպես հետևանք, տնտեսական անբավարար ներուժ՝ ձևավորելու սեփական բավարար բյուջե ու լուծելու տեղական նշանակության խնդիրներ: Ուստի, ժամանակն է ձևավորել կայուն ֆինանսական հիմքերով համայնքներ, որոնք առավել մեծ դեր կունենան նշված հիմնախնդիրների լուծման գործում: Ակնհայտ է, որ առաջիկայում հանրապետությունում միջհամայնքային միավորումների ստեղծման ուղիով համայնքների խոշորացումը կարող է հանդիսանալ միջբյուջետային ֆեդերալիզմի կատարելագործման առաջնահերթ ուղղությունը, որը, ըստ էության, կնպաստի հանրապետությունում նոր վարչատարածքային կառուցվածքի ձևավորմանը:

Համայնքների խոշորացման վարչական ճանապարհը, որի համաշխարհային փորձը բավական մեծ է, ՀՀ-ում կիրառելը կարող է լինել ժամանակավրեպ և անարդյունավետ, քանի որ դա համակարգային խոշոր փոփոխություն է և ավելորդ շտապողականությունն այս հարցում կարող է ունենալ լուրջ հետևանքներ: Բայցևայնպես, հարցի լուծումը չպետք է երկարածովի և դառնա քաղաքական ուժերի շահարկման առարկա: Պետք է իր շարունակությունը ստանա միջհամայնքային միավորումների ձևավորման գործընթացը, որն աստիճանաբար պետք է կրի մասսայական բնույթ՝ պահպանելով օրենքի համապատասխան տարրերը:

ՀՀ վարչատարածքային բաժանման գործող համակարգը ներկայումս չի նպաստում տեղական ինքնակառավարման հետագա ծավալմանը և զարգացմանը: Չնայած առկա վարչատարածքային բաժանման հիման վրա է ձևավորվել տեղական ինքնակառավարման համակարգը, սակայն ժամանակը պահանջում է թե՛ վարչատարածքային բաժանման և թե՛ տեղական ինքնակառավարման համակարգերի հետագա բարեփոխումներ:

Փաստորեն, ստեղծվել են առանց լուրջ հիմնավորումների և դրանց ներկայացվող պահանջների հաշվառման մեծ թվով համայնքներ: Տեղական ինքնակառավարումը այդ համայնքներում ձևական բնույթ ունի, փաստացի բնակչությանը չի մատուցվում որևէ ծառայություն և ուղղակիորեն աննպատակահարմար է դրանց հետագա պահպանումը: Ձևավորված երկաստիճան կառավարման համակարգում չի կատարվել լիազորությունների և համապատասխան ֆինանսական միջոցների ճիշտ տեղաբաշխում կառավարման տարբեր մակարդակների միջև, որի պատճառով հաճախակի ծագում են հիմնախնդիրներ: Գործող Սահմանադրությամբ հնարավոր է օրենսդրական դաշտի փոփոխություններով ձևավորել վարչատարածքային նոր համակարգ:

ՀՀ-ում կծևավորվի 300-350 համայնք (կստեղծվեն համայնքների խոշորացման արդյունքում), 15000-ից ավելի բնակչություն ունեցող 22 ինքնուրույն քաղաք և 40-45 միջհամայնքային միավորում, որոնց բնակչությունը կկազմի 15000-ից մինչև 50000, ինչպես նաև Երևանի թաղային համայնքների միավորումը, որում կհամախմբվեն Երևանի 12 թաղային համայնքները [2; էջ 102]:

Մշակելով տարածքային կառավարման օրենսդրությունը՝ համայնքների և միջհամայնքային միավորումների զարգացմանը զուգահեռ հարկ կլինի խոշորացնել մարզերը: Երևան քաղաքը Եվրոպական խարտիայի պահանջներին համապատասխան ճանաչվել է համայնք՝ տեղական ինքնակառավարման երկաստիճան համակարգով:

Նշված միջոցառումների իրականացման համար առաջին հերթին հարկ կլինի իրականացնել օրենսդրական փոփոխություններ, որի արդյունքում.

1. Միջհամայնքային միավորումները ճանաչվեցին վարչատարածքային միավորներ և դրանցում տեղի ունեցան միավորման խորհրդի և ղեկավարի՝ բնակչության կողմից ուղղակի ընտրություններ.

2. Երևան քաղաքը ճանաչվել է համայնք և համաքաղաքային խնդիրները իրականացնելու են բնակչության կողմից ուղղակի ընտրությունների միջոցով ձևավորված Երևանի խորհուրդը և քաղաքապետը (որի ընտրվելու կարգավիճակը քննարկման փուլում է):

Վերոնշյալ փոփոխությունների արդյունքում ՀՀ-ում հնարավոր կլինի ձևավորել եռաստիճան կառավարման համակարգ, որը բաղկացած կլինի պետական կառավարման և երկաստիճան տեղական ինքնակառավարման համակարգերից: Այսպիսով ակնհայտ է, որ նման արձատական բարեփոխումներին զուգընթաց ՀՀ-ում հարկ կլինի վերականգնել միջբյուջետային հարաբերությունների գործող կառուցակարգը, դոտացիայի բաշխման մեթոդաբանությունը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ի . Է. ԺՅ ղձձՁՁՁՁՁՁ Ի**, «Բյուջեկալային քաղաքականությունը և նրա կապարեկագործման հիմնահարցերը Նայասպանի Նանրապեկությունում», Երևան, «Զանգակ-97», 2003թ.:
2. «Տեղական ինքնակառավարման քարեփոխումները Նայասպանում», **. Է. ԱձձՁՁ ԻՁՁ ԻՁ** խմբագրությանը, ԵՊՆ, 2004թ.:
3. **Подпорина И.**, Современные проблемы бюджетного регулирования, Экономист, № 7, 1998 г.
4. **Берг О.**, О программе развития бюджетного федерализма в Российской Федерации на период до 2005 года, Вопросы экономики, № 5, 2002 г.
5. Федеральный закон от 26 марта 1998 г. N 42-ФЗ „О федеральном бюджете на 1998 год”.
6. **Марченко Г. В., Мачульская О. В.**, Финансовые механизмы межрегионального выравнивания., Финансы и кредит., 2000 г.
7. **Лексин В., Швецов А.** Бюджетный федерализм в период кризиса и реформ, Вопросы экономики, № 3, 1998 г.
8. **Игудин А. Г., Попанова Н. А.**, Некоторые проблемы межбюджетных отношений в Германии и России., Финансы, 1999 г.
9. **Boadway R.**, Recent Developments in the Economics of Federalism in: Canada: The State of the Federation 1999/2000. Toward a New Mission Statement for Canadian Federalism. Lazar H. (ed.). Queens University (Kingston, Ont.), Institute of Intergovernmental Relations, 2000.
10. **Boadway R., Keen M.**, Efficiency and the Optimal direction of Federal State Transfers.- International Tax and Public Finance, vol. 3, 1996.



**HOVHANNES HARUTYUNYAN**

*Rector of the Public Administration  
Academy of the Republic of Armenia,  
Doctor of Economics*

**BUDGETARY FEDERALISM COMPARATIVE ASSESSMENT  
AND MECHANISMS OF REGULATION**

This article is dedicated to internal and external aspects of budgetary federalism. The reforms for permanent development of budgetary leveling are very necessary today. For this aim it is very important to form municipalities with permanent financial bases.

The establishment of the local governance system is becoming an important and great issue. The current Constitution of Armenia gives us an opportunity for successful reforms and to form a new system of administrative areas of local governance. This article contains a detailed analysis and comparative assessment and mechanisms of regulation of the mentioned problems of formation, distribution and application of the financial resources of the population, tax strategically and tax legal policy system and budgetary federalism.

**ՓԻՐՈՒՋ ՍԱՐԳՍՅԱՆ**

*ՀՀ կենտրոնական բանկի նախագահի  
գլխավոր իրավական խորհրդական,  
ՀՀ ՊԿ ակադեմիայի հայցորդ*

**ԲԱՆԿԵՐԻ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԲԱՆԿԵՐԻ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԱՊՀ  
ՍՈՐԵԼԱՅԻՆ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Յուրաքանչյուր պետության տնտեսության էական տարրերից է բանկային համակարգը, որը բազմակողմանի և մեծ ազդեցություն ունի հասարակական կյանքի վրա: Բանկային համակարգն ապահովում է ոչ միայն ազատ դրամական միջոցների կուտակումը և դրանց ներգրավումը պաշտոնական շրջանառության մեջ, այլև դրամական կապիտալի միջնորդային ու միջտարածաշրջանային բաշխումը: Այն նաև տնտեսության վճարահաշվարկային համակարգի կարևոր օղակն է:

Բանկային համակարգի վիճակով է պայմանավորված ազգային արժույթի պաշտպանվածությունը և կայունությունը, այդ թվում՝ դրա զնոդունակությունը և փոխարժեքը օտարերկրյա արժույթի նկատմամբ, ինչն էական նշանակություն ունի պետության անկախության համար: Ինչպես նշում են իրավաբանական գիտությունների դոկտոր Գ. Ա. Թոսունյանը և իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Յ. Վիկուլինը. «Յուրաքանչյուր իրական ինքնիշխան պետության համար վարկային կազմակերպությունների կայունության ապահովման խնդիրներն ունեն ռազմավարական նշանակություն, միշտ արդիական են, քանի որ բնորոշում են «պետության տնտեսական անվտանգություն» հասկացության էությունը» [1, c. 9]:

Բանկային համակարգի կարևորությամբ և բանկերի, որպես տնտեսավարող սուբյեկտների, առանձնահատկությամբ է պայմանավորված բանկերի և վարկային կազմակերպությունների անվճարունակության (սնանկության) իրավական կարգավորման կարևորությունը: Խոսելով վարկային կազմակերպությունների (ըստ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության՝ բանկերը համարվում են վարկային կազմակերպություններ) անվճարունակություն իրավական ինստիտուտի մասին՝ Գ. Ա. Թոսունյանը և Ա. Յ. Վիկուլինը նշում են, որ վարկային կազմակերպությունների անվճարունակության (սնանկության) հարցերը կարգավորող իրավական ինստիտուտների, ենթաինստիտուտների և նորմերի ամբողջությունը կազմում է բանկային իրավունքի ենթաճյուղ, այսինքն՝

ամբողջական իրավական դաշտ, որով կարգավորվում են հարաբերականորեն ինքնուրույն բնույթ ունեցող հասարակական հարաբերություններ՝ բանկային իրավունքի կարգավորման ոլորտի շրջանակներում [1, c. 20]: Իրավաբանական գրականությունում, որպես կանոն, բանկերի անվճարունակության մասին օրենսդրության հիմնական խնդիրն է ֆինանսական կայունության ապահովման միջոցով պետական շահերի պաշտպանությունը: Այն ներառում է ներքոհիշյալ երեք բաղադրիչ՝

- ավանդատուների շահերի պաշտպանություն,
- վճարահաշվարկային համակարգերի սահուն և բնականոն գործունեության ապահովում,
- վարկային և այլ միջնորդ գործառնությունների իրականացման համար ֆինանսական համակարգի բավարար հնարավորությունների գոյություն:

Կարևորելով օրենսդրության այս ոլորտը՝ մշակվեց և 2005 թ. ԱՊՀ երկրների միջխորհրդարանական վեհաժողովի կողմից հավանության արժանացավ «Բանկերի սնանկության մասին» ԱՊՀ մոդելային օրենքը: Ինչպես մոդելային այս օրենքը, այնպես էլ ԱՊՀ երկրների ազգային օրենքները քննարկվեցին 2005 թ. հոկտեմբերի 5-7-ը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում կայացած՝ ԱՊՀ խորհրդարանական վեհաժողովի տնտեսության և ֆինանսների համաձայնագրով արտագնա նիստում:

Հայաստանի Հանրապետությունում բանկերի սնանկության ընթացակարգը և դրա հետ կապված իրավահարաբերություններն առաջին անգամ իրավական կարգավորման ենթարկվեցին 1996 թվականին, երբ ընդունվեց «Բանկերի սնանկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Քանի որ այս օրենքը նշված ոլորտը կանոնակարգող առաջին իրավական ակտն էր, այն ուներ թերություններ, որոնք հնարավորություն չէին ընձեռում բանկերի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին, արդյունավետ իրականացնել բանկերի սնանկության ընթացակարգում իր առջև օրենսդրորեն դրված խնդիրները: Մասնավորապես, որոշիչ դերը բանկերի սնանկության ընթացակարգում տրվում էր դատարանին: Օրենքի համաձայն՝ դատարանը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դիմումի հիման վրա որոշում էր կայացնում բանկի վերակազմավորման և խնամակալության հաստատման վերաբերյալ: Բացի այդ, դատարանը հաստատում էր խնամակալության ծրագիրը: Այն պայմաններում, երբ բանկի պարտատերերի պահանջների առավել մեծ չափով բավարարումը պայմանավորված էր դատարանի հրատապ որոշմամբ, դատավարական ժամկետների ձգձգումը, դատարանի ծանրաբեռնվածությունը և մասնագիտացված դատարանի բացակայությունը թույլ չէին տալիս արդյունավետ իրականացնել սնանկության ընթացակարգը:

Այս տեսանկյունից ակնհայտ էր, որ անհրաժեշտություն է առաջացել իրականացնել համապատասխան օրենսդրական փոփոխություն-

ներ: 2001 թ. նոյեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունեց «Բանկերի սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Պետք է նշել, որ օրենքի հայեցակարգը լիովին տարբերվում է նախորդից: Այն համապատասխանեցված է միջազգային չափանիշներին:

Կցանկանայի հանրագումարել սնանկության մասին օրենսդրության ընդհանրական որոշ առանձնահատկությունները՝ համեմատելով Հայաստանի Հանրապետության գործող օրենքները և մոդելային օրենքի մի քանի դրույթներ.

1. Կարևոր հարցադրումներից մեկն այն է, թե ինչ մոտեցմամբ պետք է մշակել բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին օրենսդրությունը:

Գոյություն ունի բանկերի անվճարունակության ոլորտում օրենսդրության մշակման երկու մոտեցում՝

ա) անվճարունակ բանկերի վրա տարածվում է անվճարունակության մասին ընդհանուր օրենսդրությունը, անվճարունակ բանկերի վերաբերյալ հատուկ կանոնները սահմանվում են բանկերի անվճարունակության մասին օրենսդրությունում,

բ) բանկերի անվճարունակության վերաբերյալ կանոնները շարադրվում են բացառապես բանկերի անվճարունակության մասին օրենսդրությունում, անվճարունակության մասին ընդհանուր օրենսդրությունը բանկերի վրա չի տարածվում: Սողելային օրենքով մոտեցումներից որևէ մեկին նախապատվություն չի տրվում՝ պայմանով, որ օրենսդրության մեջ ներառված լինեն միջազգային լավագույն փորձի կարևոր դրույթները: Հայաստանի Հանրապետությունում, ինչպես վերը նշվեց, ընդունվել է 2-րդ մոտեցումը: «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ այդ օրենքով սահմանված սնանկության վարույթի պարտապան կարող է լինել ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության, համայնքի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, բանկի և վարկային կազմակերպության:

Բազմաթիվ երկրների՝ բանկերի անվճարունակության (սնանկության) վերաբերյալ օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե որքան է կարևորվում օրենսդրության մեջ այս ոլորտի առանձնացումը և ինքնուրույնության ապահովումը: Օրինակ՝ Բրազիլիայում բանկերի գործունեությունը կարգավորվում է հատուկ և առանձնացված օրենսդրությամբ, որն ընդգրկում է 1964 թ. դեկտեմբերի 31-ի թիվ 4595 օրենքը, Ազգային դրամավարկային խորհրդի դիրեկտիվները և որոշումները, Բրազիլիայի կենտրոնական բանկի կանոնակարգերը և ուղեցույցները: Այս օրենսդրության մեջ առանձնանում է ֆինանսական հաստատությունների (դրանց թվում Բրազիլիայում ընդգրկված են բանկերը և ֆինանսական համակարգի մյուս այլ մասնակիցները) անվճարունակության և սնանկության մասին օրենսդրությունը, որը ներա-

ռուն է օրենքներ և Բրազիլիայի կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերը [2, p.27]: Ավստրալիայում բանկերի անվճարունակության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ոչ թե անվճարունակության (սնանկության) մասին առանձին օրենքով, այլ Բանկային օրենքով (Banking Act 1959), որը միաժամանակ կարգավորում է վերահսկող մարմնի լիազորությունները, պրուդենցիալ վերահսկողությունը և բանկերի սնանկության կառավարման հետ կապված հարաբերությունները [2, p.28]: Կան երկրներ, որտեղ բանկերի սնանկության հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգվում են ընդհանուր սնանկության վերաբերյալ օրենքով՝ հաշվի առնելով բանկերի անվճարունակությանը բնորոշ բոլոր առանձնահատկությունները, որոնց մասին մենք խոսել ենք կամ հետագայում կներկայացնենք: Նման երկրների թվում կարելի է նշել Ամերիկայի Միացյալ Նահանգները, որտեղ բանկերի անվճարունակության ընթացակարգերը սահմանվում և կարգավորվում են Սնանկության օրենսգրքով (Bankruptcy Code): Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՄՆ-ում գործում է դեպոզիտների ապահովագրության համակարգը, բանկի սնանկության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են նաև դեպոզիտների ապահովագրության օրենքով (Federal Deposit Insurance Act) [2, p.259]:

2. Հաջորդ կարևոր հարցադրումն այն է, թե ինչպիսի որոշումներ պետք է ընդունի բանկային վերահսկող և կարգավորող մարմինը: Մոդելային օրենքի առաջարկն այն է, որ օրենքով հստակ պետք է բանկային վերահսկող և կարգավորման մարմնի կողմից որոշումների ընդունման հիմնավորման պահանջ և այդ որոշումների բողոքարկման հնարավորություն սահմանվեն: Միաժամանակ, մոդելային օրենքը սահմանում է, որ բանկային վերահսկող և կարգավորող մարմնի որոշումների բողոքարկման հետևանքով չպետք է կասեցվեն անվճարունակության հարուցման գործընթացները դատական քննության ժամանակահատվածում:

Որպես կանոն, բանկային գործունեության բնագավառում մեծ տեղ և դեր է հատկացվում բանկային վերահսկողություն իրականացնող մարմնին՝ վերջինիս տրամադրելով լայն իրավասություններ, որոնց միջոցով այդ կառույցը կարգավորում ու վերահսկում է բանկերին և բանկային գործունեությունը: Այս տեսանկյունից Հայաստանի Հանրապետության օրենքը համապատասխանում է մոդելային օրենքով նախատեսված դրույթին: Այսպես՝ «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ «բանկի անվճարունակությունը ճանաչվում է սույն հոդվածի 1-ին կետով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում՝ բացառապես Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ»:

3. Մեծ նշանակություն ունի անվճարունակության չափանիշների բնորոշումը: Միջազգային պրակտիկայում բանկի նկատմամբ վարչա-

կան միջոցառումների<sup>1</sup> իրականացման համար որպես հիմք նշվում են իրացվելիության մասով անվճարունակությունը, հաշվեկշռային անվճարունակությունը և նորմատիվային անվճարունակությունը [3, c. 16]<sup>2</sup>: Անվճարունակության (սնանկության) մասին ընդհանուր օրենսդրության մեջ, որպես կանոն, նախատեսվում է երկու պայման կամ դեպք անվճարունակության գործընթաց հարուցելու համար: Դրանք են՝

ա) իրացվելիության մասով անվճարունակությունը, երբ անձն ի վիճակի չէ կատարել իր պարտավորությունները դրանցով նախատեսված ժամկետներում, և

բ) հաշվեկշռային անվճարունակությունը, երբ անձի ակտիվների արժեքը բավարար չէ նրա կողմից ստանձնած պարտավորությունները կատարելու համար:

Հայաստանի Հանրապետության օրենքը նախատեսում է բանկի անվճարունակության հետևյալ օբյեկտիվ չափանիշները՝

ա) բանկը սպառել է իր հիմնական կապիտալի 50 կամ ավելի տոկոսը.

բ) բանկն ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները.

գ) բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի սահմանած ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից.

դ) բանկը պարբերաբար խախտում է պարտադիր պահուստավորման տնտեսական նորմատիվը:

Ռուսաստանի Ղաշնության օրենսդրության համաձայն՝ վարկային կազմակերպության անվճարունակության (սնանկության) տակ նկատի է առնվում արբիտրաժային դատարանի կողմից հաստատված՝ բանկի անկարողությունը՝ բավարարելու դրամական պարտավորություններով պարտատերերի պահանջները և (կամ) կատարել պարտադիր վճարումների գծով պարտականությունը [1, c. 23]: Նշենք, որ մոդելային օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում է, որ քանի դեռ հակառակը ապացուցված չէ, բանկը համարվում է անվճարունակ, եթե նրա կողմից դադարեցվել են բոլոր կամ զգալի մաս կազմող պարտատերերին վճարումները, ինչպես նաև, եթե զույթի (ակտիվների) արժեքը բավարար չէ բանկի կողմից իր պարտատերերի առջև ստանձնած պարտավորութ-

<sup>1</sup> Վարչական միջոցառումների տակ պետք է հասկանալ բոլոր այն միջոցառումները, որոնք կիրառվում են բանկային վերահսկողության և կարգավորման մարմնի կողմից անվճարունակ բանկի նկատմամբ՝ տվյալ բանկի կողմից իր առողջացմանն ուղղված ներբանկային միջոցառումները, ժամանակավոր ադմինիստրացիայի նշանակումը, բանկի սնանկացման ընթացակարգը:

<sup>2</sup> Հոդվածում հիշատակվող այս փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից տրամադրվել է ՀՀ կենտրոնական բանկին՝ վերջինիս փորձագիտական եզրակացությունը ստանալու ակնկալիքով: Այս փաստաթղթի հիման վրա ԱՊՀ երկրների խորհրդարանական վեհաժողովի տնտեսության և ֆինանսների հանձնաժողովի 2005 թ. հոկտեմբերի 5-7-ի արտագնա նիստում ՀՀ կենտրոնական բանկը ներկայացրել է մասնագիտական ելույթ:

յունների կատարման համար: Բանկի գույքի (ակտիվների) գնահատման ժամանակ պետք է հիմք ընդունել բանկի կողմից իր գործունեությունը շարունակելու հեռանկարները, պայմանով, որ այդ գործունեության համար չկան էական խոչընդոտներ: Բանկին իր իսկ դիմումի հիման վրա սնանկ ճանաչելու համար հիմք կարող է հանդիսանալ նաև անվճարունակության վտանգը, այսինքն՝ այնպիսի վիճակը, որի պարագայում ենթադրվում է, որ բանկը չի կարող կատարել իր դրամական պարտավորությունները և (կամ) պարտադիր վճարումների գծով պարտականությունները՝ վճարումների կատարման ժամկետը վրա հասնելու դեպքում:

Ինչպես տեսնում ենք, մոդելային օրենքում նույնպես առկա է սուբյեկտիվ տարր: Չհամաձայնելով մոդելային օրենքով նախատեսված անվճարունակության սահմանման հետ՝ կարծում ենք, որ պետք է բանկի համար սահմանել թե՛ հաշվեկշռային, թե՛ նորմատիվային անվճարունակության չափորոշիչներ: Շատ երկրների բանկերի անվճարունակության (սնանկության) մասին օրենքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անվճարունակության չափանիշների կամ չափորոշիչների ի հայտ գալու դեպքում կիրառվող հետևանքները կրում են կամ դիսպոզիտիվ, կամ իմպերատիվ բնույթ: Այսինքն՝ բանկային կարգավորման և վերահսկողության մարմինը կամ իրավունք ունի սկսել համապատասխան ընթացակարգ՝ այդ հիմքերը ի հայտ գալու դեպքում, կամ պարտավոր է սկսել համապատասխան ընթացակարգը: Կան նաև երկրներ, որտեղ կիրառվում է այս երկու մոտեցումների համակցությունը: Եթե ընդունում ենք «պարտավոր է» սկզբունքը, ապա դրանով փոքրանում է հավանականությունը, որ բանկային վերահսկողության մարմինը կիրառվի միջոցառումներ ձեռնարկել անվճարունակ բանկի նկատմամբ կամ այլ պետական մարմիններ անհիմն կմիջամտեն վերահսկող մարմնի գործունեությանը և վերջինիս նկատմամբ ճնշում կգործադրեն: Հասարակության մեջ էլ կլինի վստահություն, որ անվճարունակ բանկի նկատմամբ ժամանակին ու պարտադիր կերպով կկիրառվեն անհրաժեշտ միջոցները: Մյուս կողմից, դիսպոզիտիվ մոտեցում կիրառելու դեպքերում մեծանում է բանկային վերահսկողության մարմնի կողմից ճկուն որոշումներ կայացնելու հնարավորությունը: Յուրաքանչյուր դեպքում, ելնելով տվյալ բանկի ֆինանսական վիճակի առանձնահատկություններից, վերահսկողը կձեռնարկի առավել ընդունելի և ճիշտ քայլեր: Այս մոտեցումը նույնպես արդարացված է, որովհետև որևէ այլ մարմին չի կարող ունենալ բավարար փորձագիտական ունակություններ՝ բնորոշելու՝ տվյալ բանկն անվճարունակ է, թե՞ վճարունակ: «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվում է, որ անվճարունակության հիմքերից որևէ մեկը բացահայտելու դեպքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը երկշաբաթյա ժամկետում նշանակում է ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավար կամ բանկի սնանկության վերա-

բերյալ դիմում ներկայացնում դատարան: Հայաստանի Հանրապետության օրենքի այս դրույթը վերախմբագրվել է: Մասնավորապես՝ իմպերատիվ սկզբունքը փոխարինվել է դիսպոզիտիվ սկզբունքով: Այսպես, ««Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 27.04.04 թ. ՅՕ-64-Ն օրենքով սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը երկշաբաթյա ժամկետում կարող է նշանակել ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավար կամ բանկի սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնել դատարան:

Միջազգային փորձագետները մոդելային օրենքի վերլուծության ժամանակ առաջարկել են մոդելային օրենքով սահմանել տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ կիրառել չափորոշիչներ, որոնք ընդգրկում են պարտադիր (իմպերատիվ) և դիսպոզիտիվ (դիսկրեցիոն) մոդելները միաժամանակ [3, c. 20]: Համաձայնելով այս փորձագետների հետ՝ մեր կողմից առաջարկվում է տարբերակված մոտեցումը ներդնել մաս «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Օրենքով թե՛ նորմատիվային, թե՛ հաշվեկշռային չափորոշիչների սահմանումն ունի մեծ նշանակություն: Նորմատիվային անվճարունակությունն իր էությանը ունի այնպիսի բովանդակություն, որը թույլ է տալիս բանկը ճանաչել «նորմատիվային անվճարունակ» ավելի վաղ, քան դեռ բանկում ի հայտ կգան հաշվեկշռային կամ իրացվելության անվճարունակության հատկանիշները: Տվյալ հանգամանքներում նախատեսված նորմատիվ միջոցները պետք է համամասնական լինեն կապիտալի համարժեքության նորմատիվի անհամապատասխանության մակարդակին, որի հիման վրա վերահսկողության մարմինը կիրառում է անհրաժեշտ օրենսդրական ընթացակարգեր:<sup>3</sup> Մեր կողմից առաջարկվում է օրենքով սահմանել հետևյալ չափորոշիչները, որոնք ներառում են պարտադիր և դիսպոզիտիվ մոդելները՝

- չափորոշիչներ, որոնք թույլ են տալիս բացահայտել բանկի ֆինանսական կամ այլ դժվարությունների վաղ հատկանիշները («հնարավոր անվճարունակության չափորոշիչներ»): Մասն չափորոշիչների ի հայտ գալու պարագայում Հայաստանի Հանրապետության կենտրոն-

<sup>3</sup> Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի՝ բանկերի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվներն են՝ ա) ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը. բ) հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը: Այս նորմատիվների հաշվարկման կարգը և սահմանաչափերը սահմանված են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 20.09.04 թ. թիվ 237 Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ով :



նական բանկը պետք է իրավունք ունենա կիրառել օրենքով նախատեսված ընթացակարգերը սեփական նախաձեռնությամբ.

• չափորոշիչներ, որոնք թույլ են տալիս որոշել բանկի կապիտալի կրիտիկական սահմանագիծը («Ակնհայտ նորմատիվային անվճարունակության չափորոշիչներ»): Ընդհանուր չափորոշիչների ի հայտ գալու պարագայում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը պետք է պարտավոր լինի կիրառել օրենքով նախատեսված ընթացակարգերը:

4. Բանկերի սնանկության մասին օրենսդրության հաջորդ կարևոր առանձնահատկությունն այն է, որ բանկի նկատմամբ անվճարունակության և սնանկության վարույթ հարուցելու բացառիկ իրավասությունը պետք է պատկանի բանկային կարգավորման և վերահսկողության մարմնին: Մոդելային օրենքով սահմանվում է, որ այդ իրավունքը բացառապես բանկային կարգավորման և վերահսկողության մարմնինն է: Հայաստանի Հանրապետության օրենքը լայն իրավասությամբ է օժտել Կենտրոնական բանկին: Ինչպես վերը արդեն նշվեց, օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ բանկն անվճարունակ ճանաչելու բացառիկ իրավունքը վերապահված է Կենտրոնական բանկին: Բանկի անվճարունակության հիմքերից որևէ մեկը բացահայտելու դեպքում Կենտրոնական բանկն ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

ա) նշանակում է ժամանակավոր ադմինիստրացիա,

բ) բանկը սնանկ ճանաչելու հայցադիմում է ներկայացնում դատարան:

Մշտապես բանավեճի առարկա է եղել այն հարցը, թե արդյոք բանկի պարտատերերն իրավունք չպետք է ունենան դիմել դատարան՝ բանկն անվճարունակ կամ սնանկ ճանաչելու հայցադիմումով: Ինչու՞՞ բանկի պարտատերերին իրավունք չի վերապահվում դիմել դատարան կամ դիմում ներկայացնել բանկային վերահսկողություն իրականացնող մարմնին՝ տվյալ բանկն անվճարունակ ճանաչելու համար: Հայաստանի Հանրապետության օրենսդրության այս դրույթը ոչ բոլոր երկրներում է, որ կիրառվում է: Կան երկրներ, որտեղ պարտատերերին տրվում են որոշակի լիազորություններ՝ անվճարունակության (սնանկության) գործընթաց հարուցելու համար: Անդրադառնալով այն հարցին, թե ինչպիսի դրույթներ են կարևոր բանկերի անվճարունակության գործընթացի համար, Համաշխարհային բանկի իրավախորհրդատու Հենրի Շիֆմանը գրում է, որ վերլուծության կարիք ունի այն հարցը, թե երբ և որ դեպքերում բանկի պարտատերերն իրավունք ունեն նախաձեռնել բանկի սնանկության գործընթաց, և երբ պետք է այդ իրավասությունը վերապահվի բանկային վերահսկողություն իրականացնող մարմնին: Եթե բանկի որոշ պարտատերեր ներկայացնեն վաղ և անհիմն միջնորդություններ, դրա հետևանքով բանկի վրա «փորձանք կգա»: Ցանկացած բանկի համար մեծ դժվարություն է մեծ ծավալով դեպոզիտներ ներգրավելը: Անհիմն միջնորդության պատճառով բանկից տեղի կունենա դեպոզիտների արտահոսք, ինչն անգամ առողջ բանկի համար կառաջացնի ֆինանսական դժվարություններ [5, p. 87]:

Նման ռիսկի գոյությունն է, որ շատ օրենքներ, այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետության օրենքը, նախատեսում են, որ անվճարունակության վարույթ հարուցելու իրավասությունը պատկանում է բանկային վերահսկողության մարմնին: Նման օրինակներ են նաև Գերմանիայի բանկային օրենքը, Լյուքսեմբուրգի 1993 թվականի օրենքը, Ավստրիայի բանկային օրենքը [6, p. 26, 52, 64]: Մյուս կողմից, եթե սնանկության գործընթացը պարտադիր պետք է սկսվի, քանի որ հակառակ դեպքում բանկը և ավանդատուները կորուստներ կկրեն, իսկ բանկային վերահսկողության մարմինը գործողություններ չի ձեռնարկում, ապա միգուցե այս դեպքերում բանկի պարտատերերը կարող են հարուցել բանկի սնանկության գործընթաց: Մոդելային օրենքի նախագծի քննարկումների ժամանակ մասնագետները միանշանակ պնդում էին, որ մոդելային օրենքով պետք է նախատեսվի, որ անվճարունակության ընթացակարգը բանկի նկատմամբ պետք է հարուցի բանկային վերահսկողության մարմինը: Կամ եթե թույլատրվում են որոշ այլ դեպքեր՝ ապա այդ պետք է լինի բանկային վերահսկողության մարմնի համաձայնությունը: Ընդ որում, բանկային վերահսկողության մարմինն իրավունք ունի չտալու իր համաձայնությունը, եթե դա պայմանավորված է բանկային համակարգի ամբողջականության պահպանմամբ, և առաջատար բանկային կամ վարկային կազմակերպությունները կհաստատեն, որ իրենք բացառության կարգով տվյալ բանկին կտրամադրեն ֆինանսական օժանդակություն [3, c. 20]:

Հաշվի առնելով այս մոտեցումները, ինչպես նաև Հայաստանում ձևավորված պրակտիկան՝ «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նախատեսել է, որ բանկի անվճարունակության և սնանկության ընթացակարգերի հարուցման իրավունքը պատկանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին: Այս փուլում պարտատերերը կամ բանկն ինքը լիազորություններ չունեն: Բանկի սնանկության (լուծարման) փուլում բանկի պարտատերերն իրավունք ունեն դիմել Կենտրոնական բանկ՝ օրենքով սահմանված կարգով բանկի սնանկության մասին դիմումը դատարան ներկայացնելու միջնորդությամբ: Կենտրոնական բանկը միջնորդությունը քննարկում և երկշաբաթյա ժամկետում որոշում է կայացնում այն բավարարելու կամ մերժելու մասին: Կենտրոնական բանկի որոշումը պարտատիրոջ միջնորդությունը մերժելու մասին կարող է բողոքարկել միջնորդությունը ներկայացրած պարտատերը՝ Կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ տասնօրյա ժամկետում: Բողոքի քննության ժամանակ դատարանն առաջարկում է Կենտրոնական բանկին՝ ներկայացնել օրենքով նախատեսված սնանկության հիմքերի բացակայության մասին եզրակացություն կամ բանկի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման պատճենը: Կենտրոնական բանկը դատարանի առաջարկն ստանալուց հետո, 10-օրյա ժամկետում, պարտավոր է նշված փաս-

տաթղթերն ուղարկել դատարան: Կենտրոնական բանկի՝ բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման պատճենի ներկայացումը դատարան հիմք է սնանկության գործի վարույթն սկսելու համար («Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2-րդ, 25-26-րդ հոդվածներ):

Այսպիսով, մոդելային օրենքը բազմակողմանիորեն քննարկվել է, և այս օրենքը նախագծողները փորձել են ամփոփել ու ի մի բերել բանկերի սնանկության ոլորտի միջազգային լավագույն փորձը: Քանի որ այն մշակվել է ԱՊՀ երկրների համար, միաժամանակ հաշվի են առնվել նաև մեր երկրների տնտեսական և իրավական համակարգերի առանձնահատկությունները: Սողելային օրենքի դրույթների հիման վրա, կարծում եմ, որ պետք է որոշակի փոփոխություններ նախաձեռնվեն նաև «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Г.А. Тосунян, А.Ю. Видулин**, „Несостоятельность (банкротство) кредитных организаций“, Москва, изд. „Дело“, 2002г..

2. **Mario Giovanoli ang Gregor Heinrich**, „International Bank Insolvencies, A Central Bank Perspective“, Kluwer Law International, Hague-London-Boston, Volume 12, 2004.

3. Gowling Lafleur Henderson LLP, „Аналитический доклад по проекту подготовки модельного закона о ликвидации и реструктуризации несостоятельных банков для Межпарламентской Ассамблеи Содружества Независимых Государств“, 2004г. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փաստաթղթային բազա, 16.09.2005 թ. N 10804:

4. «ԱՊՀ երկրների բանկերի սնանկության մասին» մոդելային օրենք:

5. **Henry N. Schiffman**, „Legal Measures to Manage Bank Insolvency in Economies in Transition“, Butterworths Journal of International Banking and Financial Law-Special Supplement, March 1999, page 87.

6. German Banking Act, KWG, s.46b, Luxembourg Law of 5 April 1993 regarding the Financial Sector, art.61(1), Austrian Banking Act, BWG, «82(4).

7. «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունված 2001 թ. նոյեմբերի 6-ին, ՅՕ-262 (27.04.04թ. ՅՕ-64-Ն օրենքով կատարված լրացումներով և փոփոխություններով):

8. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունված 2006 թ. դեկտեմբերի 25-ին, ՅՕ-51-Ն:

**PIRUZ SARGSYAN**

*General Counsel of the Central Bank  
of the Republic of Armenia,  
Applicant of the Chair Law  
of the PAA of the RA*

**COMPARATIVE ANALYSIS OF LEGISLATION ON BANCROPTCY OF  
BANKS OF THE REPUBLIC OF ARMENIA AND CIS MODEL LAW  
“ON BANCROPTCY OF BANKS”**

The legislation on bankruptcy of banks is a very important part of a banking law and a separate part of general bankruptcy legislation. In the article the author discusses the key issues of the legislation on bankruptcy of banks, international trends in development of this legislation. Also, this article provides helpful information about CIS Model law “On Bankruptcy of Banks”. The comparative analysis of Armenian Law “On bankruptcy of banks and credit organizations” and CIS Model law “On Bankruptcy of Banks” provides a general comparative overview of the purpose and content of this laws. Major attention has been paid to grounds of insolvency, international experience and its application to Armenian law.

**ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ՀՀ գլխավոր դատախազության  
գիտաուսումնական կենտրոնի ղեկավարի տեղակալ,  
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ  
ԲՆՈՒՅԹԻ ԵՎ ԴՐԱ ՏԵՍԱԿԻՐԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Պետական ծառայությունը, հանդիսանալով յուրաքանչյուր պետության, ինչպես նաև պետական մարմնի համակարգում իրականացվող գործունեության տեսակ, իրականացվել և անխուսափելիորեն պետք է իրականացվի պատմական ժամանակահատվածներում և իրավիճակներում՝ անկախ հասարակական հարաբերությունների զարգացման մակարդակից, հասարակական տնտեսական հասարակարգի տեսակից, այդ թվում նաև քաղաքական ուժերի հարաբերակցությունից ու փոփոխությունից:

Պետական ծառայությանն առնչվող հիմնահարցերը նախ և առաջ դիտարկվում են ընդհանրապես հասարակության ու պետության և մասնավորապես՝ պետական իշխանության, պետական կառավարման և հանրային ծառայության բազմակողմանի վերլուծության համատեքստում, քանզի, ինչպես նշում է Վ.Մ.Մանոխինը, պետական ծառայության հասկացությունը, հիմնական գծերը, խնդիրներն ու գործառույթները կարելի է բնորոշել միայն պետական ծառայության և պետական գործունեության խնդիրների, գործառույթների ու ձևերի փոխադարձ կապն ու փոխկախվածությունը բացահայտելով [1, էջ 128]: Հետևաբար, կախված նրանից, թե որ առումով ենք բնորոշում պետությունը, դրանից էլ ածանցվում է պետական ծառայության ըմբռնումը: Մասնավորապես, եթե պետությունը բնորոշվում է իբրև միայն ինքնիշխան քաղաքական ինստիտուտ, ապա պետական ծառայությունն էլ քաղաքական գործունեության մասն է, իսկ եթե պետությունը դիտարկվում է որպես հասարակության կյանքի կազմակերպման համընդհանուր միջոց, ապա պետական ծառայությունը հանդիսանում է հասարակության ու պետության խնդիրների իրականացումն ապահովող մասնագիտական գործունեություն: Ի վերջո, պետական ծառայության ուղղվածությունն ածանցված է տվյալ պետության կառուցվածքից, կառավարման ձևից, պետաիրավական ռեժիմից և այլն:

Ընդհանրապես «ծառայություն» հասկացությունը բազմիմաստ է, այն կարելի է բնորոշել նեղ կամ լայն առումներով: Մասնավորապես, մի կողմից «ծառայություն» հասկացության տակ՝ կախված վերջինիս

բնույթից, ուղղվածությունից ու սահմաններից, կարելի է հասկանալ գործունեության հատուկ տեսակ (օրինակ՝ ծառայություն պետությանը, կազմակերպությանը, մարմնին և այլն), մյուս կողմից՝ որպես կազմակերպական միավոր (օրինակ՝ հարկային ծառայություն, անվտանգության ծառայություն և այլն), իսկ առանձին դեպքերում իբրև համակարգ, որը բաղկացած է իշխանության իրականացման նորմերից, ինստիտուտներից, չափորոշիչներից, կառույցներից, գործընթացներից և այլն:

Տվյալ դեպքում մենք հակված ենք «պետական ծառայություն» հասկացությունը դիտարկել իբրև բոլոր պետական մարմինների կազմում իրականացվող վարչական գործունեության հատուկ տեսակի՝ պետակառավարչական, մասնագիտական գործունեության իմաստով, որոնց համակցությունը կազմում է միասնական համակարգ, այսինքն՝ պետական ծառայությունը դիտարկել բառիս ներ իմաստով:

Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մասին միասնական օրենքի բացակայության պայմաններում «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը (ընդունված 04.12.2002թ.) Հայաստանի Հանրապետության առաջին և առաջին միակ իրավական ակտն է, որտեղ ընդհանուր գծերով առաջին անգամ իրավական կարգավորման են ենթարկվել Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության հասկացության, դրա հետ կապված առանձին գործընթացների, այդ թվում՝ պետական ծառայությանը բնորոշ հիմնական իրավական սկզբունքների հետ կապված հարցերը:

Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության՝ Ռուսաստանի Դաշնությունում 2003 թվականից սկսած գործում է «Պետական ծառայության համակարգի մասին» ՌԴ օրենքը (ընդունված 25.04.2003թ.), որը ընդհանուր առմամբ պետական ծառայությունը բնորոշել են իբրև պետական մարմինների լիազորությունների իրականացումն ապահովող պրոֆեսիոնալ գործունեություն:

Ստեղծված իրավական վակուումը հրամայական պահանջ է առաջացնում Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մասին միասնական օրենքի ընդունման վերաբերյալ, որով հնարավոր կլինի լիարժեք կարգավորել պետական ծառայության կազմակերպման ու գործունեության, այդ թվում՝ ծառայությունը կրելու կարգի ու պայմանների հետ կապված հարաբերությունները:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը: Պետական ծառայության հասկացությունն անմիջականորեն բխում է նույն օրենքում տրված հանրային ծառայության հասկացությունից, որը բնորոշված է իբրև պետությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացում:

Ասվածից հետևում է, որ պետական ծառայությունը միայն պետական մարմինների համակարգում իրականացվող մասնագիտական

գործունեություն է, այսինքն՝ հիմնարկ-ձեռնարկություններում, կազմակերպություններում իրականացվող գործունեությունը, ինչքան էլ վերջիններս ունենան պետական կարգավիճակ, պետական ծառայություն համարվել չի կարող: Սրանով է թերևս պայմանավորված պետական ծառայության անքակտելի կապը ընդհանրապես պետության և մասնավորապես դրա առանձին ինստիտուտների ու կառույցների հետ:

Յուրաքանչյուր պետությունում և առավել ևս Հայաստանի Հանրապետության նման հասարակական հարաբերությունների զարգացման անցումային փուլ ապրող պետությունում պետական ծառայության էության, նպատակների, խնդիրների, ինչպես նաև հանրային ծառայությունում դրա գրաված տեղի և դերակատարման հետ կապված հարցերն անհնարին է քննարկել առանց դրա հիմքում ընկած գաղափարական գործոնների վերլուծության, որոնք պայմանավորելով միասնական պետական ծառայության ներդրման ու կայացման անհրաժեշտությունը, պետք է արտացոլվեն ղեկավար և կանոնակարգող հիմնադրույթներում՝ հիմնական սկզբունքներում:

Ասվածն առաջին հերթին բխում է ընդհանրապես «սկզբունք» հավաքական հասկացության էությունից:

Սկզբունքը (լատիներեն «principium») առաջնայինն է, հիմքը, որն իբրև տեսական հասկացություն, արտահայտում է պետական կառավարման համակարգի առանձին տարրերի օրինաչափությունները, հարաբերությունները, փոխադարձ կապը: Դրանք յուրահատուկ հասկացություններ են, որոնք բովանդակում են ոչ այնքան հիշյալ օրինաչափությունները, հարաբերությունները, փոխադարձ կապը, որքան՝ մեր գիտելիքները դրանց մասին [2, էջ 186]:

Սկզբունքը կենտրոնական հասկացություն է, ղեկավար գաղափար, համակարգի հիմքը, որը ամփոփում և տարածում է տվյալ բնագավառի այս կամ այն իրավիճակը ամբողջ իրականության վրա [3]:

Իրավունքի սկզբունքներ ասելով հասկացվում են այն հիմնադրութային գաղափարները, ղեկավար սկզբնաղբյուրները, որոնք բնութագրում են համապատասխան ոլորտի հասարակական հարաբերությունները կարգավորող որոշակի իրավական նորմերի միասնականությունն ու զարգացման միտումները [4]:

Ընդհանրապես, իրավական ցանկացած ոլորտի կազմակերպման և գործունեության սկզբունքներն որոշվում են իրավական դրույթների սոցիալական բովանդակությունը և փաստական իրավական գործունեությունը: Սկզբունքները, որպես ելակետային դրույթների, հետևում են ավելի մասնավոր, մանրամասնեցված իրավական դրույթներն ու նորմերը [5]:

Վ.Ս.Սանդիսինը, օրինակ, պետական ծառայության սկզբունքների տակ հասկանում է այն պահանջները, որոնք. 1. պարտադիր են պետական ծառայության հետ կապված բոլոր անձանց և կազմակերպությունների համար, 2. տարածվում են պետական ծառայության բոլոր տեսակների վրա և հանդիսանում են համընդհանուր պետական ծա-

ռայության շրջանակներում, 3. ընդգրկում են բոլոր կազմակերպական, իրավական և մյուս կողմերը, որոնցից բխում է պետական ծառայության բովանդակությունը [6, էջ 200]:

Պետական ծառայության հիմնական սկզբունքները միշտ առաջնային ու վճռորոշ են, իսկ տվյալ հասարակական հարաբերությունները կարգավորող մյուս նորմերը, ինստիտուտները, ենթաինստիտուտները հանդիսանում են սկզբունքների իրականացման իրավական **երաշխիքներ**, որոնք սահմանում և կանոնակարգում են սկզբունքներով պայմանավորված պետական ծառայության կազմակերպման և գործունեության, այդ թվում նաև ծառայությունը կրելու կարգի ու պայմանների հետ կապված գործընթացները: Երաշխիքները, ածանցված լինելով սկզբունքներից, անմիջականորեն բխում են նրանցից և ի կատարումն են սկզբունքների պահանջների: Դրանց միջև հակասություն առաջանալու դեպքում առաջնայությունը տրվում է սկզբունքին: Երաշխիքներն այն պայմաններն ու միջոցներն են, որոնք ապահովում են սկզբունքների իրագործումը:

Պետական ծառայության սկզբունքները հանդիսանում են գիտական կատեգորիաներ, որոնք արտահայտում են ոչ միայն պետական ծառայության կազմակերպման և գործունեության առավել էական կողմերը, այլ նաև՝ այդ համակարգի ներսում առկա բարդ փոխհարաբերությունների բովանդակությունը [7, էջ 400]: Փաստորեն, պետական ծառայության սկզբունքներն այն սկզբնաղբյուրներն են, տեսական գաղափարները, որոնց վրա կառուցվում է ողջ պետական ծառայության համակարգը և ղեկավարվում դրանցով:

Ընդգծելով պետական ծառայության հասկացության և դրա հիմնական սկզբունքների անքակտելի կապը, ինչպես նաև վերջիններիս բնորոշ հատկանիշները՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պետական ծառայությունն այնպիսի հանրորեն օգտակար գործունեության տեսակ է, որն ունի հանրային բնույթ, իրենից ներկայացնում է միասնական ինստիտուտ, որը համալրված է տվյալ պետության պրոֆեսիոնալ պատրաստված քաղաքացիներից և կոչված է ծառայելու ամբողջությամբ վերցրած պետությանն ու հասարակությանը և ոչ թե առանձին կոլեկտիվներին, միավորումներին կամ անձանց [8, էջ 275]: Բացի այդ, պետական ծառայության սկզբունքները կազմում են պետական ծառայության կազմակերպման սկզբնաղբյուրները, որոնք պետք է հաշվի առնվեն պետական ծառայության մասին իրավական ակտերի ընդունման, փոփոխման և լրացման ժամանակ [9]: Այլ կերպ ասած, դրանք այն ելակետային հիմնադրույթներն են, որոնք հիմնարար դերակատարում և նշանակություն ունեն պետական ծառայության բոլոր տեսակներում ծառայության կազմակերպման ու գործունեության համար: Այդ պատճառով, պետական ծառայության միասնական համակարգին բնորոշ են միայն այն ելակետային հիմնադրույթները, որոնք ընդգրկում են պետական ծառայության կազմակերպման ու գործունեության առավել էական կողմերը և ընդհանրական են պետական ծառայության համա-



կարգում ընդգրկված ծառայության բոլոր տեսակների համար, կամ այլ խոսքով ասած՝ **հիմնական** սկզբունքները:

Բացի այդ, օրենսդիրը չտալով պետական ծառայության սկզբունքների բնորոշումը, այնուհանդերձ, կարևորելով դրանց դերակատարումն ու նշանակությունը, դրանք նախատեսել է պետական ծառայության համակարգում ընդգրկված ծառայության առանձին տեսակների առանձնահատկությունները կարգավորող օրենքներում: Հետևաբար, կարելի է խոսել պետական ծառայության հատկապես **իրավական** սկզբունքների մասին [1 էջ 198]: Հիշյալ սկզբունքների իրավական ամրագրման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ պետական իշխանության բոլոր մարմինները պարտավոր են կյանքի կոչել դրանք, իսկ պետական ծառայողները պարտավոր են ղեկավարվել դրանցով իրենց աշխատանքում [3]: Կարծում ենք, որ պետական ծառայության սկզբունքների իրավական բնույթն առավել ցայտուն կընդգծվի, եթե դրանք իրավական կարգավորման ենթարկվեն պետական ծառայության մասին միասնական օրենքով:

Այսպիսով, պետական ծառայության սկզբունքներն այն հիմնական և իրավական նախապայմաններն են, որոնց բացահայտման և հետագայում համապատասխան միասնական իրավական կարգավորման անհրաժեշտությունն առաջին հերթին պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում միասնական պետական ծառայության համակարգի ներդրման ու կայացման հրամայական պահանջով, քանզի սկզբունքներն այն հռչակումներն են, որոնք ունեն ընդհանրական բնույթ և կանխորոշում են պետական ծառայությունում ընդգրկված ծառայության բոլոր տեսակներում ծառայության կազմակերպմանն ու զործունեությանը բնորոշ հիմնական պահանջների (չափանիշների) միասնականության ապահովումը: Այստեղից հետևում է, որ պետական ծառայության հիմնական իրավական սկզբունքները պետք է լինեն միասնական և ընդհանրական ամբողջ պետական ծառայության և դրանում ընդգրկված ծառայության առանձին տեսակների համար, իսկ դրանց իրականացման երաշխիքները՝ պետական ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջների միասնականությունը պահպանելով, իրականացման կառուցակարգերի առումով՝ կարող են ունենալ նաև առանձնահատկություններ:

Խնդրի կարևորությունը կայանում է նաև նրանում, որ Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության հետ կապված առանձնահատկությունները կարգավորող օրենքներում՝ ինչպես պետական ծառայողներին ներկայացվող մնացած հիմնական պահանջների, այնպես էլ սկզբունքների հարցում, դրսևորված են տարաբնույթ մոտեցումներ: Մասնավորապես, նշված օրենքների մի մասում ծառայության տվյալ տեսակը բնութագրող հիմնական սկզբունքներն ուղղակիորեն սահմանված են (օրինակ՝ «Քաղաքացիական ծառայության մասին» (ընդունված 04.12.2001թ.), «Զինվորական ծառայության անցնելու մասին» (ընդունված 03.07.2002թ.), «Հարկային ծառայության մասին»

(ընդունված 03.07.2002թ.), «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» (ընդունված 04.12.2002թ.), «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» (ընդունված 11.04.2003թ.) ՀՀ օրենքներում), իսկ մյուսներում՝ ոչ, ինչը վկայում է հիմնական սկզբունքների նախատեսման հարցում պետական ծառայության հետ կապված առանձնահատկությունները կարգովորող հիշյալ օրենքների միջև միասնականության և ըստ այդմ՝ ՀՀ-ում պետական ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջների միասնականության բացակայության մասին: Ընդ որում, վերը նշված առաջին խումբ օրենսդրական ակտերով նախատեսված սկզբունքներն իրենց հերթին տարբերվում են միմյանցից: Դրանցից միայն «Քաղաքացիական ծառայության մասին» և «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքներով են նախատեսված միասնական պետական ծառայությանը բնորոշ հիմնական իրավական սկզբունքները, իսկ մնացածներում խոսքը գնում է պետական ծառայության տվյալ տեսակի կազմակերպման և իրականացման առանձնահատկությունները բնութագրող հիմնադրույթների մասին:

Պետական ծառայության հիմնական իրավական սկզբունքների օրենսդրական միասնական ամրագրման հրատապությունը պայմանավորված է ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում միասնական պետական ծառայության համակարգի ներդրման ու կայացման անհրաժեշտությամբ, այլ նաև այն պարզ պատճառով, որ տվյալ դեպքում սկզբունքները կանխորոշում և ուղղորդում են պետական ծառայության զարգացման միտումները: Այլ կերպ ասած, սկզբունքները՝ որպես հայեցակարգային հիմնադրույթներ, միաժամանակ կանխորոշում են պետական միասնական կադրային քաղաքականության հիմնական ուղղությունները և իրենց հերթին ներազդում են այդ քաղաքականության մշակման և իրականացման վրա, քանզի հենց ինքը պետական կադրային քաղաքականությունը՝ համապատասխան սկզբունքների, կանոնների և նորմաների ամբողջություն է, որոնցով ղեկավարվում է պետությունը կադրերի հավաքագրման, պրոֆեսիոնալ զարգացման և ռացիոնալ օգտագործման բնագավառում [10]:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ պետական ծառայության հիմնական իրավական սկզբունքների նախատեսումը, միասնականացումն ու կանոնակարգումն առաջին հերթին նշանակություն ունի պետական ծառայությունը բնութագրելու և հանրային ծառայության համակարգում դրա դերակատարումը հստակեցնելու առումով: Ի վերջո, ինստիտուցիոնալ առումով պետական ծառայությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ պետությանն օրենսդրությամբ վերապահված խնդիրների ու գործառույթների իրականացմանն ուղղված մասնագիտական գործունեությունը բնութագրող էլակետային հիմնադրույթների՝ սկզբունքների և դրանց իրականացման երաշխիքների համակցություն:

Պետական ծառայության սկզբունքներում իրենց արտացոլումն են գտել առաջին հերթին պետության և դրա իշխանական կառույցների կազմակերպման հիմնական սկզբունքները, որոնք ամրագրված են Սահմանադրությամբ կամ բխում են դրանից, և դրա հետ մեկտեղ՝ օրենքում ամրագրված են այն սկզբունքները, որոնք բնորոշ են միայն պետական ծառայությանը [9]: Այլ կերպ ասած, պետական ծառայության հիմնական իրավական սկզբունքներն ինչպես ամբողջ հանրային ծառայությունը կանխորոշող, այնպես էլ՝ դրա առանցքը կազմող՝ պետական ծառայության կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները կանխորոշող հիմնադրույթներ են:

Տվյալ դեպքում մեզ ավելի շատ հետաքրքրում են հենց պետական ծառայության կազմակերպման ու գործունեության, այդ թվում նաև ծառայությունը կրելու կարգն ու պայմանները կանխորոշող հիմնական իրավական սկզբունքները, քանզի հենց դրանցում արտացոլված գաղափարական գործոնների իրականացմամբ են պայմանավորված պետական ծառայության ներդրման ու կայացման հեռանկարները:

Կարծում ենք, որ պետական ծառայության հիմնական իրավական սկզբունքները սահմանելիս պետք է ղեկավարվել և հնարավորինս միմյանց հետ համատեղել երկու հիմնական մոտեցում՝ 1. պետական ծառայության սկզբունքներն առաջին հերթին պետք է սկզբնաղբյուր հանդիսանան ողջ պետական ծառայության համակարգի, դրանում ընդգրկված ծառայության առանձին տեսակներում ծառայության կազմակերպման և գործունեության (այդ թվում՝ ծառայությունը կրելու կարգի ու պայմանների) հետ կապված հասարակական հարաբերությունների կարգավորման համար՝ կանխորոշելով ծառայության բոլոր տեսակներին հատուկ միասնական և ընդհանրական հիմնական հատկանիշները (պահանջները, չափանիշները), 2. մյուս կողմից՝ սկզբունքները պետք է իրենց մեջ արտացոլեն պետական ծառայության մասին եղած պատկերացումները, դրա էությունը, գաղափարախոսությունը, ներկա և հեռանկարային զարգացումներն այն հաշվով, որ պետական ծառայությունը քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ, կայուն և անփոփոխելի պրոֆեսիոնալ (մասնագիտական) գործունեություն է, որն իրականացվում է միայն պետական մարմիններում, և այն էլ պետական մարմինների աշխատակազմերում և ուղղված է այդ պետական մարմիններին օրենսդրությամբ վերապահված լիազորությունների (այդ թվում՝ խնդիրների ու գործառնությունների) իրականացման ապահովմանը: Ի դեպ, Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության միասնական օրենքի բացակայության պայմաններում, հստակ իրավական կարգավորման ենթարկված չեն նաև վերոհիշյալ մի շարք հասկացությունները, մասնավորապես տրված չէ «պետական մարմնի», «պետական պաշտոնի» հասկացությունները: Կարծում ենք, որ հիշյալ և դրանց հետ կապված մնացած հիմնարար հասկացությունները կարելի է բնորոշել և դրանց սահման-

ներն ընդօժել «Պետական ծառայության մասին» ՀՀ միասնական օրենքով:

Դրա հետ մեկտեղ, հակված ենք պաշտպանելու այն տեսակետը, որ պետական ծառայության մասին միասնական օրենքում պետական ծառայության կազմակերպման և ղեկավարման հիմնական իրավական սկզբունքները պետք է սահմանվեն ըստ բնույթի դասակարգված տեսքով, ինչը կարող է ունենալ ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Մինչդեռ, ինչպես արդեն նշեցինք, պետական ծառայության հետ կապված առանձնահատկությունները կարգավորող օրենսդրական ակտերում (նրանցում, որոնցում սկզբունքներ սահմանված են) պետական ծառայության տվյալ տեսակը բնութագրող սկզբունքներն ուղղակի սահմանված են, այսինքն՝ որևէ չափանիշով դասակարգված չեն: Ընդհանրապես, պետական ծառայության սկզբունքները կարելի է դասակարգել մի շարք հիմքերից ելնելով: Տվյալ դեպքում, հակված ենք դասակարգումը կատարել ըստ բնույթի, այսինքն՝ հիմք ընդունելով դրանք բնութագրող առանձնահատկությունները: Այս տեսակետից, կարծում ենք, որ պետական ծառայության մասին միասնական օրենքում պետական ծառայության հիմնական իրավական սկզբունքներն առաջին հերթին պետք է սահմանվեն դասակարգված ըստ բնույթի՝ պետական ծառայությանը բնորոշ համաիրավական և դրանց հետ հարաբերակցված պետական ծառայության միասնական համակարգին բնորոշ հիմնական իրավական հատուկ սկզբունքների խմբերով:

Պետական ծառայության սկզբունքների հիշյալ դասակարգումը հնարավորություն է տալիս բացահայտելու պետության ընդհանրական և հատուկ (մասնավոր) մոտեցումները պետական ծառայության կազմակերպման ու գործունեության գործընթացներին, ինչպես նաև այս հարցում կանխորոշել պետական միասնական կադրային քաղաքականության ուղղվածությունը: Բացի այդ, նման տարանջատումը բխում է նաև պետական ծառայությունը որպես մասնագիտական գործունեություն՝ լայն և նեղ իմաստներով հասկանալու անհրաժեշտությունից: Առաջին դեպքում այն դիտարկվում է իբրև պետական մտային ընդհանրական գործունեություն, իսկ երկրորդ դեպքում՝ պետական կառավարչական մասնագիտական հատուկ ուղղվածություն ունեցող գործունեություն:

Պետական ծառայությանը բնորոշ համաիրավական սկզբունքներն (այսուհետ՝ համաիրավական սկզբունքներ) այն ելակետային հիմնադրույթներն են, որոնք ընդհանրական բնույթ ունեն իրավական ամբողջ համակարգի ու պետական գործունեության բոլոր ոլորտների, այդ թվում նաև ամբողջ հանրային ծառայության համար: Դրանք հիմնականում համընդհանուր ճանաչում գտած նախապայմաններ են և վերաբերում են պետական ծառայության կազմակերպման ու գործունեության ընդհանրական կողմերին: Պետական ծառայության միասնական համակարգին բնորոշ հիմնական իրավական հատուկ սկզբունքներն (այ-

սուհետ՝ հատուկ սկզբունքներ) այն ելակետային հիմնադրույթներն են, որոնք ունենալով մասնագիտական ուղղվածություն վերաբերում են կոնկրետ պետական ծառայության կազմակերպման ու գործունեության, այդ թվում՝ ծառայությունը կրելու կարգի ու պայմանների առանձնահատուկ կողմերին: Ընդ որում, համաիրավական սկզբունքները չեն կարող լինել սպառիչ, քանի որ դրանք համընդհանուր նշանակություն և դերակատարում ունեցող հիմնադրույթներ են, մինչդեռ, հատուկ սկզբունքները, կարծում ենք, պետք է լինեն սպառիչ, քանի որ դրանք զուտ պետական ծառայության էությունը, նպատակները, խնդիրներն ու սահմաններն ընդգծող և պետական ծառայությունը ընդգծող, ինչպես նաև գործունեության այլ տեսակներից խիստ տարբերակող սկզբնաղբյուրներ են և բացի այդ, խոսքը վերաբերում է նմանատիպ հիմնական սկզբունքների մասին: Այսպես՝

Պետական ծառայության մասին միասնական օրենքի շրջանակներում իրավական կարգավորման ենթակա համաիրավական սկզբունքներ կարելի է համարել.

1) Սահմանադրության և օրենքների գերակայությունը, որում ամփոփվում է նաև Սահմանադրության և օրենքների ճշտգրիտ ու միատեսակ կատարման պահանջով պայմանավորված օրինականության,

2) մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների առաջնահերթության,

3) պետական ծառայության հրապարակայնության սկզբունքները և այլն:

Մինչդեռ, հատուկ սկզբունքներ կարելի է համարել.

1) պետական ծառայության համակարգի միասնականության,

2) պետական ծառայողների պրոֆեսիոնալիզմի,

3) պետական ծառայության կայունության,

4) պետական ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջների միասնականության և օրենքի առջև պետական ծառայողների իրավահավասարության,

5) պետական ծառայության պաշտոնների դասակարգվածության (ըստ պաշտոնների խմբերի (ենթախմբերի) և դրանց համապատասխանող դասային աստիճանների),

6) պետական ծառայողների քաղաքական զսպվածության,

7) քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից պետական ծառայության անկախության,

8) ստորադասների համար վերադաս պետական պաշտոնատար անձանց՝ օրենքով սահմանված կարգով և իրենց իրավասությունների սահմաններում ընդունված որոշումների պարտադիր լինելու,

9) իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան քաղաքացիների համար պետական ծառայության հավասար մատչելիության,

10) պետական ծառայողների աստիճանակարգված (անմիջական) ենթակայության,

11) պետական ծառայողների աստիճանական ծառայողական առաջխաղացման,

12) պետական ծառայողների իրավական և սոցիալական պաշտպանվածության,

13) իրենց ծառայողական պարտականությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու, վերազանցելու կամ աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու համար պետական ծառայողների պատասխանատվության,

14) պետական ծառայողների գործունեության վերահսկելիության և հաշվետու լինելու սկզբունքները,

15) համարժեք իրավունքների դիմաց համարժեք պարտականությունների սահմանման:

Պետական ծառայության հիմնական իրավական սկզբունքների վերոհիշյալ դասակարգումն ամենևին էլ չի նշանակում, որ դրանք գործում են անջատ և մեկը մյուսից անկախ, ընդհակառակն, առավել հաճախ, սկզբունքները լրացնում են միմյանց և նույնիսկ շատ դեպքերում օրենսդրական այս կամ այն ինստիտուտը կամ նորմը հանդես են գալիս որպես մի քանի սկզբունքների իրականացման իրավական երաշխիքներ:

Վերը նշված սկզբունքներից մի քանիսը նախատեսված են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, որը, ինչպես նշվեց վերևում, ներկայումս գործող միակ համապարփակ իրավական ակտն է՝ ինչպես պետական ծառայության էությունն ու համակարգը պատկերացնելու, այնպես էլ պետական ծառայողների հիմնական իրավական սկզբունքները սահմանելու տեսակետից: Մինչդեռ, Ռուսաստանի Դաշնությունում, օրինակ, նշված հարաբերությունները կարգավորված են հատկապես այդ նպատակով ընդունված ընդհանրական իրավական ակտով՝ «Պետական ծառայության համակարգի մասին» ՌԴ օրենքով, որն առավել համապարփակ, համակարգված և հիմնավոր է կարգավորել պետական ծառայության հիմնական իրավական սկզբունքների հարցը:

Կարծում ենք, Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության հիմնական իրավական սկզբունքների և դրանց իրականացման երաշխիքների սահմանումը և միասնական համապարփակ իրավական կարգավորումը դարձել է հրամայական պահանջ, որը հնարավորություն կտա այս բնագավառում խուսափել հակասություններից, անհամամասնություններից ու տարաբնույթ մեկնաբանություններից: Առավել ևս, որ նման պահանջն ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրությունից, որի 30.2-րդ հոդվածի համաձայն հանրային ծառայության սկզբունքները և կազմակերպման կարգը սահմանվում է օրենքով: Հենց նշված դրույթի համատեքստում կարելի է նաև դիտարկել պետական ծառայության մասին միասնական օրենքի ընդունման վերաբերյալ ներկայացված վերոհիշյալ հիմնավորումները:

Իրենց հերթին, հատուկ սկզբունքները, ըստ պետական ծառայողների վրա ունեցած ազդեցության, կարելի է դասակարգել միմյանց հակակշռող և միաժամանակ լրացնող ենթախմբերի: Եվ քանի որ պետական ծառայության հիմնական իրավական սկզբունքները մեծամասամբ պետական ծառայողներին ներկայացվող ընդհանրական պահանջներ են, ուստի դրանցից առաջինում կարելի է ընդգրկել՝ պետական ծառայողներին ակտիվ գործելակերպի հնարավորություններ, արտոնություններ և իրավունքներ (ազատություններ) տվող, նրանց իրավահավասարությունն ապահովող, իսկ մյուսում՝ ընդհակառակն, նրանց համար պարտականություններ (պատասխանատվություններ), զսպողական կառուցակարգեր սահմանող սկզբունքները:

Այս տեսակետից, կարծում ենք, որ վերը թվարկած հատուկ սկզբունքներից արտոնություններ, իրավունքներ (իրավահավասարություն, ակտիվ գործելակերպի հնարավորություններ) սահմանող սկզբունքների ենթախմբում կարելի է ընդգրկվել հատուկ սկզբունքների խմբում ընդգրկված՝ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 15-րդ կետերում նշված սկզբունքները, իսկ պետական ծառայողների համար պարտականություններ (պատասխանատվություններ, զսպողական կառուցակարգեր) սահմանող սկզբունքների ենթախմբում՝ 2-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ կետերում նշվածները:

*Կարծում ենք, որ հատուկ սկզբունքների հիշյալ չափանիշներով դասակարգման տեսական ու գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ դրանով պետական ծառայության սկզբունքների իրավական կարգավորումը հնարավորություն կտա սկզբունքների և դրանց իրականացումն ապահովող երաշխիքների հարցում սահմանել հավասարակշռություն, այն հաշվով, որ պետական ծառայողներին ներկայացվող պահանջները, սահմանափակումներն ու պարտականությունները հնարավորինս համապատասխանեն դրանց վերապահված իրավունքների, հնարավորությունների և արտոնությունների մակարդակին: Պատահական չէ, որ նպատակահարմար վերևում հատուկ սկզբունքների ցանկը եզրափակված է՝ համարժեք իրավունքների դիմաց համարժեք պարտականությունների սահմանման սկզբունքով:*

Պետական ծառայության բնականոն և մնայուն կայացումը պահանջում է նմանատիպ հավասարակշռման համատեքստում դիտարկել ինչպես պետական ծառայության սկզբունքների, այնպես էլ դրանց իրականացման իրավական երաշխիքների հարաբերակցությունը, ինչն առավել ակնհայտորեն կդրսևորվի պետական ծառայության հիմնական իրավական սկզբունքները վերոհիշյալ դասակարգմամբ իրավական կարգավորման ենթարկելու դեպքում: Այլ կերպ ասած, հատուկ սկզբունքների նման ենթախմբային դասակարգումը և նշված ենթախմբերում ընդգրկված սկզբունքների միմյանց հետ համադրումը հնարավորություն կտա հավասարակշռություն (հաշվեկշռվածություն) սահմանել նաև ծառայության կազմակերպման և գործունեության, այդ թվում՝ ծառայությունը կրելու կարգն ու պայմանները սահմանող ու կա-

նոնակարգող դրույթների՝ երաշխիքների հարցում, քանի որ նշված հավասարակշռվածությունը գործնականում պետք է դրսևորվի հենց պետական ծառայության առանձին գործընթացների և դրանց իրականացումն ապահովող ու կանոնակարգող իրավական նորմերում և ինստիտուտներում: Այդ պատճառով, հավասարակշռված հավաստումը կախված է ոչ թե այս կամ այն ենթախմբում ընդգրկված սկզբունքների քանակից, այլ դրանց բովանդակությունից և առավել ևս դրանց իրականացումն ապահովող իրավական երաշխիքների հավասարակշռումից:

*Կարծում ենք, այս առումով, գործող օրենսդրությունում տիրում է լիակատար անհավասարակշռվածություն: Մասնավորապես, պետական ծառայության առանձին տեսակներում ծառայության առանձնահատկությունները կարգավորող մի շարք օրենքներով սահմանափակումներ են ներկայացված պետական ծառայողներին՝ կապված այլ վճարովի աշխատանք կատարելու, անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, առևտրական կազմակերպությունների կանոնադրական կապիտալում համապատասխան տոկոս բաժնեմաս չունենալու վերաբերյալ, և դա այն դեպքում, երբ պետության կողմից համապատասխան մակարդակով չեն ապահովվել պետական ծառայողի սոցիալական պաշտպանվածության (այդ թվում նաև վարձրատրության հետ կապված), կենսաթոշակային ապահովության հիմնախնդիրները: Ծիշտ է, նման սահմանափակումները վերցված են քաղաքակիրթ երկրների օրեսդրական փորձից և հանդիսանում են պետական ծառայության հիմնարար սկզբունքներից մեկի՝ պրոֆեսիոնալիզմի իրականացումն ապահովող, պետական ծառայողին անկաշկանդ և անկողմնակալ մասնագիտական գործունեության ուղղորդելու յուրահատուկ իրավական երաշխիքներ, այնուհանդերձ, կարծում ենք, որ դրանք գործնականում կիրառելի կհամարվեն միայն այն դեպքում, եթե իրենց հերթին ապահովված լինեն նյութական (ֆինանսական) համապատասխան իրավական կառուցակարգերով, այսինքն՝ բխեն գործնականում տիրող իրավիճակից և տեղայնացվեն: Հակառակ դեպքում, դրանք մնալով զուտ տեսական, հռչակագրային իրավական դրույթներ, այդպես էլ չեն գործի և հետևաբար՝ գործնական նշանակություն ունենալ չեն կարող: Բացի այդ, նման իրավիճակները զգալի անհավասարակշռություն են ստեղծում իրավունքներ (արտոնություններ) և պարտականություններ (սահմանափակումներ) սահմանող սկզբունքների ու դրանց իրականացման երաշխիքների «հաշվեկշռում», որն էլ իր հերթին խոչընդոտ է հանդիսանում պետական ծառայության միասնական համակարգի բնականոն կայացման համար:*

*Բերված օրինակում, կարծում ենք, որ մասնավորապես, ժամանակավորեպ է այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակման հարցը նման ձևակերպմամբ իրավական կարգավորման ենթարկելը: Ընդ որում, նույն հարցի կապակցությամբ «Պետական քաղաքացիական ծառայության մասին» ՌԴ օրենքն, օրինակ, ավելի առաջ անցնելով, քաղաքացիական ծառայողի կողմից այլ վճարովի աշխատանք*



չկատարելու արգելքը նախատեսել է միայն որոշակի աշխատանքային գործունեության տեսակների և որոշակի պաշտոններ զբաղեցնելու համար: Մասնավորապես, նույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, քաղաքացիական ծառայություն անցնելու կապակցությամբ քաղաքացիական ծառայողին արգելվում է վճարովի հիմունքներով մասնակցել առևտրային կազմակերպության կառավարման մարմնի գործունեությանը, բացառությամբ՝ դաշնային օրենքով նախատեսված դեպքերի: Բացի այդ, նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, արգելվում է քաղաքացիական ծառայության պաշտոնը համատեղել պետական պաշտոնում նշանակվելու կամ ընտրվելու, տեղական ինքնակառավարման մարմնի ընտրովի պաշտոնում ընտրվելու, արհմիության մարմնում, այդ թվում՝ պետական մարմնում ստեղծված սկզբնական արհմիութենական կազմակերպության ընտրովի մարմնում ընտրովի վարժատրվող պաշտոնում ընտրվելու դեպքերում: Այնուհանդերձ, կարծում ենք, որ խնդրին նման կարգով լուծում տալն այնքան էլ արդարացված չէ, քանզի նշված ցանկից դուրս պաշտոնների զբաղեցումն ու աշխատանքների կատարումը նույնպես կարող է խաթարել պրոֆեսիոնալիզմի սկզբունքի կենսագործմանը: Այս առումով կարծում ենք, որ արդարացի և ժամանակի պահաջներով պայմանավորված կլիներ հարցը հետևյալ իրավական ձևակերպմամբ ներկայացնելը. «պետական ծառայողն իրավունք չունի՝ ծառայողական պարտականությունները կատարելիս այլ վճարովի աշխատանք կատարել»:

Հիմնախնդիրների լուծման նման մոտեցումը հնարավորություն կտա ապահովել պետական ծառայության համահունչ՝ աստիճանական (էվոլյուցիոն), համահունչ և հավասարակշռված (հաշվեկշռված) զարգացումը, որը Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության բնականոն և հեռանկարային կայացման միակ պայմանն է:

Կամ, օրինակ, եթե 02.05.2006թ. ընդունված օրենքով «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների ու լրացումների արդյունքում քաղաքացիական ծառայողին շնորհված առավել բարձր դասային աստիճանի իջեցումը այսուհետ համարվում է կարգապահական տույժի տեսակ, ապա հարց է ծագում, թե ինչու նույն տրամաբանությամբ դասային աստիճանի արտահերթ բարձրացումը չի կարող համարվել խրախուսման միջոցի տեսակ, որի առկայության պայմաններում միայն կարելի էր հասնել վերը հիշատակված հավասարակշռությանն ու դրանից բխող ամբողջ պետական ծառայության համակարգի ներդաշնակ զարգացման ապահովմանը: Նման օրինակները կարելի է շարունակել:

Այսպիսով, պետական ծառայության հիմնական իրավական սկզբունքների, ինչպես նաև դրանք դասակարգված տեսքով իրավական կարգավորման ենթարկելու վերաբերյալ կատարված վերոհիշյալ դատողությունները թույլ են տալիս կանխորոշել դրանց տեսակիրա-

***ռական նշանակությունը, որը հանգում է հետևյալին.***

1. Պետական ծառայության հիմնական իրավական սկզբունքները պետական ծառայության կազմակերպման և գործունեության սկզբնաղբյուրներ և ղեկավար հիմնադրույթներ են հանդիսանում պետական ծառայության համակարգում ներառված և իրավական կարգավորման ենթարկված կազմակերպման ու գործունեության հետ կապված բոլոր գործընթացների համար, որոնք իրենց հերթին հանդես են գալիս այդ սկզբունքների իրականացման ամիջական իրավական երաշխիքներ: Միաժամանակ, սկզբունքները պետք է բխեն պետական ծառայության էությունից, բնորոշումից, դրսևորման շրջանակներից, ինչպես նաև դրանց իրականացման ընթացքում ծագած հարաբերությունների առանձնահատկություններից:

2. Պետական ծառայության հիմնական իրավական սկզբունքներն անհրաժեշտ է սպառիչ կերպով սահմանել և միասնական իրավական կարգավորման ենթարկել «Պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության միասնական օրենքի շրջանակներում: Նշված օրենքով սահմանված սկզբունքները պետք է միասնական և ընդհանրական լինեն պետական ծառայության համակարգում ընդգրկված ծառայության բոլոր տեսակների համար, որն իր հերթին Հայաստանի Հանրապետությունում միասնական պետական ծառայության համակարգի և այդ ոլորտում պետական միասնական կադրային քաղաքականության մշակման և իրականացման նախապայմանն է:

3. Պետական ծառայության մասին միասնական օրենքում պետական ծառայության հիմնական իրավական սկզբունքները նպատակահարմար է սահմանել ըստ բնույթի դասակարգված տեսքով՝ պետական ծառայությանը բնորոշ համահրավական և դրանց հետ հարաբերակցված պետական ծառայության միասնական համակարգին բնորոշ հիմնական իրավական հատուկ սկզբունքների խմբերով: Ընդ որում, եթե առաջին խմբում ընդգրկված սկզբունքները սպառիչ չեն կարող լինել, ապա երկրորդում ընդգրկվածները՝ կարող են լինել: Նույն օրենքում հատուկ սկզբունքներն իրենց հերթին կարելի է դասակարգել ըստ պետական ծառայողների վրա ունեցած ազդեցության՝ մի կողմից՝ պետական ծառայողներին ակտիվ գործելակերպի հնարավորություններ, արտոնություններ և իրավունքներ (ազատություններ) տվող, նրանց իրավահավասարությունն ապահովող, իսկ մյուս կողմից՝ ընդհակառակն, նրանց համար պարտականություններ (պատասխանատվություններ), զսպողական կառուցակարգեր սահմանող սկզբունքների, քանզի դրանց, ինչպես նաև դրանց իրականացումն ապահովող իրավական երաշխիքների միջև հավասարակշռության (հաշվեկշռման) հասնելով հնարավոր կլինի ապահովել պետական ծառայության բնականոն և համահունչ կայացումն ու զարգացումը:

4. Չնայած պետական ծառայության հիմնական իրավական սկզբունքների դասակարգման և համակարգված տեսքով իրավական կարգավորման ենթարկելու անհրաժեշտությանը, այնուհանդերձ,

դրանք խիստ փոխկապակցված են միմյանց հետ, լրացնում են միմյանց և ենթադրում մեկը մյուսի անխուսափելի առկայությունը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Стариков Ю.Н.**, Службное право, изд. «Бек», Москва 1996 г., с. 198.
2. **Атаманчук Г.В.**, Теория государственного управления, курс лекции, изд. «Юридическая литература», Москва 1997г., с. 186.
3. **Окуньков Л.**, Комментарий к федеральному закону «Об основах государственной службы Российской Федерации» и законодательству о государственной службе зарубежных стран. комментарий к статье 5 // СПС «Гарант».
4. Административное право: «Краткий курс», авторский коллектив, изд. «Питер», Москва 2005. с. 15.
5. Հայաստանի Հանրապետության դատախազությունը, ի.գ.դ., պրոֆեսոր **Գ.Ս. Ղազինյանի** խմբագրությամբ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան 2004թ., էջ 82:
6. **Стариков Ю.Н.**, Службное право, изд-во «Бек», Москва 1996 г., с. 200:
7. **Стариков Ю.Н.**, Административное право: ч. 2 Книга первая: Субъекты органы управления государственная служба., изд. Воронежского гос. университета, Воронеж 2001 г., с. 400.
8. **Чиркин В.**, Государственное управление: элементарный курс, изд. «Юристь», Москва 2003, с.275.
9. Комментарий к федеральному закону «Об основах государственной службы Российской Федерации» и законодательству о государственной службе зарубежных стран. Авторский коллектив, комментарий к статье 5 // СПС «Консультант Плюс».
10. **Է. Օրդյան, Յ. Սանուկյան**, «Պետական կադրային քաղաքականության հայեցակարգի մշակումը որպես գերակա խնդիր», Պետական կադրային քաղաքականության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «Պետական ծառայություն» հրատ., Երևան 2002թ.:

**ARTAK HARUTYUNIAN**

*Deputy Director of the Chief Prosecutory  
Scientific Educational Centre of RA,  
Applicant of the PAA of the RA*

**THE CLASSIFICATION OF THE MAIN JURIDICAL PRINCIPLES OF  
THE PUBLIC SERVICE OF THE REPUBLIC OF ARMENIA  
ACCORDING TO ITS ESSENCE AND VIEW-APPLICABLE MEANING**

The main Juridical principles of the Public Service being in mutual connection with each other, coming out of the essence of the Public Service, its peculiarities and the circles of its performance, origin are management policies and preconditions for all the procedures connected with arrangement and scope included into the Public Service and subjected to the Juridical regulation.

Hence out of this the main Juridical principles of the Public Service must be exhaustive defined and subjected to unanimous Juridical regulation in the circles of the General Law, which makes necessary the adoption of the uniform law “about the Public Service” of the Republic of Armenia.

The principles of the mentioned law are rational to classify according to the essence into General and Specific groups typical to the Public Service universal juridical and connected with them typical to the unanimous system of the Public Service the main groups of the Juridical specific principles, from which those of the Specific group in their turn according to the influence over state employees can be performed as balancing each other and at the same time complementing subdivisions, on one hand giving active working opportunities, privileges and rights to state employees, to secure their Juridical equality, on the other hand, just the opposite, responsibilities (amenabilities) for them, principles establishing restrictive constructive disciplines which will give an opportunity for the principles, also to guarantee the natural and harmonious establishment formation and development of the Public Service by establishing balance between juridical guarantees securing their realization.

**ԳՈՒՐԳԵՆ ԱՖՐԻԿՅԱՆ**

*ՀՀ ՊԿ ակադեմիայի իրավագիտության  
ամբիոնի ասպիրանտ*

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՍԱՐՄԻՆ**

Դատական իշխանությունը հաճախ անվանում են «երրորդ իշխանություն», որովհետև սահմանադրական ուսմունքում իշխանության բաժանման համակարգ կազմող իշխանության ճյուղերի թվարկման ժամանակ այն սովորաբար հետևում է օրենսդիր և գործադիր իշխանություններին: Ընդ որում, կառավարման ձևից կախված, օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխկախվածությունը կարող է լինել մեծ (կառավարման խորհրդարանային ձև) կամ փոքր (նախագահական հանրապետություն), իսկ դատական իշխանությունը նշված կառավարման ձևերից ցանկացածի դեպքում նույնքան սահմանազատված է իշխանության այդ ճյուղերից: Այս հանգամանքը, իհարկե, չի բացառում իշխանության այլ ճյուղերի հետ փոխկապակցվածությունը: Դատական իշխանության գործունեության հիմնական ուղղություններից է իրավաբանական նշանակության վեճերի քննությունը: Դատական իշխանությունը, ի տարբերություն օրենսդրական և գործադիր իշխանությունների, բնորոշվում է ապակենտրոնացմամբ. այն իրականացվում է տարբեր ատյանների դատարանների համակարգի միջոցով: Տվյալ պետության բոլոր դատարանների ամբողջությունը կոչվում է դատական համակարգ, իսկ այդ դատարանների կողմից քննվող հարցերի ամբողջությունը՝ իրավասություն: Դատարանների գործունեությունը՝ այսինքն իրավական վեճերի լուծման նպատակով իրենց իրավասության իրականացումը, կոչվում է արդարադատություն:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի՝ ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: ՀՀ-ում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանը և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ, որոնք երբևէ չեն կազմավորվել Հայաստանի Հանրապետությունում: Փոխարենը նախատեսվում է լուծարել ներկայումս գործող տնտեսական դատարանը: Բացի սահմանադրական արդարադատության հարցերից, ՀՀ բարձրագույն դատական ատյան է հանդիսանում վճռաբեկ դատարանը, որի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով (ՀՀ Սահմանադրություն, հոդ.92): Իսկ սահմանադրական արդարադատությունը ՀՀ-ում իրականացվում է Սահմանադրական դատարանի կողմից (ՀՀ Սահմանադրություն, հոդ.93):

Սահմանադրական իրավունքի տեսության մեջ զարգացել և այժմ էլ շարունակվում է սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմնի՝ Սահմանադրական դատարանի արդարադատության իրականացման համար և իշխանության բաժանման համակարգում, դերի մասին քննարկումը: Սույն խնդրի կարևորության մասին վկայում է այն, որ որոշ երկրներում Սահմանադրական դատարանի դերի ճշգրտման հարցը դարձել է դատական քննարկման առարկա: Օրինակ՝ 1995թ. գարնանը Չեխիայում Սահմանադրական դատարանը, քննարկելով այս հարցը, սահմանել է, որ Սահմանադրական դատարանը չի հանդիսանում դատական համակարգի մարմին և գտնվում է նրանից դուրս [1, c. 65]:

Սահմանադրական վերահսկողության մարմինների իրավաբանական բնույթի մասին միանշանակ պատասխան չեն տալիս նաև այլ երկրների սահմանադրական կարգավորումները: Սահմանադրությունների մեկ խմբում սույն մարմնի վերաբերյալ դրույթները ներառված են դատական իշխանության կամ արդարադատության մասին գլխի մեջ: Ընդ որում, դրանցից մի մասի մեջ նշվում է, որ սահմանադրական վերահսկողության մարմինը ներառվում է դատական համակարգի մեջ (Ռեբեկստան, Ղըրղզստան և այլն) կամ սահմանադրական դատավարությունը համարվում է դատական իշխանության իրականացման ձև (Ռուսաստանի Դաշնություն), իսկ մյուս մասի մեջ՝ կամ այդ մասին չի խոսվում (Գերմանիա, Թուրքիա և այլն) կամ դատական իշխանության մասին գլխում հատկացվում է հատուկ ենթաբաժին (Ավստրիա): Սահմանադրությունների մյուս խմբում սահմանադրական վերահսկողության մարմնի վերաբերյալ դրույթներին հատկացվում է առանձին գլուխ, ինչը նպատակ ունի ընդգծել այդ մարմինների հատուկ դերը պետական իշխանության համակարգում (Իտալիա, Իսպանիա, Լեհաստան, Ռեկրաինա, Մոլդովա, Ղազախստան և այլն):

Ընդհանուր առմամբ, կարելի է տարբերել երկու հիմնական մոտեցում. սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինը գտնվում է դատական իշխանությունից դուրս կամ հանդիսանում է նրա մի մասը:

Առաջին մոտեցման շրջանակներում տարբեր տեսակետներ են արտահայտվում: Այդ տեսակետներից մեկի կողմնակիցների՝ Վ.Ե.Չիրկինի և Յու.Լ.Շուլցենկոյի պնդմամբ սահմանադրական վերահսկողությունը՝ իշխանության հատուկ վերահսկման ճյուղ է [2], [3, c. 301-316]: Իսկ ֆրանսիացի սահմանադրական իրավունքի մասնագետ Լ.Ֆավորոն գտնում է, որ «Այսօր կելզենյան մոդելը կիրառած երկրների մեծ մասն ընդունում է, որ սահմանադրական արդարադատությունը գտնվում է երեք իշխանություններից դուրս՝ ապահովելով նրանց կողմից իրենց լիազորությունների պահպանումը»:

Մենք լիովին ընդունում ենք իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ.Գ.Չարությունյանի տեսակետը, համաձայն որի սահմանադրական վերահսկողության, որպես իշխանության առանձին ճյուղի՝

վերահսկման իշխանության առանձնացումը ծայրահեղություն է [1, c. 65]: Մենք գտնում ենք, որ այս դեպքում չորրորդ իշխանության (կամ կիսաիշխանության) մասին հարցադրումն արհեստական է: Բանն այն է, որ հատուկ սահմանադրական վերահսկողության մարմինը, հաշվի առնելով իրավունքի իր մեկնաբանումների համապարտադրությունը, կարող է հանդես գալ միայն որպես դատական ատյան, քանզի ընդհանուր դատարաններն անկախ են և պետք է ենթարկվեն բացառապես իրավունքին կամ վերադաս դատարանի իրավունքի մեկնաբանումներին, բայց ոչ մի դեպքում՝ դատական համակարգից դուրս գտնվող այլ մարմնի: Եթե հատուկ վերահսկման (հսկողական) մարմինները պետության կառուցվածքում ինքնուրույն դեր են խաղում, նույնիսկ գտնվում են միևնույն շարքում խորհրդարանի, կառավարության մարմինների, ընդհանուր իրավասության դատարանների հետ, դա դեռ չի նշանակում իշխանության հատուկ «վերահսկման» ճյուղ:

Այն մոտեցման շրջանակներում, որ հատուկ սահմանադրական վերահսկողությունը հանդիսանում է դատական իշխանության մի մասը և չի կազմում իշխանության նոր ճյուղ, նույնպես գոյություն ունի դիրքորոշումների և տեսակետների բազմազանություն: Այստեղ վեճերն ընթանում են հիմնականում այն մասին, թե արդյոք սահմանադրական վերահսկողությունն ընդգրկում է արդարադատության ոլորտը, թե այն արդարադատության հետ մեկտեղ հանդիսանում է դատական իշխանության իրականացման ինքնուրույն ձև: Երկրորդ տեսակետը մանրամասն ներկայացված է Վ.Ա.Ռժևսկու և Ն.Մ.Չեպուրնովայի աշխատություններում [4], [5]: Այդ գիտնականների կարծիքով սխալ է դատական իշխանության իրականացումը կապել միայն այնպիսի պետական գործունեության հետ, ինչպիսին արդարադատությունն է: Դատական իշխանությունը, հանդիսանալով պետական իշխանության ինքնուրույն ճյուղ, իրականացվում է տարբեր պետաիրավական ձևերով: Բացի արդարադատությունից նրանց է վերաբերվում վերադաս դատարանների կողմից ստորադաս դատարանների հսկողությունը, դատական վերահսկողությունը պետական կառավարման բնագավառում և դատական սահմանադրական վերահսկողությունը: Ընդ որում, ինչպես գտնում են Վ.Ա.Ռժևսկին և Ն.Մ.Չեպուրնովան, սահմանադրական վերահսկողությունը չի նույնականանում արդարադատության իրականացման հետ: Իրենց ընդհանուր գծերով նրանք, այնուամենայնիվ, սկզբունքորեն դատական իշխանության իրականացման տարբեր և ինքնուրույն ձևեր են: Այստեղ, որպես արդարադատության և սահմանադրական վերահսկողության զանազանման և հարաբերակցության չափանիշ, դիտվում է դատաքննության առարկան և դրա ընթացքում կայացրած որոշումների բնույթը: Արդարադատության էությունը կապվում է տվյալ դեպքում կիրառվող իրավական նորմերի, սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների պաշտպանման և պահպանման հետ: Այլ կերպ ասած, այստեղ խոսքը գնում է արդարադատության մասին նեղ իմաստով, այսինքն, որպես որոշակի գործերի լուծման

միջոց: Ինչ վերաբերում է սահմանադրական վերահսկողությանը, ապա այն կապվում է օբյեկտիվ իրավունքի մասին գործերի հետ: Այսպիսով, դատական իշխանության իրականացման այս երկու ձևի տարբերակման հիմքում ընկած է դատական պաշտպանության անմիջական առարկան. դա կամ սուբյեկտիվ կամ օբյեկտիվ իրավունքն է: Համապատասխանաբար, արդարադատության իրավաբանական բնույթը բնութագրվում է որպես անհատական-կարգավորիչ (քանի որ քննարկման և դատական գնահատման առարկա է հանդիսանում սուբյեկտիվ իրավունքի մասին վեճը), իսկ սահմանադրական վերահսկողությունը՝ որպես նորմատիվ-պաշտպանական (քանի որ դատական որակավորման առարկա է հանդիսանում օբյեկտիվ իրավունքի մասին վեճը): Հենց այս փաստարկներն են օգտագործում իշխանության չորրորդ ճյուղի հասկացության կողմնակիցները՝ հատուկ սահմանադրական վերահսկողության, որպես իշխանության ինքնուրույն ոլորտի, հիմնավորման համար:

Հիմնավորված է հանդիսանում այն տեսակետը, որի կողմնակիցները, ելնելով արդարադատության լայն հասկացությունից, նրա մեջ ընդգրկում են նաև հատուկ սահմանադրական վերահսկողությունը: Ն.Նենովսկին, հաստատելով, որ հենց հատուկ սահմանադրական վերահսկողության մարմինն է իրականացնում սահմանադրական արդարադատությունը, նկատում է. «Սահմանադրական արդարադատություն» հասկացության դեմ առարկություններն այս դեպքում անհիմն են: Հարկ է հաղթահարել մտածողության մեջ այն միտումը, որը կապում է արդարադատության իրականացումը միայն ընդհանուր իրավասության դատարանների հետ: Սահմանադրական դատարանների տարածումը և գործունեությունը ընդլայնել են նաև արդարադատության հասկացությունը: Սահմանադրական արդարադատությունն իր առանձնահատկություններով արդարադատություն ընդհանուր խմբային հասկացության արդեն ընդունված տեսակն է» [6, շ. 97]: Առարկելով նեղ ավանդական հասկացության դեմ՝ որպես քաղաքացիական և քրեական գործերի քննման բացառիկ միջոց, Ա.Դ.Բոյկովն առաջարկում է արդարադատության լայն հասկացությունը, որում տեղ է հատկացվում նաև սահմանադրական վերահսկողությանը [7, շ. 103-104]: Ինչպես արդարադատությունը որոշակի գործերի լուծման հարցերում, այնպես էլ օբյեկտիվ իրավունքի վերաբերյալ գործերի լուծման հատուկ սահմանադրական վերահսկողություն, ունեն իրավակիրառական և համապատասխան իրավամեկնաբանական բնույթ: Մեր կարծիքով, հենց տվյալ հատկությունն է հանդիսանում էական հիմքն արդարադատության լայն հասկացության համար, որն իր մեջ ներառում է դատական իշխանության նորմատիվ դրսևորումը: Իրենց բոլոր արտաքին տարբերություններով արդարադատության իրականացման զանազան ձևերը, լինի դա որոշակի քրեական կամ քաղաքացիական գործի լուծում, բնակարանի խուզարկման թույլտվություն, որևէ նորմատիվ ակտի անվավեր ճանաչում կամ սահմանադրական վերահսկողության



հատուկ մարմնի կողմից օրենքի անվավեր ճանաչում դրա հակասահմանադրական լինելու պատճառով, ըստ էության, մնում են իրավակիրառական ոլորտում:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունը, որպես ամբողջական և ինքնուրույն համակարգ, գործում է 1996 թվականի փետրվարից՝ ՀՀ Սահմանադրական դատարանի կազմավորումից հետո:

Ներկայումս դատական սահմանադրական վերահսկողության ինստիտուտը հայտնի է զարգացած երկրներին և նախատեսված է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընդունված սահմանադրությունների մեծամասնությամբ, ավելին, այդ սահմանադրությունները հատուկ ուշադրություն են հատկացնում սահմանադրական արդարադատությանը: Յուրաքանչյուրում մանրամասն սահմանված է երկրում գործող Սահմանադրական դատարանի իրավասությունը, նրա կազմավորման կարգը, դատարանի անդամների քանակը և այլն: Սակայն, մեր կարծիքով, որոշակի հանգամանքների բերումով Սահմանադրական դատարանը չի կարող ծավալել լիարժեք գործունեություն: Ինչպես և բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրական դատարանին օրենքը իրավունք չի տալիս սկսել գործի քննարկումն առանց պատշաճ սուբյեկտի պահանջի: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր մարմին, որևէ որոշում ընդունելիս ավելի քան ուշադիր պետք է լինի իր որոշման դրույթների սահմանադրականության հարցում: Իսկ Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող յուրաքանչյուր սուբյեկտ պետք է իրականացնի սահմանադրությամբ ամրագրված իր իրավունքը որևէ հակասահմանադրականություն նկատելու դեպքում:

Որքանով որ սահմանադրական վերահսկողությունը գտնվում է օրինականության վերահսկման համակարգի կենտրոնում, այնքանով սահմանադրական արդարադատությունը գտնվում է սահմանադրական վերահսկողության մարմինների կենտրոնում: Պետության կողմից իր իրավական համակարգ սահմանադրական արդարադատության ներմուծումը ցույց է տալիս այն, որ պետությունը գերադասում է սահմանադրաիրավական հարցերի վերաբերյալ լուծումներ կայացնելու լիազորությունները տրամադրել սովորական դատարանների վերադաս մասնագիտացված հաստատություններին, քանզի այդպիսի հարցերի լուծումը կարող է սովորական դատարաններից ուժերից վեր լինել [8, c. 3]:

Դատական իշխանության առանձնահատկությունը «քաղաքական իշխանությունների» (օրենսդիր և գործադիր) համեմատությամբ, կայանում է իր համեմատական անփոփոխության և չեզոքության մեջ, և քանի որ Սահմանադրական դատարանը դատական իշխանության մի մասն է հանդիսանում, հենց նա էլ ստանձնել է սամանադրական արդարադատության իրականացման պատասխանատվությունը հանրապետությունում:

## ՓՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. **Գ.Գ. Արությունյան**, Конституционный суд в системе государственной власти// Сравнительный анализ. Ереван. 1999.

2. **Чиркин В.Е.**, Контрольная власть. Государство и право. М. 1993. № 4.

3. **Чиркин В.Е.**, Основы сравнительного государственного права. М. 1997.

4. **Ржевский В.А., Чепурнова Н.М.**, Судебная власть в Российской Федерации: конституционные основы организации и деятельности. М. 1998.

5. **Чепурнова Н.М.**, Судебный контроль в РФ: проблемы методологии, теории и государственно – правовой практики. Ростов-на-Дону. 1999.

6. **Неновски Н.**, Конституционный суд: природа, цели, легитимность. Российский конституционализм: проблемы и решения. М. 1999.

7. **Бойков А.Д.**, Третья власть в России. М. 1997.

8. **Штайнбергер Г.**, Модели конституционной юрисдикции. Издание Совета Европы. 1994.

9. **Գ.Գ. Հարությունյան**, Սահմանադրական վերահսկողություն. Համեմատական վերլուծություն. Երևան. 1997:

10. **Ն.Ն. Մանուկյան**, Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք. Երևան. 2005:

11. **Б.Н. Габричидзе, А.Г. Черняевский**, Конституционное право России. Москва. 2007.

12. **Н.В. Витрук**, Конституционное правосудие. М. 2005.

13. ԾԾ ԵՅ ՆՍՅ ԿՅ 1 հոկտեմբեր

**GURGEN AFRIKYAN**

*Post-graduate Student of the  
Public Administration Academy  
of the Republic of Armenia,*

**THE CONSTITUTIONAL COURT AS A TRIBUNAL  
WHICH CARRYES OUT THE CONSTITUTIONAL JUSTICE**

In the theory of Constitutional law developed and is currently going on discussion of the role of the constitutional supervision of the specialized body—constitutional court, for the realization of justice and in the system of power division. It is worthy to overcome the inertia in the thought that connects the administer Justice alone with the courts of general jurisdiction.

The peculiarities of the Juridical authority as compared with the “Political authority” (legislative and executive) is in its comparison and neutrality, as the Constitutional court is a part of juridical power, and it administer the responsibility of constitutional justice in the republic.

## ՏՆՈՒՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (Կառավարում)

**ԲԵՆԻԱՄԻՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

*ՀՀ ՖԷՆ ՏՀԻ փոխտնօրեն,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

**ԱՐԱ ԳՅՈՒՐՅԱՆ**

*ՀՀ Նախագահի աշխատակազմի  
ղեկավարի տեղակալ,  
տնտեսագիտության թեկնածու*

### **ՄԱՐԴՈՒ ԳԻՏԱԿՑՎԱԾ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ՝ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾՈՆ**

Գիտելիքի դարաշրջանում յուրաքանչյուր գործողություն կամ մասնագիտական գործունեություն, համաձայն գիտելիքահենքության պահանջին, նպատակային և արդյունավետ պետք է լինի: Ուստի, դրանք իրականացնող սուբյեկտը գիտակցված գործելու համապատասխան կարողություններ և դրանք կիրառելու հնարավորություններ պետք է ունենա: Մարդ-անհատի մոտ գիտելիքահենք գործունեության կարողությունները ձևավորվում և զարգանում են նրա կյանքի ընթացքում և կարող են բազմակողմ լինել<sup>1</sup>: Մարդն իր գործողություններում և գործունեությունում օգտագործում է այդ կարողությունները՝ ամբողջությամբ կամ դրա առանձին բաղադրիչների որոշակի մասն ընդգրկող համալիր ձևով: Ընդ որում, վերջինի համալիրության աստիճանն ինչ-որ չափով բնութագրում է նաև տվյալ սուբյեկտի գիտակցված գործելու հնարավորությունը: Սակայն, այն ոչ միշտ է կախված միայն սուբյեկտից: Գերակշռող կարող է լինել այլ, այդ թվում նրանից անկախ պայմանների ազդեցությունը:

Ստավոր կարողությունը ներուժ է, այն գիտակցված գործելու և դրա միջոցով բարձրորակ արդյունք ստեղծելու հնարավորություն է ընձեռում: Սակայն առկա կարողության այս հնարավորությունն իրողություն կարող է դառնալ միայն այն դեպքում, եթե այդ ներուժը գործնական կիրառություն է ունենում, օգտագործվում է իր կողմից՝ մարդ-անհատի գործողություններում (գործունեությունում): Ինչքան ինտեն-

<sup>1</sup> Մարդու գիտելիքահենք գործունեության կարողության ձևավորման խնդիրները դիտարկվել են հեղինակների «Գիտակցված գործելու կարողության ձևավորումը՝ մարդկային ռեսուրսների զարգացման ռազմավարական ուղղություն» հոդվածում («Հանրային կառավարում», 2007, N1, էջ 65-76): Այստեղ դիտարկվելու են մարդու գիտակցված գործելու արդեն ձևավորված կարողության օգտագործմանն առնչվող հարցեր:

սիվ և երկարատև է այդ օգտագործումը, ինչքան ադեկվատ է կիրառման ոլորտը կարողության բնութագրերին, և ինչքան մեծ է պահանջը ստացվող արդյունքի նկատմամբ, այնքան բարձր է նաև ձևավորված կարողության արդյունավետությունը, մեծ է դրա դերն ու մասնակցությունը հասարակության զարգացման գործընթացում, հետևաբար, բարձր է նաև դրա արժևորման մակարդակը: Բացի այդ, օգտակար կիրառությունը և այդ ընթացքում կուտակվող փորձը նպաստում է մտավոր կարողության աճին, շարունակական է դարձնում դրա ձևավորումը, օժանդակում է փոփոխվող պայմաններին այն համապատասխան լինելու պահանջի կատարմանը, բարձրացնում է հետագա կիրառության արդյունավետությունն ու օգտակարությունն ինչպես հասարակության, այնպես և անհատի համար:

Չօգտագործված կարողությունը, ինչքան էլ տարողունակ լինի այն, վերածվում է տիրոջն օգուտ չբերող հարստության<sup>1</sup>: Դրա ձևավորման վրա ծախսված միջոցները, փաստորեն, օգտակար արդյունքներ չեն ապահովել, ուստի այդ չափով վնաս են հասցրել հասարակությանը և բացասական ազդեցություն են ունեցել նաև զարգացման գործընթացի վրա: Բացի այդ, չօգտագործվող և այդ պատճառով աստիճանաբար նվազող ու հնացող կարողությունը, նույնիսկ որպես հարստություն, կորցնում է իր նշանակությունը, մեծանում է դրա անհամապատասխանությունը փոփոխվող և շարունակաբար զարգացող պայմաններին: Դա, հասկանալի է, կասկածելի է դարձնում այդ բարոյապես մաշված կարողությունը նաև հետագայում երբևէ արդյունավետ կիրառելու հնարավորությունը:

Բերված դատողություններն ակնհայտորեն ցուցում են, որ մարդկանց մոտ գիտակցված գործունեություն իրականացնելու կարողություններ ձևավորելու հետ մեկտեղ մեծապես կարևոր է նաև դրանց օգտակար կիրառման խնդիրը: Այն առանձնակի ուշադրության է արժանի հանրապետությունում բնակչության զբաղվածության այժմյան ցածր մակարդակի պայմաններում: Խնդիրը փոխկապված քննարկման կարիք ունի, սակայն հասարակության զարգացման և բնակչության կենսապայմանների բարելավման տեսանկյունից նաև ինքնուրույն նշանակություն ունեցող երկու ուղղությամբ.

ա) առկա (ձևավորված) կարողության արդյունավետ օգտագործում,

բ) հետագա օգտագործման հնարավորությունների հաշվառում կարողության ձևավորման գործառույթներում:

Այս խնդիրներում ընդհանուր է հետազոտության դաշտը (մարդկային ռեսուրսներ, աշխատանքի շուկա, կարողություններին առաջադրվող պահանջներ, կիրառման ոլորտներ), ձևավորված կարողության

<sup>1</sup> Կյանքի ընթացիկ ամենօրյա գործողություններում մարդու փորձը, գիտելիքը և կարողությունը, անկասկած, իրենց դերն ու դրական ազդեցությունը կունենան, սակայն այստեղ նկատի ունենք կիրառությունը հասարակական օգտակարություն և, իհարկե, պահանջարկ ունեցող գործընթացներում:

հնարավոր լրիվ և արդյունավետ օգտագործման պահանջը, հիմնավորված և գործնականում կիրառելի լուծումներ ստանալու կարևորությունն ու հրատապությունը, մտավոր կարողությունը ձևավորելու և օգտագործելու գործընթացներում և կառավարման գործառնություններում ներդրումների կատարումը: Սակայն, դրանք տարբեր են ինչպես նպատակադրումներով, դրվածքով և ակնկալվելիք արդյունքների բնույթով, այնպես և ազդող գործոնների կազմով, լուծման մոտեցումներով և այլ բնութագրերով: Այս տարբերություններին և նաև նմանություններին համապատասխան պետք է ձևավորվեն խնդիրների քննարկման մոտեցումները, ընդ որում՝ ինչպես համերկրային, այնպես և տարածաշրջանային կտրվածքներով դրանց փոխհամաձայնեցման մոտեցումով:

Դժվար չէ պատկերացնել այդպիսի հետազոտությունների տեսագործնական բարդությունը, ծավալը և բազմակողմ տեղեկատվության պահանջը: Մյուս կողմից, հասկանալի է նաև դրանք հնարավորինս շուտ ավարտելու և արդյունքները կիրառելու մեծ օգտակարությունը, ինչին ուղղված համապատասխան քայլեր պետք է ձեռնարկվեն այդ ոլորտի պատասխանատու կառավարման մարմինների կողմից:

Առկա մտավոր կարողությունների օգտագործումը հնարավորինս ավելացնելու ուղղությամբ աշխատանքներ, հաշվի առնելով հանրապետության ներկա սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական իրավիճակների առանձնահատկությունները, տարվում են մի շարք մակրոտնտեսական ծրագրերի (այդ թվում աղքատության հաղթահարման, տնտեսության կայուն զարգացման և քաղաքացիական հասարակության կառուցման, մարդկային զարգացման և ռեսուրսների կառավարման, բնապահպանության, աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարելավման և այլն) շրջանակներում: Ավելի քիչ ուշադրություն է դարձվում երկրորդ՝ մտավոր կարողության ձևավորման գործընթացներում դրա հետագա օգտագործման գործոններն ու պայմանները հնարավոր լրիվ հաշվի առնելու խնդրին: Նկատի ունենալով, որ այդ գործում առկա թերությունների բացասական հետևանքները գործընթացի երկարատև բնույթի և արդյունքի կիրառման զգալի ժամանակային լագի պայմաններում նկատելի կլինեն (կբացահայտվեն) միայն հետագայում, կարծում ենք, այժմ իսկ անհրաժեշտ է ավելի խորը և լայն ընդգրկումով մոտենալ այդ խնդրի լուծմանը՝ ներգրավելով կրթության և գիտության ոլորտի բարձրորակ մասնագետների: Նկատի ունենալով կրթության և գիտության ոլորտներում նախատեսվող բարեփոխումների հիմնադրույթները և իրականացման ժամանակացույցը, կարծում ենք, այդ աշխատանքներում նպատակահարմար կլինի ներառել գիտելիքահենք գործունեությունը պայմանավորող բոլոր կարևոր (այդ թվում նաև ստորև թվարկած) խնդիրների և գործոնների ազդեցության գնահատման և հաշվի առնելու հարցերը:

- Կանխատեսումների ծրագրային հորիզոնի (հաշվային ժամանակահատվածի) սահմանում՝ նկատի ունենալով տարբեր մակարդակի մտավոր կարողությունների ձևավորման ժամանակային տևողությունը:

- Տնտեսության զարգացման, աշխատանքի շուկայի և դրանում մտավոր կարողությունների հատվածի, կրթության և գիտության ոլորտների իրավիճակի և կադրային պահանջարկի, բնակչության շրջանում կրթության նկատմամբ հակվածության աստիճանի և հասարակության այլ հիմնարար բնութագրերի երկարաժամկետ կանխատեսումների մշակում և լայն փորձաքննություն:

- Մտավոր կարողության մասնագիտացման առաջնային ուղղությունների ճշգրտում արդյունավետության գնահատման հիմքի վրա, դրանցում ստեղծագործական զբաղմունքի աշխատողների օգտագործման ժամանակային սահմանափակումների պարզորոշում:

- Մտավոր կարողության ձևավորման և օգտագործման գործընթացների համատեղման սահմանների և նպատակահարմարության որոշում, կառուցակարգերի և ձևերի մշակում և գործնական կիրառման հնարավորությունների գնահատում:

- Նկատի ունենալով, որ մտավոր կարողությունը գոյություն ունի և կիրառելի է իր կրողի միջոցով, նրա աշխատունակության շրջանում, և վերջինի տևողությունը տարբեր կարող է լինել կախված անձի առանձնահատկություններից, օրենսդրորեն հնարավորություն ստեղծել բարձր մտավոր կարողություն ունեցող անձանց համար աշխատունակ ժամանակաշրջանի սահմաններն որոշելիս ցուցաբերել անհատական մոտեցում՝ առաջարկելով գնահատման հիմնավորված մեթոդներ և դրանց կիրառման մանրամասնեցված կարգեր:

- Մշակել և կիրառել համապատասխան մեթոդաբանություն և մեթոդական մոտեցումներ բավարար ճշգրտությամբ և հավաստիությամբ գնահատելու համար.

- ա) մտավոր բնածին ընդունակությունների ուղղվածությունն ու տարողությունը,

- բ) գիտակցված գործելու փաստացի ձևավորված և առկա մտավոր կարողությունների ծավալը,

- գ) վերջինների օգտագործման արդյունավետության մակարդակը:

- Մշակել և կիրառել մոտիվացիայի և խթանման միջոցներ՝ ուղղված բնածին բարձր ընդունակություններ ունեցող անձանց մոտ համապատասխան մտավոր կարողությունների ձևավորմանը, զարգացմանը և հնարավոր լրիվ և բարձր արդյունավետ օգտագործմանը:

- Ընդլայնել մտավոր կարողություն ձևավորելու հնարավորությունները, առավել ևս բնածին բարձր ընդունակություններ ունեցողների համար, ըստ ամենայնի օժանդակել նրանց այդ, ինչպես և ձևավորված կարողություններն իրենց հետագա գործունեությունում կիրառելու գործընթացներում:

- Գիտակցված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ (պահանջվող) մտավոր կարողությունը, որպես կանոն, հիմքում

ուճեցնելով տվյալ անձի բնածին հակվածություններն ու ընդունակությունները, ձևավորվում է աստիճանաբար, անձի, նրա շրջապատի և հասարակության ջանքերի և ծախսումների արդյունքում: Այս շարունակական գործընթացը ևս հասարակական մակարդակով հանդիսանում է մարդկային գիտակցված գործունեության կարևորագույն և ընդգրկուն բնագավառներից (ուրորտներից) մեկը, որի իրականացման հաջողության մակարդակով նաև պայմանավորվում է մարդու հետագա գործունեության հնարավորությունը և արդյունավետությունը: Դրան համապատասխան կարևորվում է նաև այդ բնագավառի՝ որպես մարդկային կապիտալի (առավել ևս դրա մտավոր հատվածի) վերարտադրության և հասարակության զարգացումը հիմնականում ապահովող գործոնի գիտական խոր հետազոտության խնդիրը: Այդպիսի հետազոտությունների արդյունքների նպատակային և տեղին գործնական կիրառությունը, կարծում ենք, հիմք կդառնա և պայմաններ կստեղծի նաև այդ գործունեության բարձրորակ և համակողմ կառավարման համար: Այս գործընթացում լուրջ ուշադրության պետք է արժանանան նաև առայժմ ոչ ադեկվատ չափով մշակված, մյուս կողմից, հիմնավորված լուծումներ պահանջող հետևյալ հարցերը:

- Բնագավառի էության, նպատակների և գործառնությունների ադեկվատ ճանաչում, գիտակցված գործունեություն իրականացնելու և դրան համապատասխան մտավոր կարողություն ձևավորելու նշանակության լիարժեք գիտակցում, փաստացի իրավիճակի գնահատում:

- Ստեղծագործաբար մտածելու և գիտակցված գործունեություն իրականացնելու կարողության ձևավորման արդյունավետ եղանակների և միջոցների մշակում, ընտրություն և կիրառում՝ հաշվի առած երկրի պայմաններն ու բնակչության և դրա առանձին խմբերի մտածելակերպն ու յուրահատկությունները:

- Անհատների բնածին ընդունակությունների ուղղվածության և տարողության գնահատման մեթոդների և մոնիտորինգի համակարգի ստեղծում, վաղ կողմնորոշման մոտեցումների մշակում և կիրառում կարողության ձևավորման գործընթացներում, ընդունակությունների տարատեսակ (մեկից ավելի) ուղղվածությունների առկայության դեպքում համեմատական առավելությունների գնահատում և կարողությունները ձևավորելիս դրանց հաշվառում, վերահսկողության մեթոդների և մոտեցումների կիրառություն: Մյուս կողմից, նկատի ունենալով նեղ մասնագիտացման ռիսկերը, նպատակահարմար համարել անհատի մասնագիտական ուղղվածության դիվերսիֆիկացումը որոշակի սահմաններում, այդ նպատակով մշակել և ներդնել դրա որոշակիացման մեթոդներ:

- Կարողությունների ուղղվածության առաջնայնություններն որոշելիս նկատի ունենալ ձևավորվող կարողությունների հետագա կիրառման հնարավորությունները, երկրի մասնագիտացման առկա ուղղությունները, դրանցում հետագա փոփոխությունների հնարավորությունները, ժամանակահատվածները, տեսանելի հեռանկարում գիտագործ-



նական ոլորտներում միջազգային առումով նոր առաջնային ուղղությունների ձևավորման սպասումները և այլ գործոնների ազդեցությունը:

- Ապահովել ուսուցանվող անհատների, ձևավորվող կարողության օգտագործմանն առնչվող սուբյեկտների և հանրության, ձևավորման գործընթացին օգնելու հնարավորություն և ցանկություն ունեցող անհատների ու կազմակերպությունների ակտիվ մասնակցությունն այդ գործունեությանը, ստեղծել դրան նպատակաուղղված մոտիվացիոն համակարգ, խթանման եղանակներ և միջոցներ, բացահայտել, գնահատել և հնարավորինս օգտագործել այդ բնագավառում միջազգային դրական փորձը:

- Գիտակցված գործելու կարողությունների ձևավորման գործընթացների որակյալ կառավարման համար անհրաժեշտ է կարողությունների հավաստի գնահատում, ուստի և այդպիսի համակարգի ստեղծում և բնականոն իրավական գործելու պայմանների ապահովում, օրենսդրորեն սահմանված կարգով մասնագիտական աստիճանների շնորհում ըստ գնահատման արդյունքների, աշխատող կադրերի գիտելիքի և կարողության պարբերական ստուգում (ատեստացիա) և վերապատրաստման հնարավորության ընձեռում, գիտական աստիճանների առկայության (որպես ստեղծագործաբար մտածելու և գործելու կարողության գնահատական) հաշվառում մասնագետին աշխատանքի ընդունելիս և գործառույթները սահմանելիս:

Գիտակցված գործելու կարողության հնարավոր ադեկվատ գնահատականներ ձևավորելիս, առավել ևս, եթե դա արվում է ուսուցումը շարունակելու, մասնագիտական որակավորումը բարձրացնելու կամ աշխատանքային առաջխաղացման վճիռ ընդունելու նպատակով, նկատի պետք է առնվեն անձի մոտ այդ կարողության ձևավորման վրա հնարավոր ազդեցություն ունեցող բոլոր կարևոր գործոնները: Անդրադարձ կատարենք դրանցից մեկին, որը մեծ մասամբ համապատասխան ուշադրության չի արժանանում:

Եթե գիտակցված գործելու կարողությունն ունի վերին սահման, որը յուրաքանչյուր անձի համար պայմանավորված է նրան բնածին տրվող ընդունակությունների ուղղվածությամբ և չափով, ուրեմն այն պետք է որ հաշվի առնվի այդ կարողության զարգացման հետագա հնարավորությունները գնահատելիս: Սակայն, եթե անձի մոտ արդեն փաստացի ձևավորված *կարողության* մակարդակը որոշակի ճշգրտությամբ կարելի է ուղղակիորեն գնահատել, նշված ընդունակությունների համար այդպիսի գնահատումը կարող է կատարվել միայն անուղղակի ձևով, օժանդակ ցուցանիշների կիրառմամբ: Այդպիսիք կարող են համարվել մանուկ հասակում երեխայի մտածելակերպը և վարվելակերպը, ուսուցման մեջ առաջադիմությունը, աշխատանքային առաջխաղացումը, պարբերական ստուգում-ատեստացիաների կամ քննությունների արդյունքները, ինչպես նաև գնահատման պահին գիտակցված գործելու առկա կարողության փաստացի մասշտաբը տվյալ անձի մոտ: Սակայն այդպիսի գնահատումը կարողության

զարգացման հնարավորությունների, առավել ևս անձի բնածին ընդունակություններով պայմանավորված դրա վերին սահմանի վերաբերյալ, հազիվ թե հավաստի գնահատական ապահովի:

Մյուս կողմից, եթե կարողության վերին սահմանի գոյության և այն բնածին ընդունակություններով պայմանավորված լինելու դրույթը հիմնավորված է, ինչպես նաև ապացուցված է, որ բնածին ընդունակությունները, բնականոն պայմաններում, որպես կանոն երեխաներին են փոխանցվում գենետիկորեն ծնողների միջոցով, ապա կարծում ենք, անձի մոտ նշված ընդունակությունների գնահատումն ինչ-որ չափով կարելի է կատարել նաև իր ծնողների բնութագրերի միջոցով: Առավել ևս, եթե նկատի ունենանք, որ երեխայի մանկությունը հիմնականում անցնում է ընտանիքում, և նա շարունակում է ընդունել և ընդօրինակել ծնողների շատ հատկություններ և սովորույթներ, որոնք իր մոտ պահպանվում են շատ երկար, ոմանց մոտ՝ կյանքի ողջ ընթացքում:

Ասվածից հետևում է, որ անձի գիտակցված գործելու կարողությունը գնահատելիս, նպատակահարմար է հաշվի առնել նաև նրա ծնողների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը: Վերջինի ուղղվածությունը, ցուցանիշները, պաշտոնական բնույթը ու ներկայացումը պետք է կանոնակարգվի և իրավական նորմատիվային ձևակերպում ստանա:

Գնահատման այդպիսի մոտեցումը, նկատի ունենալով բնածին ընդունակությունները գիտակցված գործելու կարողության վերածելու տարբեր պայմաններն ու հնարավորությունները, զգալի պայմանականություն և շեղման ռիսկ է պարունակում: Սակայն այդ գնահատականը կարելի է դիտել որպես օժանդակ, ոչ որոշիչ, բայց և որոշակի օգտակարություն ունեցող՝ աշխատող կադրի հետագա առաջխաղացումը կանխատեսելու համար: Ուստի, առաջարկված մոտեցումը, դրա կիրառման մանրամասները մշակելուց հետո, մեր կարծիքով, հիմնավորված է: Իսկ կարողության ամփոփ գնահատականում դրա տեղը և կարևորությունը կարելի է որոշակիացնել՝ ազդեցության հիմնավորված կշիռներ օգտագործելով: Եթե շատ ստեղծագործություններ՝ գրականության, արվեստի, ճարտարապետության, գիտական, կառավարման և այլ ոլորտներում ճանաչվում են նաև իրենց ստեղծողների մեծությունը և ճանաչվածությունը հաշվի առնելով, ինչու չի կարող այդ մոտեցումը օգտագործվել նաև մի այլ, ոչ պակաս նշանակալի մի ստեղծագործության համար՝ ծնողների կողմից մարդ ստեղծելու պարագայում:

Մասնագիտական կարողությունների ձևավորմանն ուղղված գործունեության բարձր կարևորությունը և խիստ արտահայտված առանձնահատկություններն, այդ թվում՝ գործողության լայն դաշտը, համընդհանուր բնույթը, իրականացման երկարատևությունը, բարդությունները, ուսուցանող և ուսուցվող սուբյեկտների յուրահատկությունները, անհրաժեշտ են դարձնում այդ ոլորտի բարձրորակ և բազմակողմ կարգավորումն ու կառավարումը: Դա պահանջում է համապատաս-

խան մարմինների ստեղծում՝ իրենց գործառույթների, իրավասությունների և պատասխանատվության հստակ ձևակերպումներով, ինչպես նաև բնականոն գործելու համար անհրաժեշտ պայմանների ապահովումով: Վերջինների թվում, համակարգը բարձրորակ կադրերով ապահովելուց բացի, կարծում ենք, աչքաթող չպետք է արվի մասնագիտական կարողությունների ձևավորման գործառույթների իրականացման գիտամեթոդական, օրենսդրաիրավական, տեղեկատվական, ծրագրային, պլանավորման, մոնիտորինգի և հսկողության, կազմակերպական բարեփոխումների և այլ ապահովումների ձևավորման խնդիրները, մանավանդ որ այժմ գործող համակարգն այդ ասպարեզում, մեղմ ասած, բարելավման միտում ունի: Անհրաժեշտություն է բնագավառի կադրերի շտեմարանի ստեղծումն ու սպասարկումը, դրանում ներառելով գնահատման բնութագրերի ու ցուցանիշների և պահանջվող տեղեկատվության ենթահամակարգեր:

Մյուս կողմից, եթե անձի բնածին ընդունակությունները, անկախ դրանց ուղղվածությունից, սահմանափակ են, մեծ ջանքերը հազիվ թե կարողանան ապահովել սահմանագծից զգալի բարձր կարողությունների ձևավորում: Հետևաբար, այդպիսի ջանքերը և տարբեր ռեսուրսների ծախսը ինչպես հասարակության, այնպես և տվյալ անձի համար հազիվ թե նպատակահարմար համարվի: Այս տեսանկյունից լիովին արդարացված է կարողության ձևավորման հիմնական միջոցի՝ կրթության և մասնագիտական ուսուցման համակարգի և եղանակների աստիճանականության սկզբունքը, որի կիրառությունը հնարավորություն է տալիս անհատին ընդհատել (սահմանափակել) իր մտավոր կարողության ձևավորման գործընթացն՝ իր ընդունակության սահմաններին համապատասխան:

Այդ սահմանի որոշակիացման համար տեսականորեն կիրառելի է սահմանային օգտակարության տեսության հիման վրա ձևավորված մեթոդը, ըստ որի տվյալ նպատակի իրականացման համար ծախսումների նպատակահարմար սահմանը որոշվում է դրանց և սպասվող արդյունքի աճերի հավասարության կետում:

Եթե հայտնի են անձի մոտ ստեղծագործական կարողությունների (ՍԿ) կապը դրանք ձևավորելու համար պահանջվող ծախսումների (ԿԾ) մեծությունից՝

$$ԿԾ = f_1(ՍԿ)$$

և այդ անձի աշխատանքով ստեղծվող արդյունքի (ԱԱ) կապը նրա մոտ առկա ստեղծագործական կարողությունների ծավալից (ՍԿ)՝

$$ԱԱ = f_2(ՍԿ)$$

ապա փնտրվող սահմանը կհամապատասխանի ՍԿ այն արժեքին, որում  $\Delta ՍԿ$  փոքր փոփոխությունը բերում է  $f_1$  և  $f_2$  ֆունկցիաների հավասար աճերի, այսինքն՝ կարողության աճի ձևավորման վրա ծախսումների և այդ աճի միջոցով ստացված լրացուցիչ արդյունքի հավասարության:

ΔԱԱ = ΔԿԾ

Նշենք, որ խնդրի այս լուծումը կարելի է ներկայացնել նաև գրաֆիկորեն՝ որպես գրված ֆունկցիաների ածանցյալների (կամ փոքր չափով աճերի) կորերի հատման կետ:

Նկարագրված մոտեցումը, կարելի է ասել, միայն տեսական դրվածք է, որի գործնական կիրառությունն այստեղ դիտարկվող դեպքի համար պահանջում է մեթոդաբանական և մեթոդական լուրջ միջամտություններ: Բանն այն է, որ ստեղծագործական կարողությունն իր էությանը կապիտալ է, որը կարող է օգտագործվել բազմակի անգամ կամ երկարատև ժամանակահատվածի ընթացքում: Միանվագ չեն կատարվում նաև կարողությունը ձևավորելու ծախսումները, քանի որ այս գործընթացը ևս իրականացվում է զգալի ժամանակահատվածի ընթացքում, պահանջում է տարբեր սուբյեկտների մասնակցություն: Բացի այդ, կախված անհատի առանձնահատկություններից, նրան պարզևկած ընդունակություններից, դրանք ստեղծագործական կարողությունների վերածելու ցանկությունից, տարբեր կարող են լինել նաև վերը նշված գործառնության կապերը: Դա նշանակում է, որ խնդիրը պետք է առաջադրվի և լուծվի անհատների կամ դրանց՝ որոշակի բնութագրերով միավորված առանձին խմբերի համար: Առկա են նաև ինչպես ընդունակությունը կարողության վերափոխելու, այնպես և այն հետագա ժամանակում օգտագործելու տարաբնույթ, շատ դեպքերում անկանխատեսելի ռիսկեր, այդ թվում նաև օգտագործման ժամանակահատվածի անորոշության տեսանկյունից: Կարողության ձևավորման, ապա և օգտագործման ժամանակաշրջանների երկար տևողությունները պահանջում են խնդրի դրվածքում և դրա լուծման ժամանակ անպայմանորեն նկատի ունենալ ժամանակի գործոնի ազդեցությունը, ինչը ևս մեթոդական և տեղեկատվական լուրջ դժվարությունների է հանդիպում:

Կարելի է նշել նաև այլ պատճառներ, որոնք կասկածի տակ են դնում այս մոտեցման կիրառման նպատակահարմարությունը բոլոր այն դեպքերում, երբ որոշվելու է գործունեության՝ կապիտալի բնույթ ունեցող գործոնների օպտիմալ չափերը, առավել ևս ստեղծագործական կարողությունների ձևավորման անորոշությունների պարագայում: Ուստի պահանջվում է այլ, գործնական կիրառման տեսանկյունից ավելի ընդունելի մոտեցման մշակում:

Այստեղ դիտարկվող խնդրի համար, մեր կարծիքով, ընդունելի կարող է համարվել ուսուցման (մտածված գործելու կարողության ձևավորման) համակարգի աստիճանականությունն օգտագործող մոտեցումը: Այս դեպքում, ունենալով յուրաքանչյուր աստիճանն ավարտելուց հետո ստացվելիք գիտելիքի և կարողության նորմավորված մեծությունները և ստուգելով տվյալ աստիճանն ավարտած (ինչպես նաև հաջորդ աստիճան փոխադրվելու հայտ ներկայացրած) անձի մոտ այդ բնութագրերի (գիտելիքի և կարողության) փաստացի գնահատական-

ները, կարելի է կարծիք կազմել նաև ուսուցման հետագա շարունակման նպատակահարմարության մասին: Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ զարգացող մարդկային հասարակությունում, ինչ-որ չափով հաշվի առնելով նաև տարածաշրջանային տարբերությունները, որոշակի մեծության գիտելիքի և կարողության առկայությունը պարտադիր պետք է համարվի, ուստի դրանց ձևավորման համար պահանջվող ուսուցումը ևս պարտադիր պետք է դառնա տվյալ հասարակության յուրաքանչյուր անդամի համար:

Այս մոտեցումը հաշվի է առնում հիմնականում խնդրի տնտեսական կողմը, կիրառելի է առավելապես հասարակության հաշվին իրականացվող ուսուցման համակարգում: Իրականում, բացի տնտեսականից խնդրի լուծման վրա ազդեցություն կարող են ունենալ նաև այլ՝ սոցիալական, քաղաքական, պաշտպանական գործոնները: Այս, ինչպես և անձի՝ իրեն վերաբերող խնդիրներում՝ վճիռ ընդունելու ազատության պայմաններում, հասարակության անդամները չեն կարող զրկվել իրենց հաշվին կրթությունը շարունակելու իրավունքից: Սակայն, նկատի ունենալով այս դեպքում հասարակության որոշակի տնտեսական վնասը այդ անհատների մոտ արդեն ձևավորված կարողությունների ոչ լիարժեք օգտագործման պատճառով, խնդրի կարգավորումը պետական միջամտություն կպահանջի: Դրա ուղղությունների և միջոցների մշակումը, ընտրության հիմնավորումը և կիրարկման մասին պաշտոնական որոշման ընդունումը լուրջ գիտագործնական հետազոտությունների և բազմակողմ փորձաքննությունների արդյունքում պետք է կատարվեն:

Գիտակցված գործելու կարողությունը հնարավորինս լիարժեք օգտագործելու անհրաժեշտությունը քննարկելիս աչքաթող չպետք է արվի մի շարք կարևոր հանգամանք ևս: Մարդը, օգտվելով մտածելու և ստեղծագործաբար գործելու իրեն պարզևկած շնորհից և օգտագործելով կենսամիջավայրի ռեսուրսները, ստեղծում է իր պահանջմունքները բավարարող նոր արդյունքներ՝ դրանց հաղորդելով պահանջներին համապատասխանող նոր որակ և արժեք:

Մարդկանց և մարդկային հանրության պահանջմունքների մշտականությունը ու դրանց բավարարման շարունակականությունը, այդ նպատակով բարիքների ստեղծման անընդհատությունը մարդու և մարդկային հասարակության զարգացումն ու առաջընթացը, արժեքի պահպանման տնտեսագիտական օրենքի գործողությունը և այլ գործոնների բովանդակային վերլուծությունն ակնհայտ է դարձնում, որ այդ նոր որակը և արժեքը ձևավորվել են ստեղծմանը մասնակցած բոլոր բաղադրիչների (այսինքն՝ ռեսուրսների և նոր աշխատանքի) որակի ու արժեքի հիմքի վրա: Ուստի դրանցում հաշվի են առնվելու ինչպես այդ բաղադրիչների որակն ու արժեքը, այնպես և դրանց վերարտադրությունը: Այդպիսի հաշվառումը և ստացված արդյունքի արժեքի ու որակի տեսականորեն ճիշտ գնահատումն այժմ իրականանալի չէ՝ խնդրի մեթոդական և տեղեկատվական անբավարար ապահովության

պատճառով: Այդ գնահատականները փոխարինվում են տվյալ բարիքի իրացման շուկայական գնով: Ընդ որում, դրա հիմքը մատակարարի համար հիմնականում բարիքի ստեղծման ծախսումներն են, իսկ սպառողի համար՝ բարիքի օգտակարության իր գնահատականը: Մոտեցումների փոխհամաձայնեցումը շուկայում կատարվում է նաև տարաբնույթ այլ գործոնների ազդեցության տակ, ուստի գնահատել թե բարիքի շուկայական գինը ինչ չափով է հանընկնում իրական արժեքին առայժմ, կարծում ենք, նույնպես հնարավոր չէ:

Խնդրի մյուս կողմը, որը մեր կողմից դիտարկվող հարցի՝ նոր արժեքի գնահատման տեսանկյունից ավելի մեծ կարևորություն է ներկայացնում, վերաբերում է բարիքի ստեղծմանը մասնակից ռեսուրսների և աշխատանքի տեսակների վերարտադրությանը: Բանն այն է, որ արտադրողը (մատակարարը) ոչ բոլոր օգտագործված (արտադրության գործընթացում սպառված) ռեսուրսների վերարտադրության ծախքերն է հատուցում: Դրանց որոշ մասը կատարվում է միջավայրի (բնության) հաշվին, եթե ռեսուրսը ինքնին բնության կողմից վերարտադրվող է (օրինակ՝ արեգակնային էներգիան) կամ այդքանով պակասում է բնության ռեսուրսը (օրինակ՝ օգտագործված գազի, նավթի, հանքանյութի կամ այլ դեպքերում): Բնության կողմից վերարտադրվող է նաև մարդն իր բնատուր ընդունակություններով: Աշխատողի ռեսուրսի այդ մասի վերարտադրությունը բարիքներ արտադրողը չի ապահովում: Նա օգտվում է պատրաստի աշխատուժից, վճարում է արտադրության գործընթացում ծախսված մասի համար՝ հաշվի առած նաև դրա որակը:

Այստեղից կարելի է հանգել կարևոր հետևությունների.

- Տեսականորեն ոչ բավարար կարելի է համարել արդյունքի ստեղծման գործոնային գնահատման մեթոդի հիմնավորվածությունը: Ընդունելի չեն այն պնդումները, որ աշխատողի աշխատավարձը համընկնում է իր ստեղծած արժեքին, որ կապիտալն ապահովում է տոկոս, որ շահույթի ստացումը պայմանավորված է մենեջերական հմտություններով:

- Շահույթի աղբյուրը, մեր համոզմամբ, աշխատանքն է, դրա միջոցով ստեղծվող ավելացված արժեքը և դրանում ռեսուրսների վերարտադրության չվճարվող ծախսումները: Ավելացված արժեքի հարկը, որպես գնի հավելում, միայն մասամբ և պայմանականորեն է հաշվի առնում այդ ստեղծված և չվճարվող արժեքը, այն գանձելով սպառողներից:

- Ավելացված արժեքի ստեղծումը հիմնականում պայմանավորված է բնական ռեսուրսների օգտագործմամբ և մարդկային գիտակցված գործունեությամբ, ընդ որում վերջինում առավել զգալի է ստեղծագործական աշխատանքի մասը՝ գիտելիքի ստեղծումը, նոր տեխնոլոգիաների ու նորամուծությունների մշակումը, հիմնավորված կառավարումը, ճշգրիտ կանխատեսումները և այլ նորարարությունները:

- Մարդկային ռեսուրսների, առավել ևս դրանց ստեղծագործական կարողությունների ոչ լիարժեք օգտագործումը նշանակում է հրաժա-

րում այն նոր արժեքից, որը կարող էր ստեղծվել այդ ռեսուրսների արդյունավետ օգտագործման պայմաններում: Այդ չստացված արդյունքը, փաստորեն դառնում է հասարակության վնասը, հաշվի չառած նաև գործազուրկին հասարակության հաշվին տրամադրվող նպաստը, ինչպես նաև գործազուրկի հոգեկան վիճակին և առողջությանը հասցվող վնասը:

- Արտագաղթը, լինի այն մշտական կամ զբաղվածության նպատակով, նույնպես հանգեցնում է վնասի՝ երկրից հեռացողի կողմից հնարավոր արդյունքը չստանալու չափով: Եթե արտագաղթող անհատի գիտակցված գործելու կարողությունը ձևավորվել է այդ երկրում, ապա նշված վնասին ավելանում են նաև այդ նպատակով կատարված ծախսումները, որը դառնում է մուտքի երկրի համար եկամուտ: Արտագաղթը կրճատելու կամ կանոնակարգելու, ինչպես նաև աշխատատեղերի ստեղծման միջոցառումները մշակելու գործընթացներում նշված տնտեսական վնասը պետք է որ դառնա հաշվի առնվող կարևոր գործոններից մեկը:

Թվարկած հարցերի քննարկման, ինչպես նաև սույն հոդվածում բարձրացված այլ խնդիրների լուծման մոտեցումների մշակման և գործնական կիրառման համար, ինչպես նշեցինք, կպահանջվի մեծածավալ գիտագործնական հետազոտությունների իրականացում: Դրանց կազմում, մեր կարծիքով, անհրաժեշտ է անդրադառնալ նաև հետևյալ միջոցառումներին.

- դիտարկվող ոլորտի և դրա առանձին բաղադրիչների մանրամասն կառուցվածքավորում, ճանաչում, ընդգրկուն տեղեկատվության հավաքագրում և համակարգային վերլուծություն,

- բաղադրատարրերի միջև կապերի և փոխազդեցությունների բացահայտում, բնութագրում և քանակական գնահատում,

- ոլորտում առկա իրավիճակի աղեկվատ նկարագրում, թերությունների բացահայտում, պայմանավորող գործոնների, դրանց ազդեցության ուղղությունների և չափի, ինչպես նաև կարողությունների ձևավորման և օգտագործման գործառույթների իրականացման արդյունավետության գնահատում,

- թերությունների վերացման և ոլորտի բարելավման ուղղությունների որոշում, մոտեցումների մշակում, միջոցառումների նախագծում, կիրառման հնարավորությունների հետազոտություն և նախապատրաստում,

- խնդիրների հետազոտության, իրավիճակի գնահատման, բարելավման ուղիների ընտրության նպատակով համապատասխան սկզբունքների և կանխադրույթների համակարգի ձևավորում, հիմնավորում, կիրառություն,

- թվարկած աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ մեթոդաբանական հիմքերի և մեթոդական մոտեցումների համակարգի ձևավորում, դրանց գիտական հավաստիության ստուգում, կիրառե-

լիության հիմնավորում, տեղեկատվական բազայի ստեղծում և սպասարկում,

- գիտահետազոտական և հաշվարկային-վերլուծական աշխատանքների կատարման համապատասխան մասնագիտացում և որակավորում ունեցող կադրերի պատրաստում և վերապատրաստում,

- կառավարման մարմինների գործունեության գիտամեթոդական ապահովման և սպասարկման համար, նրանց պատվերով, համապատասխան մոտեցումների և միջոցառումների մշակում և օգտագործման խորհրդատվություն:

### Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Управление человеческими ресурсами. Энциклопедия. Пер. с англ. Питер, СПб., 2002, с.1200.

2. Доклад о развитии человека за 2002 год. “Углубление демократии в разобщенном мире. Оксфорд, Оксфорд юниверсити пресс, Нью Йорк, 2002, с.277.

3. **Աղաջանյան Դ.**, Տնտեսական համակարգը՝ որպես ռացիոնալի և իռացիոնալի համադրություն. «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Երևան, № 3, 2006:

4. Տնտեսական վերափոխումներն անցումային շրջանում. տեսություն և արդյունքներ, «Պետական ծառայություն», Երևան, 1999, էջ 416:

5. Управление организацией. Энциклопедический словарь. Изд-й Дом ИНФРА, М., 2001, с.822.

6. **Мануэль Кастельс**, Информационная эпоха.Экономика, общество и культура. ГУ ВШЭ, М., 2002, с.608.



**BENYAMIN YEGHIAZARYAN**

*Economic Research Institute at the RA Ministry  
of Finance and Economy Deputy Director,  
Doctor of Sciences (Economics), Professor*

**ARA GYURJYAN**

*Presidency of the Republic of Armenia  
Deputy Chief of Staff,  
Doctor of Economics*

### **UTILIZATION OF INDIVIDUAL'S CAPABILITY OF CONSCIOUS ACTING AS A STRATEGIC FACTOR FOR SOCIETY'S DEVELOPMENT**

Intellectual capability is a potential for conscious acting which opens up possibilities for the creation of a high-quality result when utilized in practice. The intensity and life-span of the utilization contribute to the growth of that capability and determine the level of efficiency. The unutilized capability is a useless wealth which gradually loses its significance if not used. The money spent on the formation and maintenance of the unutilized and the non-received profit, becomes an economic loss for the individual and society to that extent. Due to this reality a number of issues, presented in the article in detail, acquire special magnitude.

With the same purpose, an approximate method for the determination of an acceptable threshold scale for the capability in the process of formation has also been presented in the article. A number of mechanisms, that would ensure the possible exhaustive use of formed capabilities, as well as the need for state intervention in the elaboration and implementation of measures aimed at reducing migration and unemployment, are presented and justified in the article.

## ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
«Հանրային կառավարում և հանրային ֆինանսներ»  
ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու*

### ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Տնտեսության հակամենաշնորհային կարգավորումը պետության կարևոր գործառույթներից մեկը, պետության սոցիալ-տնտեսական զարգացման գործում հրատապ լուծում պահանջող խնդիր է:

Անհրաժեշտ է նշել, որ պատմականորեն ձևավորվել է հակամենաշնորհային օրենքների երկու տեսակ: Դրանցից առաջինը նախատեսում է մենաշնորհի ձևական արգելում, երկրորդը՝ կառուցվում է մենաշնորհի միավորումների վերահսկողության և դրանց կողմից չարաչափումների սահմանափակման սկզբունքով [1, շ. 96]: Խոսքը վերաբերում է ԱՄՆ-ի հակատրեստային օրենսդրության և հակամենաշնորհային օրենսդրության եվրոպական համակարգին, որը նախատեսում է մենաշնորհի միավորումների հսկողություն՝ շուկայում նրանց գերիշխող դիրքի չարաչափման բացառման նպատակով:

Հիշյալ երկու համակարգերում էլ հակամենաշնորհային քաղաքականությունը դրսևորվում է Եվրոպական տնտեսական միության համաձայնագրի 86-րդ հոդվածի և համապատասխանաբար՝ Շերմանի Հակատրեստային օրենքի 2-րդ մասի դատական մեկնաբանություններում: Եվրոպական տնտեսական միության համաձայնագրի 86-րդ հոդվածը հանդիսանում է Եվրամիության «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի մի մասը: Եվրամիությունն իրականացնում է այնպիսի հակամենաշնորհային քաղաքականություն, որը որոշ դեպքերում տնտեսապես անարդյունավետ չէ, քանի որ արդյունավետ տնտեսության հասնելը միակ նպատակը չէ, ինչի համար նախատեսված է Եվրոպական տնտեսական միության համաձայնագրի 86-րդ հոդվածը: Այն ավելի շատ նախատեսված է իրականացնելու Եվրամիության առաջնային խնդիրը՝ առավել դյուրին դարձնել ԵՄ երկրների «առանձին» տնտեսությունների ինտեգրումը մեկ՝ միասնական «ընդհանուր շուկային»:

Եթե ամերիկյան հակամենաշնորհային օրենսդրությունը մենաշնորհները տնտեսության զարգացման համար դիտում էր որպես չարիք, ապա XX դարի սկզբին Արևմտյան Եվրոպայի երկրները, առանձնապես Գերմանիան (մինչև Երկրորդ աշխարհամարտը), մենաշնորհների նկատմամբ մեղմ վերաբերմունք էին ցուցաբերում. ընտրությունը

կատարել էին հօգուտ մենաշնորհների՝ խրախուսելով կարտելների և սինդիկատների գոյությունը: Երկրորդ աշխարհամարտից հետո Գերմանիայի հակամենաշնորհային օրենսդրությունը մենաշնորհների նկատմամբ վերաբերմունքով նմանեցվեց ամերիկյան տարբերակին:

Քանի որ հակամենաշնորհային օրենսդրության մշակման և կիրարկման առաջնեկը ԱՄՆ-ն է, ապա առաջին հերթին հարկ ենք համարում անդրադառնալ հակամենաշնորհային կարգավորման ամերիկյան փորձի քննարկմանը:

Հակամենաշնորհային օրենքները ԱՄՆ-ում ընդունվել են դեռևս XIX դարի վերջում տրեստների ձևով բազմաթիվ միավորումների ստեղծումից հետո: Դրանից ելնելով՝ ԱՄՆ-ում հակամենաշնորհային օրենքներն անվանվում են հակատրեստային: Ընդ որում, աշխարհում համեմատաբար արդյունավետ մշակված է համարվում հենց ԱՄՆ-ի հակամենաշնորհային օրենսդրությունը, որը հիմնվում է երեք հիմնական օրենսդրական ակտի վրա: Դրանք են.

1. Շերմանի օրենքը (1890թ.), որով արգելվում էր առևտրի գաղտնի մենաշնորհը, այս կամ այն ճյուղի վրա միանձնյա վերահսկողության սահմանումը, զների մասին պայմանավորվածությունները և այլն: XIX դարի առաջին տարիներին ԱՄՆ-ում ակտիվ աշխատանք սկսեց ծավալվել այլ ձեռնարկությունների հետ մենաշնորհների, միաձուլման, մանր մրցակիցների կլանման և նմանատիպ այլ գործողությունների սահմանափակման և արգելման ուղղությամբ:

2. Քլեյթոնի օրենքը (1914թ.) արգելում էր մրցակցության սահմանափակման պրակտիկան իրացման, զնային խտրականությունների, տնտեսավարող սուբյեկտների միավորման (միաձուլման) պայմանագրերի որոշակի տեսակների կնքման բնագավառներում և այլն: Սակայն XIX դարի 20-ական թթ. ընթացքում հակամենաշնորհային պայքարը զգալիորեն թուլացավ, ուստի և միայն քիչ թվով մենաշնորհներ, որոնց գործերը գտնվում էին դատարանում, ենթարկվեցին պատժամիջոցների:

Քլեյթոնի օրենքի ընդունմանը միաժամանակ ԱՄՆ-ի Կոնգրեսը վավերացրեց Դաշնային առևտրային հանձնաժողովի մասին օրենքը, որը լրացնում էր Քլեյթոնի օրենքը: Դա Դաշնային առևտրի հանձնաժողովին լիազորում էր որոշակի դեպքում արձանագրել հակամենաշնորհային օրենսդրության խախտման փաստը: Բացի դրանից, Դաշնային առևտրային հանձնաժողովը հետևում է ընկերությունների զովագրային գործունեությանը՝ այդ ոլորտում սպառողներին պաշտպանելով կեղծիքից և խաբեությունից: Դաշնային առևտրի հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում իրավունք ունի դատական գործ հարուցել օրինագանց ընկերությունների նկատմամբ:

3. Ռոբինսոն-Պատմանի օրենքը (1936թ.) արգելում էր առևտրի բնագավառում մրցակցության սահմանափակման պրակտիկան, «զների կորուստը», զնային խտրականությունները և այլն:

1950թ. ընդունվեց Քլեյթոնի օրենքի Սելեր-Կոֆոլերի ուղղումը, ուր պարզաբանվում էր անօրինական սերտաճման հասկացությունը:

Այսպես, արգելվում էր միաձուլումը ակտիվների գնման ճանապարհով: Եթե Զլեյթոնի օրենքով պատմե՜լ էր դրվում խոշոր ֆիրմաների հորիզոնական միաձուլմանը, ապա այդ ուղղումը սահմանափակում էր ուղղահայաց միաձուլումը:

Հակամենաշնորհային քաղաքականությամբ ԱՄՆ-ում զբաղվում է Կոնգրեսը, դաշնային և տեղական դատարանները, ինչպես նաև գործադիր իշխանության մարմինները, մասնավորապես Արդարադատության նախարարությունը և Դաշնային առևտրային հանձնաժողովը, որն ստեղծվել է դեռևս 1914 թվականին: Սակայն հակամենաշնորհային կարգավորման հիմնական աշխատանքը կատարում է Արդարադատության նախարարության հակատրեստային վարչությունը, որը լիազորված է դատական գործ հարուցել այն տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, որոնք խախտում են հակամենաշնորհային օրենսդրությունը:

ԱՄՆ-ի հակամենաշնորհային օրենսդրության հիմնական առանձնահատկությունը մենաշնորհների, որպես այդպիսիների, արգելման սկզբունքի մեջ է, այսինքն՝ սկզբնապես դրանք օրենքից դուրս ճանաչման մեջ են, այն դեպքում, երբ արևմտաեվրոպական հակամենաշնորհային օրենսդրությունը բացասական հետևանքների վերացման ուղիով կառուցվում էր մենաշնորհային գործընթացի կարգավորման սկզբունքի վրա: Բայց շուտով ԱՄՆ-ում դատական պրակտիկան որդեգրեց այնպիսի գործիք, որի միջոցով ցանկացած մենաշնորհի արգելման կոշտ կանոնը մեղմացվեց: Այդպիսի գործիք դարձավ «խելամտության կանոնը»՝ հաստատված 1911թ. ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից: Գերագույն դատարանը որոշում կայացրեց, որ Շերմանի օրենքը հիմնվում է առևտրի սահմանափակման ընդհանուր իրավունքի դոկտրինաների վրա և որ այն պետք է մեկնաբանվի միայն այն սահմանափակումների արգելման օգտին, որոնք կարելի է դասակարգել որպես «ոչ խելամիտ»:

Կախված տարբեր գործոններից՝ հակատրեստային կարգավորման վարչակարգը ժամանակ առ ժամանակ ենթարկվում է փոփոխությունների (մեղմացում կամ խստացում), մասնավորապես, որոշակի իշխանության գալու հետ կապված տնտեսական քաղաքականության փոփոխման, ինչպես նաև մասնավոր հատվածի գործունեության մեջ պետության միջամտության թուլացման կամ ուժեղացման պատճառով:

ԱՄՆ-ում մենաշնորհացման հետ կապված առավել արմատական պատիժը ձեռնարկության կազմալուծումն է: Հակատրեստային օրենսդրության խախտման վերաբերյալ գործերի մեծ մասում վճռական նշանակություն է ստանում մենաշնորհային իշխանության առկայության ապացույցը: Ընդ որում, մենաշնորհային իշխանությունը մեկնաբանվում է որպես այս կամ այն ձեռնարկության կողմից գների վերահսկման կարողություն: Ֆիրման, որը շուկայում միակը չէ, կարող է օգտվել մենաշնորհային իշխանությունից (օրինակ՝ այլ առաջատար

արտադրողների հետ համաձայնության գալով) կամ, հակառակը, ձեռնարկությունը, որի արտադրանքն ապահովում է ամբողջ շուկան, օժտված չէ մենաշնորհային իշխանությամբ, եթե սպառողն ունի փոխարինող արտադրանքի ընտրության հնարավորություն, կամ էլ այդ բնագավառը համեմատաբար մատչելի է նոր հնարավոր արտադրողների համար: Հետաքրքիր է այն, որով ԱՄՆ-ում որոշվում է համատեղ գերիշխման փաստը. մեկ ընկերության համար շուկայի մասնաբաժնի 33%-ի տիրապետությունը, երեքի համար՝ 50%-ի, հինգի համար՝ 66,6%-ի: Նշենք, որ ՀՀ հակամենաշնորհային օրենսդրությունում համատեղ գերիշխման մասին դրույթ բացակայում է, սակայն վերջինս մեծ կարևորություն ունի մենաշնորհային իշխանության բացահայտման գործընթացում:

Հակատրեստային գործերում կարևոր տեղ են հատկացվում ձեռնարկությունների միաձուլման հարցերին: Այօրինի են համարվում այն միաձուլումները, որոնք տանում են մրցակցության թուլացմանը կամ մենաշնորհի ստեղծմանը: Առավել հաճախ նման որակավորումով հանդես են գալիս հորիզոնական միաձուլումները:

Հակատրեստային գործերի ամենամեծ թիվն ուղղված է ձեռնարկությունների միասնական շուկայական քաղաքականության վարման պայմանավորվածությունների դեմ: Այդ դեպքում, պատիժը, սովորաբար, ավելի խիստ է, քան ձեռնարկությունների միակողմանի մենաշնորհային գործունեության դեպքում: Նման հակաօրինական համաձայնությունների մեջ առաջին հերթին առանձնանում են կարտելային համաձայնությունները, օրինակ՝ միասնական գների գրանցման, մրցակցությունը նվազագույնի հասցնելու նպատակով շուկայի տարածքային կամ այլ ձևերով բաժանման, բոյկոտի մասին, այսինքն մի խումբ արտադրողների կողմից նույն մատակարարի հետ գործերը վաճառելու կոլեկտիվի հրաժարվելը:

Չարգացած մյուս երկրներում նույնպես ընդունվել են հակամենաշնորհային օրենքներ՝ չնայած այլ անվանումների: Դրանցից են Մեծ Բրիտանիայում՝ «Արդարացի առևտրի մասին» և «Սահմանափակիչ առևտրի մասին» օրենքները, Ֆրանսիայում՝ «Մրցակցության մասին» օրենքը, որի հետ հարադրվում են «Տնտեսական համակենտրոնացման վերահսկողության մասին» օրենքը և «Գների մասին» որոշումը, Գերմանիայում՝ «Մրցակցության սահմանափակման մասին» օրենքը, ճապոնիայում՝ Հակամենաշնորհային օրենքը, Շվեյցարիայում՝ «Կարտելների մասին» դաշնային օրենքը [2, c. 92]:

Թեև արևմտյան երկրների հակամենաշնորհային օրենքներն հիմնականում կրկնում են ամերիկյան հակատրեստային օրենսդրության սկզբունքներն ու գաղափարները, սակայն դրանք բովանդակում են նաև էական տարբերություններ: Դրանցից ամենակարևորը մենաշնորհ գործունեությանն առավել ազատական վերաբերմունք ցուցաբերելն է: Այսպես, Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների հակամենաշնորհային օրենքներում, ինչպես նաև ճապոնիայում, պետությանն իրավունք

է տրված որոշակի ժամանակաշրջանում թույլատրել այս կամ այն ճյուղի կարտելային համաձայնությունը (այդ երկրներում տվյալ բնագավառում տնտեսական իրադրությունը լավացնելու նպատակով): Ավելի շատ տարբերություններ են բացահայտվում գործնականում՝ կապված հակամենաշնորհային օրենքների հետ: Հակամենաշնորհային բնույթի վիճահարույց գործերում ճապոնիայում բացահայտորեն հետևում են այն օրինաչափությանը, ըստ որի լուծումը պետք է գտնել ոչ թե դատական գործընթացում, այլ պետական մարմինների միջոցով:

Այդպիսի տարբերությունների պատճառը երկակի է: Եվ՝ Արևմտյան Եվրոպայում, և՛ ճապոնիայում մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը տիրապետում էին մենաշնորհային կազմակերպությունները (կարտել, սինդիկատ) և դրանց գործունեությունը պաշտպանող օրենքները: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ամերիկյան մոդելով ընդունելով հակամենաշնորհային օրենքներ, այդ երկրները, այնուհանդերձ, մասամբ հավատարիմ են մնացել իրենց պատմական ավանդություններին: Օրինակ՝ ճապոնիայում, որտեղ ուժեղ է պետականության ոգին, մենաշնորհ գործունեության հետ կապված, բոլոր վեճերը և տարաձայնությունները կառավարությունը պահում է իր հսկողության ներքո: Երկրորդ պատճառը, որ լայն տարածում է գտել ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ ճապոնիայում, այն համոզմունքն է, որ հակամենաշնորհային օրենքների հաստատական կատարումը կարող է բերել նրանց տնտեսության արդյունավետության թուլացմանը՝ ի տարբերություն ԱՄՆ-ի: Ուստի ձևականորեն պաշտպանելով հակամենաշնորհային օրենքի տառը և՛ Արևմտյան Եվրոպայի երկրներում, և՛ ճապոնիայում առավել համբերությամբ են վերաբերվում մենաշնորհային գործունեությանը:

Եվրոպական համակարգի արտոնագրային օրենսդրությամբ երկրի վառ օրինակ է Մեծ Բրիտանիան: Ընդհանուր առմամբ, այդ երկրի օրենսդրությունն ամերիկյան հակատրեստային օրենսդրությունից ավելի ազատական է: Երկրում մենաշնորհացման գործընթացների իրավական կարգավորման կատարելագործման փորձի արդյունք էր 1980թ. «Մրցակցության մասին» օրենքի մշակումը և ընդունումը: Սակայն, ընդհանուր առմամբ այդ օրենքի հետ կապված սպասումները չարդարացան, քանի որ հակամրցակցային գործընթացի վերահսկումը չդարձավ ավելի օպերատիվ և չավելացրեց դիտարկվող գործերի քանակությունը [3, p. 521]:

Նշենք, որ Մեծ Բրիտանիայում առավել բարդ է մենաշնորհային գործունեության պետական հսկողության վիճակը: Մեծ Բրիտանիայի հակամենաշնորհային օրենսդրության զարգացման առանձնահատկությունները բերեցին մենաշնորհների վերահսկման երկու համակարգերի ստեղծմանը: Նրանցից առաջինում, որը հիմնված «Բարեխիղճ առևտրի» և «Մրցակցության մասին» օրենքների վրա, գլխավոր դեր են խաղում Բարեխիղճ առևտրի գերատեսչությունը, Մենաշնորհների հանձնաժողովը, Առևտրի և արդյունաբերության պետական քարտու-

ղարը: Երկրորդ վերահսկման համակարգը, որը նախատեսված է Սահմանափակիչ առևտրային պրակտիկայի օրենսդրությամբ, գլխավոր դերը հատկացնում է Սահմանափակիչ պրակտիկայի գծով դատարանին: Բարեխիղճ առևտրի գերատեսչությունը պահպանում է չարաշահումների վերաբերյալ տարբեր տեղեկություններ, տեղեկացնում է կառավարությանն որոշումների մասին և անհրաժեշտության դեպքում ձեռնարկում է հետևյալ գործողությունները՝ փոխանցում է որևէ բնագավառի մենաշնորհային իրավիճակի մասին գործերը Մենաշնորհների հանձնաժողով, իրականացնում է ընկերությունների հնարավոր միաձուլումների հսկողություն, փոխանցում է կարտելային պայմանավորվածությունների մասին գործերը Սահմանափակիչ պրակտիկայի դատարանին, հարուցում է գործեր վերավաճառքային գների սահմանման և պահպանման կապակցությամբ: Հարկ է նշել նաև, որ մրցակցային քաղաքականության որոշման բնագավառում գերատեսչության գործունեությունը կրում է խորհրդատվական բնույթ:

Մենաշնորհների և միաձուլումների հանձնաժողովի հիմնական խնդիրը կայանում է հետազոտության անցկացման և հաշվետվությունների կազմման մեջ՝ մենաշնորհային իրավիճակի առկայության (կամ առաջացման հնարավորության) կամ ընկերությունների միաձուլման իրականացման կապակցությամբ: Այն դեպքում, երբ Մենաշնորհների հանձնաժողովը հանգի հասարակական շահերի խախտման մասին եզրակացության, ապա պետական քարտուղարն ունի իրավախախտի վրա ներագդելու տարբեր միջոցառումների կիրառման լայն իրավասություններ՝ պայմանագրի գործողության դադարեցման, ապրանքների մատակարարման արգելման, կապակցող գործարքների, խտրականության, միաձուլումների սահմանափակման կամ արգելման, ինչպես նաև ընկերությունների բաժանման մասին՝ նրանց որևէ մասերի վաճառքի ձևով կամ որևէ այլ ձևով որոշումների կայացման ուղիով: Մենաշնորհների և մրցակցության կարգավորման գործում շատ մեծ է Մեծ Բրիտանիայի առևտրի և արդյունաբերության պետական քարտուղարի դերը: Քանի որ Մենաշնորհների հանձնաժողովի հաշվետվությունների եզրակացությունները կրում են խորհրդատվական բնույթ, ապա մենաշնորհային իրավիճակների կամ հակամրցակցային պրակտիկայի գծով վերջնական որոշումներն իրականացվում են պետական քարտուղարի կամ այլ նախարարների կողմից: Բացի այդ, համապատասխան կարտելային պայմանագրերի տնտեսական աննշանակալիության հիման վրա պետական քարտուղարն օժտված է սահմանափակիչ առևտրային պրակտիկայի մասին օրենսդրության գործունեությունից բացառությունների տրամադրման իրավասություններով [4, c. 23]:

Ինչ վերաբերում է Ֆրանսիայի հակամենաշնորհային օրենսդրությանը, հարկ է նշել, որ 1977թ. հուլիսի 19-ին ընդունված Մրցակցության օրենքից հետո հակամենաշնորհային օրենսդրության մեջ նշմարվեցին խորը փոփոխություններ: Այսպես, ելնելով այդ օրենքի պահանջներից, խստացվեցին արգելված կարտելների և շուկայում գերիշխող դիրքով

չարաշահումների նկատմամբ պատժամիջոցները, առաջին անգամ կազմակերպվեց արտադրության համակենտրոնացման վերահսկողություն: 1986թ. ընդունվեց նոր հակամենաշնորհային օրենսդրություն, որն էապես տարբերվում էր նախկինում ընդունվածից: Դրա էությունը կարելի է հասկանալ, եթե ելնենք երկրի տնտեսական կյանքի մեջ պետական միջամտությունից և, մասնավորապես, գների պետական կարգավորման հանգամանքից: Ֆրանսիայի տնտեսական քաղաքականության մեջ շրջադարձային դարձավ պետության կողմից տնտեսական միջամտությունից հրաժարվելը՝ չնայած բազմաթիվ վերապահումներին [5, p. 99-103]:

Ֆրանսիայում մենաշնորհային գործունեության հսկողությունը դրված է մրցակցության հարցերով զբաղվող Խորհրդի, Էկոնոմիկայի նախարարության և Ընդհանուր իրավասության դատարանների վրա: Մրցակցության հարցերով զբաղվող Խորհուրդը, որը կազմված է 16 անդամից, համարվում է անկախ վարչական մարմին, որի որոշումների վրա Էկոնոմիկայի նախարարը չի կարող «արգելանք» դնել: Այն տարբեր կազմակերպությունների և հաստատությունների պատվերով իրականացնում է խորհրդատվական գործառնություններ, իսկ որոշակի դեպքերում ինքն է կիրառում համապատասխան պատժամիջոցներ: Ֆրանսիայում մենաշնորհային պրակտիկայի հսկողության կարևոր բաղկացուցիչ մաս է շուկայում տնտեսական համակենտրոնացման ստուգումը: Էկոնոմիկայի նախարարի նախաձեռնությամբ Մրցակցության հարցերով զբաղվող Խորհուրդը կարող է ստուգել ցանկացած համակենտրոնացման մասին նախագիծ կամ ընկերությունների ցանկացած համակենտրոնացում, որը կարող է մրցակցությանը վնաս հասցնել, մասնավորապես, շուկայում գերիշխող դիրքի ստեղծումը կամ ուժեղացումը:

Գերմանիայի հակամենաշնորհային օրենսդրությունը միջանկյալ դիրք է գրավում վերոնշյալ հակամենաշնորհային օրենսդրությունների երկու համակարգերի միջև: Գերմանիայի հակամենաշնորհային օրենսդրության զարգացման համար նշանակալի խթան էր հետպատերազմյան ժամանակաշրջանում ազատ շուկայական տնտեսության հաստատումը: 1957թ. ընդունվեց «Մրցակցության սահմանափակումների դեմ» օրենքը, որը փոխարինեց 1947 թվականի դաշնակիցների ապակարտելացման հրահանգին և ստացավ «Կարտելային օրենք» անվանումը, որն այնքան էլ ճիշտ չի արտահայտում դրա բովանդակությունը: Այն կոչված է սահմանափակելու մրցակցության սահմանափակումները ոչ միայն կարտելների ձևով, այլև կողմերի միջև արգելում էր մրցակցության սահմանափակումները, ինչպես նաև ապրանքների (ծառայությունների) արտադրությանը կամ շուկայական պայմաններին վերաբերվող պայմանավորվածությունները: Յետագա տարիներին այդ օրենքում կատարվեցին փոփոխություններ, որոնք հիմնականում վերաբերում էին փոքր ֆիրմաների մասնագիտացված կարտելների հակամենաշնորհային ազատականացմանը, խոշոր ֆիրմաների միաձուլումների նկատմամբ վերահսկողությանը, շուկայական տիրապետու-



յան դիրքի իրավական մեկնաբանմանը, ուղղահայաց և կոնգլոմերատային միաձուլումների նկատմամբ վերահսկողության նոր չափանիշների սահմանմանը և այլն: Ընդհանուր առմամբ, Գերմանիայի «Կարտելային օրենքը» հիմնվում է երկու սկզբունքի վրա՝ արգելման և մենաշնորհ գործունեության կարգավորման ու վերահսկման [6, p. 196]:

Ինչպես ԱՄՆ-ում, «Կարտելների օրենքն» արգելում է համաձայնությունների որոշակի կատեգորիա, օրինակ՝ կարտելային պայմանագրերը և կարտելային համաձայնությունները: Եթե Շերմանի օրենքն առևտուրը սահմանափակող ցանկացած պայմանավորվածություն հայտարարում է անօրինական, ապա «Կարտելային օրենքն» անվավեր է ճանաչում կարտելային պայմանագրերը և համաձայնությունները: Բացի այդ, ի տարբերություն հորիզոնական մրցակցային սահմանափակումների, ուղղահայաց սահմանափակումները ձևականորեն չեն արգելվում: Դրանք հակամրցակցային գործընթացի կանխարգելման նպատակով ենթակա են վարչական վերահսկողության:

Գերմանիայում մենաշնորհային հարաբերությունների պետական կարգավորմամբ զբաղվում են այսպես կոչված կարտելների գործերով զբաղվող մարմինները: Դրանցից է կարտելների հետ կապված գործերի դաշնային գերատեսչությունը, որը 1958թ. ստեղծվել է Գերմանիայում ընկերությունների համակենտրոնացման մասին եզրակացությունների տրամադրման նպատակով: Կարտելների գործերով զբաղվող մարմինները կարող են ընկերությունների, կարտելների, արդյունաբերական և մասնագիտական միությունների նկատմամբ անցկացնել վարչական տույժերի գանձում կամ իրականացնել հետախուզություն: Վարչական գործավարության ընթացքում, մասնավորապես, որոշվում են կարտելային պայմանագրերի թույլտվության կամ արգելման հարցերը, ընկերությունների միաձուլման մասին պայմանագրերի անվավեր ճանաչումը, ընկերությունների շուկայում տիրապետող դիրք գրավողների անօրինական վարքի արգելումը: Հարկ է նշել, որ հակամենաշնորհային տեսչությունները օժտված են հետախուզական լիազորություններով՝ առանձին ստուգումների անցկացումից մինչև համապատասխան ընկերություններ մուտք գործելու թույլտվությամբ: Այդ տեսչությունների կարգադրությունները կարող են զանգատարկվել դաշնային Գերագույն դատարանում, որտեղ ստեղծված է կարտելային գործերով հանձնաժողով:

Կարելի է եզրակացնել, որ դիտարկվող երկրներում հակամենաշնորհային քաղաքականության անցկացումը և հակամենաշնորհային օրենսդրությունը լայն զարգացում են ստացել, իսկ ամենակարևորը, որ մենաշնորհների և դրանց բացասական հետևանքների հսկողության համակարգը հաջող է գործում երկար տարիների ընթացքում: Այստեղ էլ կան բացասական գործոններ, օրինակ՝ մենաշնորհների ընդհանուր արգելքի անսասանության խախտումը՝ այդ արգելքից բացառությունների սահմանման ուղիով, որոնք տարածվում են ինչպես առանձին ընկերությունների, այնպես էլ ողջ բնագավառների վրա: Ամեն դեպ-

քում, մեր կարծիքով, ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի երկրների հակամենաշնորհային օրենսդրությունները, չնայած սկզբունքորեն որոշ հարցերում տարբերվում են միմյանցից, մանրազնին մտածված և տնտեսապես հիմնավորված են:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի տնտեսության հակամենաշնորհային կարգավորմանը, անհրաժեշտ է նշել, որ հակամենաշնորհային օրենսդրության ստեղծման առաջին փորձը ձեռնարկվել է 1908թ.՝ ԱՄՆ-ում ընդունված Շերմանի օրենքի հիման վրա: Սակայն վերջինս մեծ աղմուկ բարձրացրեց ռուսաստանցի խոշոր ձեռնարկատերերի շրջանակներում և նրանք կարողացան կասեցնել դրա ընդունումը:

ՌԴ-ում հակամենաշնորհային օրենսդրությունը կայացավ միայն 1991թ., երբ ընդունվեց «Մրցակցության և ապրանքային շուկաներում մենաշնորհային գործունեության սահմանափակման մասին» օրենքը: Այդ օրենքում սահմանվեցին հետևյալ հիմնական դրույթները՝

- ♦ արգելվում են գերիշխող դիրք զբաղեցնող ընկերությունների գործողությունները, եթե վերջիններիս արդյունքում տեղի է ունենում մրցակցության սահմանափակում և շուկայի այլ մասնակիցների շահերի արգելափակում, այդ թվում՝ առանձին քաղաքացիների,

- ♦ արգելվում են գների վերաբերյալ մենաշնորհային համաձայնությունները, պակասորդի պահպանման նպատակով շուկայից ապրանքների դուրսմղումը, շուկայի բաժանումը, մրցակցող ֆիրմաների՝ շուկա ներթափանցման հնարավորությունների սահմանափակման փորձերը, անբարեխիղճ մրցակցության դրսևորումները,

- ♦ մենաշնորհների գործունեության վերահսկողությունը իրականացնում է հակամենաշնորհային քաղաքականության բնագավառում լիազորված պետական մարմինը, ընդ որում օրենսդրության խախտման դեպքում լիազոր մարմինը իրավունք ունի չեղյալ համարել յուրաքանչյուր տնտեսական պայմանավորվածություն և այլն [4, c. 61]:

Ներկայումս ՌԴ-ում նախապատրաստվում է «Մրցակցության մասին» օրենքի նոր նախագիծը: Վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորված էր հակամենաշնորհային օրենսդրության կատարելագործման և այն ՌԴ արդի տնտեսական իրականությանը համապատասխանեցման հրամայականով: «Մրցակցության մասին» նոր օրենքը կարգավորելու է նաև մրցակցության տեսանկյունից պետական գնումների և պետական օժանդակության հետ կապված հիմնահարցերը՝ մեծ քանակությամբ փոփոխություններ նախատեսելով հակամենաշնորհային օրենսդրության գրեթե բոլոր բնագավառներում:

Որպես հակամենաշնորհային կարգավորման ոլորտում պետական լիազոր մարմին՝ 1999թ. ՌԴ-ում ստեղծվեց Հակամենաշնորհային քաղաքականության և ձեռնարկատիրության աջակցման նախարարությունը, որը 2004թ. վերակազմակերպվեց Հակամենաշնորհային դաշնային ծառայության:

Ամփոփելով՝ նշենք, որ Հայաստանում տնտեսության հակամենաշնորհային կարգավորման կատարելագործման ընթացքում կարող

են օգտագործվել արդյունաբերական զարգացած երկրների հակամենաշնորհային կարգավորման փորձը՝ հաշվի առնելով տնտեսության անցումային շրջանի առանձնահատկությունները: Մեր կարծիքով, այդ ուղղությամբ ուշադրություն պետք է դարձնել ԱՄՆ-ի՝ ավելի քան մեկ դարյա ու ՌԴ-ի՝ դեռևս «նոր» կազմավորված հակամենաշնորհային կարգավորման փորձին և զարգացած այլ երկրների հակամենաշնորհային պրակտիկային:

Բայց այստեղ ևս ծագում է հիմնահարց: Տասնամյակներ շարունակ ձևավորված ոլորտի մենաշնորհը չի կարող արագորեն փոխվել ազատ և ինքնակազմակերպվող շուկայի, քանի որ մրցակցային հարաբերությունների հաստատումը վայրկենական գործ չէ, այլ երկար, բարդ գործընթաց, իսկ ոչ քիչ թվով ընկերությունների համար՝ կործանարար: Գոյատևել կկարողանան միայն այն ընկերությունները, որոնք կապահովեն ապրանքի, ծառայության ավելի բարձր որակ, հարաբերականորեն ավելի ցածր գներ և տեսականու արագ փոփոխություն:

## ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Мозолин В., Кулагин М.**, Гражданское и торговое право капиталистических стран, М., ИНФРА, 1980.
2. **Никитин С., Глазова Е.**, Государство и проблема монополии, Мировая экономика и международные отношения, 1994, № 7.
3. **Klein J.**, Competition and the Per Se Debate. Antitrust Bulletin, 1989, 89 p.
4. **Бутыркин А. Я.**, Теория и практика антимонопольного регулирования в ведущих странах Запада и России, М., Новый Век, 2004.
5. OECD Competition policy in OECD countries 1987-1988. Paris, 1989.
6. **Kantzenbach E.**, Competition policy in West Germany: A comparison with the antitrust policy of the United States, in Comanor and Jacquemin (eds.), Competition policy in Europe and North America: Economic issues and institutions, Chur and London, 1990.
7. **Качалин В. В.**, Система антимонопольной защиты общества в США, М., Наука, 1997г., с. 271.
8. **Спирidonov И. А.**, Международная конкуренция и пути повышения конкурентноспособности экономики России: Учебное пособие, М., ИНФРА, 1997г.

**ARMAN GRIGORYAN**

*Assistant of the Chair of Public  
Administration and Public Finance  
of the PAA of the RA,  
Doctor of Economics*

## **INTERNATIONAL PRACTICE OF ANTIMONOPOLY REGULATION OF ECONOMY**

The article is devoted to the investigation of the international practice of antimonopoly regulation. The practice of antimonopoly regulation of industrial developed countries can be used during the improvement of antimonopoly regulation of economy in Armenia taking into consideration the peculiarities of the economy's transition period. In this regard, special attention should be paid to the practice of antimonopoly regulation of USA having more than one century history and those of still "new" formulated of Russian Federation as well as to antimonopoly practice of other developed countries.

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ ՊԿԱ քաղաքագիտության ամբիոնի վարիչ,  
քաղաքական գիտությունների դոկտոր

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ**

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո հետխորհրդային տարածքների հանրային քաղաքականության ձևավորման, մշակման, իրականացման և բնականոն արդիականացման գործընթացը քաղաքական գիտության կողմից ուսումնասիրվում է **բազմակարծության (այլուրալիստական), կորպորատիվիստական և ցանցային** մոտեցումների հիման վրա: Նրանց միջև տարբերությունների քննարկման ելակետ է հանրային քաղաքականության բազմաշերտությունն արտահայտող պետության ու հասարակության փոխգործակցության հետազոտման հետևյալ հայեցակարգերը՝

**Բազմակարծության հայեցակարգը** հանրային քաղաքականությունը դիտարկում է իշխանության իրականացման նկատառումներով՝ իբրև տարբեր շահեր ունեցող խմբերի և կառավարության միջև որոշակի փոխհարաբերությունների առկայություն: Անցումագետ Ֆ.Շմիտերը, ուսումնասիրելով տրոհված քաղաքական դաշտերի դերակատարներին, առաջարկեց բազմակարծության հետևյալ սահմանումը. «Բազմակարծությունը շահերի ներկայացման այնպիսի համակարգ է, որի բաղադրատարրերը կազմակերպված են բարդ, կամավոր, մրցակցող, ոչ ստորադաս և ինքնակազմակերպվող այնպիսի անորոշ կազմավորումների բազմության մեջ, որոնց պետությունը միտումնավոր չի օժանդակում կամ վերահսկում, և դրանք համապատասխան կազմավորումների շրջանում ներկայացուցչական գործունեության մեծաշնորհի չեն ձգտում» [1, p. 85-86]: Տվյալ մոտեցման դեպքում հանրային քաղաքականությունն ենթադրում է կառավարության կողմից շահային խմբերի ճնշման տակ ռեսուրսների բաշխում՝ հանրային քաղաքականության մշակման ակտիվ դերակատարների կողմից, պետությունը, ի դեմս կառավարության, կատարում է շահային խմբերի գործունեությանն արձագանքելու գործառույթ: Կառավարությունը որոշակի ժամանակահատվածում ապահովում է շահերի հավասարակշռությունը՝ որոշում ընդունելով շահերի և ռեսուրսների զուգամիտման վերաբերյալ: Փաստորեն բազմակարծությունը, ավելի շատ ուշադրություն սևեռելով կառավարության, քան պետության վրա, միակողմանի է, քանի որ հաշվի չի առնում մի շատ կարևոր հանգամանք. պետության կողմից քաղա-

քական գործունեության մասնակիցներն ունեն իրենց սեփական շահերը, որոնք ներգրավվում են հանրային քաղաքականության մշակման գործընթացում: Հետևաբար, բազմակարծության մոտեցումը թույլ չի տալիս հետազոտել հանրային քաղաքականությունը՝ որպես պետության և հասարակության փոխկապակցված հարաբերությունների համակարգ, պետությունը ոչ թե լոկ ճնշման խմբերի մարտահրավերներին պատասխանող դերակատար է, այլ համագործակցության ակտիվ մասնակից:

**Կորպորատիվիստական հայեցակարգը**, ի հակադրություն բազմակարծության, յուրովի է լուծում հասարակական շահերի և պետական կառույցների միջև փոխհարաբերությունների հիմնախնդիրը: Հակառակ բազմակարծության, կորպորատիվիզմը պետությունը դիտարկում է որպես շահային խմբերի և հանրային քաղաքականության միջև հարաբերությունների կարևորագույն սահմանադիր տարր: Կորպորատիվիստական հայեցակարգը, համաձայն Ֆ. Շմիտտերի, քաղաքականության մեջ գործում է որպես **եզակի, հարկադրական, չմրցակցող, աստիճանակարգված և գործառականորեն տարբեր** կազմավորումների սահմանափակ քանակ, որին պետությունը հավանություն է տալիս կամ արտոնագրում: Արդյունքում նրանք ձգտում են համապատասխան ոլորտում շահերի ներկայացման մենաշնորհի [1, ք. 93-94]: Այստեղ հիմնական ուշադրությունը բևեռվում է հանրային քաղաքականության համապատասխան ոլորտում շահերի արտահայտման գործընթացում պետության հետ սերտորեն կապված, մենաշնորհված տնտեսական խմբերի վրա, որոնք պետության վրա ազդեցություն գործելու նկատառումներով նրան աջակցում են՝ նրան փոխարենն ստանալով քաղաքական որոշումների կայացմանը մասնակցելու իրավունք: Մինչդեռ կորպորատիվ ժողովրդավարությանը [2] նվիրված գրականության մեջ իրենց գործարարությամբ և կատարած աշխատանքով կարևորվում են առավել ազդեցիկ այն խմբերը, որոնք իրենց հարաբերությունները պետության հետ ցանկանում են կառուցել երկխոսության հիման վրա: Նկատի պետք է ունենալ, որ պետության կենտրոնական դերը, ինչպես ընդունված է կորպորատիվիզմում, հարաբերությունների գլոբալացման ու պետության իշխանական գործառույթների ապակենտրոնացման պայմաններում որոշ առումներով դրսևորվում է պետական իշխանության լեգիտիմության հասկացության պահպանողական գործառույթով: Պետության և կորպորացիաների միջև առկա կապը, քաղաքական ցանցերի տեսաբանների համոզմամբ, պատկերացում է ձևավորում այն մասին, թե հանրային քաղաքականությունն ու քաղաքական գործընթացը ձևավորվում են պետական-կորպորատիվ կոշտ փոխհամաձայնության շրջանակներում:

**Ցանցային հայեցակարգը** հանրային քաղաքականության և կառավարման նկատմամբ իր ռազմավարությունը կառուցում է՝ ելնելով պետության ու հասարակության, հասարակական կյանքի հանրային ու մասնավոր բնագավառների միջև փոխհարաբերությունների նոր բնույ-

թից: Ռ.Ռոդեսը, վերլուծելով ժամանակակից հանրային քաղաքականությունը և պետական կառավարումը Մեծ Բրիտանիայում, նշում է, որ վերջին քսան տարվա ընթացքում քաղաքական համակարգն այստեղ արդեն չի կարող արտահայտել այն, ինչով առաջ բնորոշվում էր այսպես կոչված «Վեսթմինսթերյան ձևաչափ (Westminster Model)»՝ հիմնված *ուժեղ կառավարության, խորհրդարանական ինքնիշխանության, «Իր թագավորական գերազանցության ընդդիմության» և նախարարական պատասխանատվության վրա:* «Վեսթմինսթերյան ձևաչափի» օգնությամբ հնարավոր է բրիտանական քաղաքական համակարգը դիտարկել որպես խճանկարների ամբողջություն, որին բնորոշ է պատմության հոլովությունը ձևավորված սոցիալական փոխկախվածությունը, հատվածավորված գործադիր իշխանությունը, ինքնակառավարվող քաղաքական ցանցերով և պետության դերի աստիճանական նվազումը [3]:

### **1.1. Քաղաքական ցանցերի դերակատարները**

«Քաղաքական ցանց» հասկացությունը ներկայացնում է ցանցը կազմող մասնակիցների և նրանց միջև հարաբերությունների բնույթը: Ի տարբերություն «համակարգ» կամ «կառուցվածք» հասկացությունների՝ այստեղ շեշտադրվում է քաղաքական որոշումը ձևավորող ու դրա կատարմանը մասնակցող դերակատարների (կառավարող ընտրանի, ճնշման խմբեր) գիտակցված փոխհամագործակցությունը: Ելակետ ընդունելով այն, որ ցանցերը հանրային և քաղաքական կառավարման նոր ձևեր են, անդրադառնանք մի քանի դատողությունների:

Համաձայն Ռ. Ռոդեսի՝ քաղաքական ցանցերը ձևավորվում են ժամանակակից պետության քաղաքականության տարբեր ոլորտներում (առողջապահություն, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, կրթություն և այլն) և դրանք պետության ու հասարակության քաղաքական ինստիտուտների միջև կառուցվածքային փոխհարաբերությունների համալիր են: Ընդգծելով քաղաքական ցանցի ինստիտուցիոնալ բաղադրատարրի նշանակությունը և որոշակի հատվածային շահերով դրա սահմանափակվածությունը՝ Ռ. Ռոդեսը հանրային քաղաքականության ձևավորման, մշակման, իրականացման և բնականոն արդիականացման գործընթացում կարևորում է ցանցի անդամների միջև ռեսուրսների փոխանակման կառուցակարգը [4, p. 10-13]:

Ելակետ ընդունելով Ռ. Ռոդեսի մոտեցումները՝ կարելի է տալ քաղաքական ցանցի հետևյալ սահմանումը. քաղաքական ցանցը իր բնույթով ոչ աստիճանակարգված ու փոխկապակցված, հարաբերականորեն կայուն բազմազան դերակատարներ ենթադրող փոխայնանավորվածությունների համակարգ է: Որպես այդպիսին՝ այն կիսում է հանրային քաղաքականության վերաբերյալ ընդհանուր շահերը և այդ շահերն առաջ տանելու ռեսուրսներ է փոխանակում՝ ընդունելով, որ

համագործակցությունը լավագույն միջոցն է ընդհանուր նպատակների հասնելու համար: Մեր համոզմամբ հասարակական համակարգի հետխորհրդային կերպավորման գործընթացում ձևավորված սոցիալական տրոհված և բևեռացված դաշտերի պարագայում այս սահմանունը հնարավորություն է տալիս փաստել, որ քաղաքական ցանցի մասնակիցները հետամուտ են ոչ թե մասնակի, այլ ընդհանուր նպատակների, և դրանց հասնելու համար էլ գործունեության համագործակցային ձևեր են փնտրում: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այսպիսի պայմաններում քաղաքական ընտրանին ստիպված է իր դերակատարման ընթացքում ընդունել այլ դերակատարների՝ բանակցելով և երկխոսություն վարելով նրանց հետ, «լավ կառավարում» (good governance) իրականացնելու համար:

«Քաղաքական ցանցերի համեմատում. հանրային քաղաքականությունը աշխատանքի ոլորտում ԱՄՆ-ում, Գերմանիայում և ճապոնիայում» գրքի հեղինակները քաղաքական որոշումների կայացման տարբեր մասնակիցների միջև ծագող հարաբերությունները նկարագրելու համար օգտագործում են «կազմակերպչական պետություն» հասկացությունը: «Կազմակերպչական պետությունն ունի որոշումներ կայացնելու պաշտոնական ու ոչ պաշտոնական իշխանությունը, որը տնօրինվում է պետության և հասարակության կողմից»: Քննարկվող գրքի հեղինակներն առաջարկում են հանրային քաղաքականությունը դիտարկել որպես «բարդ սոցիալական կառուցվածք, որի շրջանակներում կայացվում են հավաքականորեն կապակցված որոշումներ՝ դերակատարների փոխադարձ պայմանավորվածության առկայությամբ, իսկ պոլիարխիկ բնույթով ընտրանին հնարավորություն չի տալիս քաղաքական և տնտեսական ոլորտներում գաղտնի համաձայնագրեր կնքելու» [4, p. 3]: Փաստորեն, այս պարագայում հանրային քաղաքականությունն իր կառուցվածքային տարրերով՝ *քաղաքական դերակատարներ, քաղաքական շահեր և համատեղ գրադեցրած դիրքեր*, միասնաբար է հանդես գալիս:

Այս իմաստով ցանցերը պետք է ներառեն միջդերակատարային համագործակցային դրույթներ, ծրագրային կառավարման միջկառավարական կառույցներ, համաձայնագրերի բարդ բազմություն, պետական և մասնավոր գործընկերություն: Դրանք նաև ընդգրկում են ապահովողների (պրովայդերների) համալիրի վրա հիմնված տարաբնույթ ծառայությունների մատուցման համակարգերը: Այս պարագայում քաղաքական որոշումների կայացման հետ կապված հնարավորություն ենք ստանում տարբերակում անցկացնել ցանցի դերակատարների (տարրերի) և այդ որոշումների հիման վրա ծառայություններ մատուցող տարրերի միջև: Այսպիսով՝ քաղաքական ցանցերն օժտված են մի շարք բնութագրումներով, որոնք նրանց տարբերում են հանրային պահանջների ու շահերի ոլորտում կառավարչական գործունեության այլ ձևերից՝



**Առաջին՝** ցանցերը հանրային գործերի կառավարման այնպիսի կառույցներ են, որոնք ենթադրում են որոշակի ընդհանուր շահ ունեցող պետական, մասնավոր և հասարակական կազմակերպությունների բազմություն:

**Երկրորդ՝** քաղաքական ցանցը ձևավորվում է դերակատարների մոտ առկա պաշարների փոխանակման գործընթացում համաձայնություններ մշակելու համար: Ծիշտ է՝ դրանք կարող են անհավասարաչափ բաշխվել, բայց քանի որ ցանցի մասնակիցների միջև առկա է ռեսուրսային կախվածություն, ուստի դերակատարները ստիպված են միմյանց փոխհարաբերվել:

**Երրորդ՝** քաղաքական որոշումների մշակման առումով ցանցի մասնակիցները չեն գտնվում որոշակի աստիճանակարգության մեջ, որտեղ որևէ կազմակերպություն, պայմանավորված իր իշխանական դիրքով, առավելություն ունի: Այստեղ առկա են ոչ թե ուղղահայաց, այլ հորիզոնական հարաբերություններ: Եվ ի լրումն քաղաքացիական, քաղաքական, սահմանադրական մշակույթի՝ քաղաքական ցանցերում գործում է **համագործակցային մշակույթ**:

Քաղաքական ցանցը ընդհանուր շահով, փոխկախվածությամբ, կամավոր համագործակցությամբ և իրավահավասարությամբ միավորված բազմաթիվ քաղաքական դերակատարների փոխգործակցման անկայունությունն ու բացությունը վերլուծող գործիք է: Կարևոր է նշել, որ քաղաքական ցանցերի հայեցակարգը կատարելագործում է կենտրոնացված իշխման հանրային քաղաքականության ընկալումը՝ փոխադարձ պատասխանատվության և պարտավորությունների քաղաքականության հիման վրա: Հանրային քաղաքականության և հանրային կառավարման հանդեպ ցանցային մոտեցումը գլոբալ մակարդակում տեղի ունեցող պայմանների փոփոխման պատասխանի արդյունք է, որի միջոցով իրականացվում է հանրային քաղաքականությունը և հասարակական գործերի կառավարումը: **Հանրային կառավարման էկոլոգիան** [5, շ. 190] ԽՍՀՄ-ի փլուզումից հետո էականորեն փոփոխվել է, ինչն էլ ենթադրում է կառավարման նոր ձևաչափերի մշակում: Հասարակական կառույցների բազմակարծությունը, պահանջմունքների և սպասելիքների բարձր մակարդակը, անորոշության և ռիսկի մեծ ծավալը, երկրի ներքին քաղաքականության վրա միջազգային գործոնի աճող ազդեցությունը, հասարակության տեղեկացվածությունը, կառավարման կենտրոնական մարմինների նկատմամբ բնակչության վստահության անկումը և բազում այլ գործոններ հանգեցրել են ավանդական կառավարման սկզբունքների վերանայմանը, որի արդյունքում՝ ի հայտ է եկել հանրային ոլորտի առանձնահատկությունները ռացիոնալացնող «նոր թեյլորիզմը»: Նկատի ունենալով այս ամենը՝ Ս. Հանթինգթոնը, Ֆ. Ֆուկույաման, Մ. Կաստելսը [6], հատուկ վերլուծության ենթարկելով «ես»-ի արժեքային բազմաչափություն ունեցող դերակատարի կարգավիճակը, առանձնացրել են քաղաքական ցանցերի տեսության հետևյալ հիմնադրույթները.

*Առաջին՝* քաղաքական ցանցերի տեսությունը պետական կառավարման և ժամանակակից տեղեկատվական հասարակության միջև վերակառուցում է հարաբերությունները: «Լավ կառավարման» նկատառումներով այն ներառում է հանրային քաղաքականություն մշակելու և կառավարում իրականացնելու սոցիալական խճանկարի բոլոր եզրերը: Արդյունքում, քաղաքական ցանցերի օգնությամբ, հասարակության առջև կառավարությունը՝ դառնում է թափանցիկ՝ արտահայտելով հասարակական հարաբերությունների «բարդության ճարտարապետության նոր պարադիգման»:

*Երկրորդ՝* քաղաքական ցանցերի օգնությամբ ուսումնասիրվում են նոր պետական կառավարման և հանրային քաղաքականության միջև եղած կապերը: Վերջիններիս նվիրյալներն ապացուցում են, որ իրենց մոտեցումն ավելի պատասխանատվություն է ենթադրում (ավելի շատ, քան պետական բյուրոկրատիայի դիրքից կառավարումը), քանի որ այն ավելի հուսալի է անհատի՝ մեծ իրավասությունների տիրապետման ու սպառողի առջև պատասխանատու և պահանջված լինելու առումով: «Նույնիսկ, եթե դա ինքնին ենթադրվում է, այնուամենայնիվ մենք պետք է իմանանք, – գրում է Մ. Կաստելսը, – թե ինչպե՞ս է նոր պետական կառավարումը պատասխանում այն հիմնահարցին, թե քաղաքացիները ժողովրդավարական հասարակությունում ինչպես կընդունեն ապակենտրոնացված գործակալության, նորաստեղծ կամ ապաքաղաքականացված կազմակերպության, արդյունավետությանն ու գործնականությանը կողմնորոշված կառավարչի կատարած ընտրությունը: Բաց ժողովրդավարական հասարակությունն ավելին է պահանջում, քան սոսկ բավարարված սպառողները» [7, с. 358 ]: Այդ առումով քաղաքական ցանցերի հայեցակարգը ընտրանու կողմից քաղաքական հիմնախնդիրների լայն տարապատկերի ընկալում է ենթադրում: Այս եզրակացությունը մեզ հնարավորություն է տալիս ընդգծել քաղաքական ցանցերի աներկբա առնչությունն ընտրանագիտության հետ, իսկ նրա ներսում՝ կապը քաղաքական որոշումների ժողովրդավարական ընդունման և հանրային քաղաքականության ռազմավարության մշակման հետ: Հետևաբար, քաղաքական ցանցերի հայեցակարգը փոխում է պետության՝ որպես քաղաքական դերակատարի դիտարկման տեսանկյունը. **1)** հանրային քաղաքականություն մշակելիս պետության գերակշռող դերի մասին մտայնությանը հակառակ, ցանցային մոտեցման դեպքում պետությունը և նրա ինստիտուտները քաղաքական որոշումներ ընդունող դերակատարներից լոկ մեկն են (թեև որոշիչը). **2)** հանրային քաղաքականության մեջ պետության հարաբերական անկախության գաղափարին հակառակ, քաղաքական ցանցերի հայեցակարգում պետական կառույցները դիտարկվում են քաղաքականության մյուս դերակատարների հետ «կապակցված» և ստիպված են իրենց ռեսուրսները փոխանակել նրանց հետ, **3)** պետական կառավարման՝ որպես ստորակարգ կազմակերպված համակարգի գաղափարին հակակշիռ, ցանցային մոտեցումն առաջարկում է կառավար-

ման նոր տեսակ՝ «ղեկավարում» (governance), որի ընդհանուր բնութագիրն իր արտահայտությունն է գտել «կառավարում առանց կառավարության» (governing without government), կամ «ղեկավարում առանց կառավարության» (governance without government) բանաձևում [8, p. 218]:

**Երրորդ**՝ քաղաքական ցանցերի տեսությունն իր մեջ ներառում է կառավարման և քաղաքական որոշման ընդունման գործընթացի բարոյական չափումը: Հենվելով քաղաքական փիլիսոփայության և արժեքայնորեն կողմնորոշված մոտեցման վրա՝ Մ Կաստելլո ընդգծում է, որ «շատ աշխատություններ կան քաղաքական ցանցերի վերաբերյալ, որոնցում ընդունվում է, որ քաղաքական ցանցն ուսումնասիրելիս գաղափարները, հավատալիքները, արժեքները և փոխհամաձայնեցված գիտելիքը բացատրական իշխանությամբ են օժտված» [9, c. 360]:

**Չորրորդ**՝ թեև քաղաքական ցանցերի տեսության մեջ «ինստիտուտ» հասկացությունը զգալի դեր է խաղում, սակայն ոչ թե դրանք, այլ դիտարկման հիմնական ելակետը կազմում են կապերն ու հարաբերությունները: Ցանցերի տեսության մեր ուսումնասիրած վերլուծաբաններն այն համոզմանն են, որ որոշ սոցիալական երևույթների ավարտված բացատրությունը պահանջում է համակարգային դերակատարների միջև փոխհարաբերությունների հաստատում: Քաղաքական ցանցի արդյունավետ գործունեության համար որոշիչը ոչ թե ինստիտուտների ներսում միջանձնային, այլև քաղաքական ինստիտուտների միջև կառուցվածքային հարաբերություններն են:

**Հինգերորդ**՝ քաղաքական ցանցերի տեսության մեջ կառավարման արդյունավետության հիմնախնդիրը դիտարկվում է ոչ թե «նպատակ-միջոց», այլ «նպատակ-գործընթաց» հարաբերության հայեցակետով, թեև այստեղ քաղաքական ցանցերի արդյունավետության գնահատումը կարելի է կատարել հասարակական պահանջումները բավարարմանը ծառայող որակական չափորոշիչներով: Միևնույն ժամանակ քաղաքական ցանցերը կարելի է գնահատել նաև այնպիսի չափորոշիչով, ինչպիսին արտածին ծախսերն են, այսինքն՝ ծախսերը բանակցությունների, ինտեգրման ու գործունեության համակարգման համար: Փաստորեն, կարևորելով քաղաքական ընտրամու գործունեության բնույթը, հնարավորություն ենք ստանում լուսաբանել նրա դերակատարման արդյունավետությունը մյուս դերակատարներից, քանի որ վարչական արժեքների հիմնակետը վերաբերում է հավաքական ընտրության որակին կամ ընդունված որոշման համատեղ ընտրությանը:

Ակնհայտ է, որ քաղաքական ցանցերը տարբերվում են մի շարք չափանիշներով: Վերջիններիս անհրաժեշտ է դասել՝ **1)** ցանցերի դերակատարների թվաքանակն ու տեսակը, **2)** ինստիտուցիոնալացման բնույթը, **3)** հանրային քաղաքականության այն ոլորտը, որում ձևավորվում են ցանցերը, **4)** ցանցերի դերակատարների միջև ռեսուրսների բաշխումը, **5)** ցանցի դերակատարներին միավորող շահերի առանձնահատկությունները, **6)** իշխանության ապակենտրոնացման աստիճանը և այլն:

## 1.2. Ղեկավարման առանձնահատկությունները քաղաքական ցանցերի ենթատեքստում

Հանրային քաղաքականության տեսաբան Թ. Բյորցելը առաջարկում է հանրային կառավարումը դիտարկել «ղեկավարում» (governance) հասկացության միջոցով [10, p. 40-41] որպես պետական կառավարման, կառավարման ինստիտուցիոնալ կարգի և քաղաքական ցանցերի հայեցակարգի օրգանական միասնություն: Համաձայնելով Թ. Բյորցելի հետ՝ քաղաքական ցանցերի տեսաբան Գ. Փիթերսը այս հասկացությունն օգտագործում է ցանցերի մասնակիցների միջև հարաբերությունների կարգավորման և քաղաքական որոշումների կայացման գործընթացի բնորոշման համար. «Ղեկավարում» հասկացությունը իր մեջ ներառում է նաև պետական ծառայությունը, որը ձգտում է ընդունել հասարակական շահն արտահայտող հասարակական այն ինստիտուտները, որոնք կարող են և պետք է առաջատար դեր խաղան ռեսուրսների միջհատվածային հավաքագրման ու դրույքների համատեղ որոշման գործում» [11, p. 229]: Փաստորեն «ղեկավարում» հասկացությունը, որը նկարագրում է որոշումներ արտադրողների ցրված ցանցերով իրականացվող քաղաքական ազդեցությունը, իրենով փոխարինում է «կառավարություն» հասկացությանը՝ որպես ինստիտուցիոնալ իշխանության իրականացում:

Այս տեսանկյունից պետական կառավարման մեջ զլոբալ հարթության վրա առաջացած նոր իրավիճակը նկարագրելու համար «ղեկավարում» հասկացության օգտագործման հեռանկարը պետական կառավարման տեսությունն անմիջականորեն կապում է քաղաքական գիտության հետ: Ղեկավարման հայեցակարգն առավելապես քաղաքագիտական է և այդ առումով վերականգնում է պետական կառավարման տեսության քաղաքական նշանակությունը: *Այստեղ պետական կառավարումը ոչ այնքան որպես անմիջական հասարակական ազդեցության հետ կապ ունեցող պետության գործադիր գործառույթ է, որքան քաղաքացիական հասարակության կառույցների հետ համատեղ համաձայնեցված, քաղաքական որոշում կայացնելու հասարակական-քաղաքական գործընթացի դերակատարներից մեկը:* Այս նկատառումները հիմք ընդունելով՝ ժամանակակից կառավարումը բնութագրվում է որոշումների կայացման գործընթացներով, որոնցում տարածքային ու գործառույթային տարանջատումները, հիմնախնդիրների լուծման արդյունավետ համակարգը վերափոխվում են սահմանափակ իրավասությամբ ու ռեսուրսներով ենթահամակարգային դերակատարների: Այսինքն՝ հանրային կառավարման համար այդ առանձնահատկությունն արտահայտվում է որոշումների կայացման գործընթացում արտաքին հասարակական ու մասնավոր դերակատարների ընդգրկմամբ՝ հասարակական *հաղորդակցության, բանակցության, պայմանավոր-*

**վածության** հարաբերությունների զարգացմամբ: Հետևաբար, ղեկավարումը ենթադրում է առանձին, բայց փոխկապակցված տարրերի՝ կարգավիճակների, քաղաքական մանդատների, կազմակերպական, ֆինանսական և ծրագրային կառույցների, վարչական և ինստիտուցիոնալ կանոնների, նորմերի ու հրահանգների համակարգ, որը, որպես ամբողջություն, իր համապատկերով որոշում է պետականավարչական գործունեության նպատակներն ու միջոցները: Ցանկացած առանձնահատուկ համապատկերումը՝ քաղաքականության որոշակի ուղորտում (օրինակ՝ բնապահպանությունը), պետականավարչական գործունեության նկատմամբ (օրինակ՝ կարգավորումը), հատուկ իրավասության ներքո (օրինակ՝ մարզ կամ քաղաք), հատուկ կազմակերպությունում (օրինակ՝ մարդասիրական սպասարկման բաժին) կամ կազմակերպական ճյուղում (օրինակ՝ երեխաների սպասարկման գործակալություն)՝ շարժում գործընթացի արդյունք է, որն անհրաժեշտ է դիտարկել որպես տարաբնույթ ընտրախավերի ղեկավարման ամբողջություն: Այս պարագայում ղեկավարումը տարբերվում է վարչարարությունից (որի դեպքում հասարակական կառույցները լոկ միջնորդավորված ազդեցություն են գործում այդ գործընթացի վրա) և պետական կառավարման շուկայական մոդելից՝ առևտրային գործարքի վրա վերջինիս շեշտադրումով (որտեղ յուրաքանչյուր դերակատար փորձում է առավելագույնս շահ ստանալ): Ղեկավարումն իրականացվում է պետական ու ոչ պետական կառույցների միջև փոխադարձ շահը համատեղ ջանքերով նվաճելու և, հետևաբար, համաձայնության բոլոր կողմերին բավարարող քաղաքական որոշում կայացնելու վերաբերյալ ընդհանուր բանակցությունների կազմակերպման միջոցով:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ հանրային քաղաքականության և կառավարման արդյունավետության գնահատումը քաղաքական ցանցերի միջոցով իրականացվում է տարբեր եղանակներով: 1. Քաղաքական ցանցերի միջոցով, պետության և տարբեր շահային խմբերի փոխհարաբերություններն ավելի արդյունավետ են կարգավորվում, քանի որ վերջիններս, համեմատած շուկայի կան աստիճանակարգության հետ, նվազեցնում են բանակցությունների վարման ծախսերը՝ ցանցի մասնակիցների միջև առաջացող վստահության արդյունքում, քանի որ շուկաները և աստիճանակարգությունները ինստիտուցիոնալ երաշխիքներով նպաստում են վստահության առաջացմանը: Աշխատողները երաշխավորված **պայմանագրային կարգով** պատրաստ են աշխատել գործատուի համար՝ **հավատալով**, որ իրենց աշխատանքը կվարձատրվի, իսկ ստացածը՝ կբավականացնի ոչ միայն կյանքի բարձր որակի և մակարդակի ապահովման, այլև սոցիալական համագործակցության մշակույթի հաստատման համար: Հետևաբար, նրանք իրենց վստահությունն ուղղում են ոչ թե գործատուի հետ անհատական ինտեգրվածությանը, այլ իրավաբանական համակարգի գործունեությանը, որն ամրագրվում է պայմանագրային կարգով իրենց ձեռք բերած համաձայնությամբ: Սակայն հետևյալ

մուհիստական ժողովրդավարական անցման ազատականացման փուլում ձևավորվող ո՛չ շուկաները, ո՛չ աստիճանակարգությունները կառավարության և ճնշման խմբերի միջև վստահության համար բավարար երաշխիքներ մինչ այսօր չեն ապահովում: Վստահության հնարավորությունը հենց քաղաքական ցանցերի առկայության պայմաններում է առաջանում. այս հարաբերությունները վստահություն են ներշնչում քաղաքական ցանցի նկատմամբ՝ պայմանավորված սոցիալական կարգի բազմաչափությունն արտահայտող քաղաքացիական հասարակության հասունությամբ: **2.** Քաղաքական ցանցերի արդյունավետությունը դրանց անդամների փոխգործակցության ներքին պայմանավորվածությունների արդյունք է: **Բ.** Միլվորդի և **Ք.** Փրովանի կողմից ժողովրդավարական անցման պայմաններում գտնվող երկրներում անցկացրած հետազոտությունից ակնհայտ է, որ հանրային քաղաքականության կառուցվածքում քաղաքական ցանցն արդյունավետ է, երբ՝ **ա)** ցանցի ինտեգրումը կենտրոնացված է իշխանության հիմնական դերակատարի՝ ընտրախավի շուրջ, իսկ վերջինս էլ հարաբերական անկախություն ունի և վերահսկվում է այլ դերակատարների կողմից, **բ)** պետության ֆինանսական վերահսկման կառուցակարգերը ուղղակի են, այլ ոչ հատվածային կամ միջնորդավորված, **գ)** հավանական է ռեսուրսների օգտագործման հանրային «համաձայնություն» և առավել քիչ հավանական է ռեսուրսների տնօրինում փոխհամաձայնեցված խմբիշխանությունների կողմից, **դ)** ցանցային կայունության պահպանմանն ուղղված կլինեն բոլոր դերակատարների ջանքերը, թեև կայունությունը դեռ բավարար պայման չէ դերակատարների կողմից «լավ կառավարում» իրականացնելու համար: Այդ փոխկապվածությունն առավելագույնը կլինի, երբ ցանցն անմիջականորեն տարաբնույթ մատակարարում ենթադրի [12, p. 216-217]: Ընդունելով **Բ.** Միլվորդի և **Ք.** Փրովանի կողմից մշակված չափորոշիչները՝ կարծում ենք, որ հանրային քաղաքականության ձևավորման, մշակման, իրականացման և բնականոն արդիականացման գործընթացում անհրաժեշտ է կարևորել այնպիսի կախյալ փոփոխականներ, ինչպիսիք են քաղաքական ցանցերի տարրերը՝ *անդամակցության ազատ հնարավորություն, կառուցվածքի հարահոս համալրման կարողություն, արտադրողականության նպատակամետություն, փոփոխությունների և արդյունքների կառավարելիություն: Ցանցային անդամակցության ազատ հնարավորությունը* ենթադրում է ցանցի համադրություն՝ տարբեր համամասնություններով ընդգրկելով քաղաքական գործիչներին, բյուրոկրատներին, գործարար շրջանակների ներկայացուցիչներին: *Ցանցային կառուցվածքի հարահոս համալրման կարողությունը* կարող է բաց կամ փակ լինել, այսինքն՝ ներառել հանրային քաղաքականության ձևավորման գործընթացում գերակշռող հիմնական անձանց կամ փոքր, կամ մեծ թվաքանակ: *Ցանցային արտադրողականության նպատակամետությունը* կարող է լինել բարձր կամ ցածր՝ պայմանավորված ընդհանուր նպատակին հասնելու համար դերակատարների

փոխհարաբերվելու ոչ միայն ցանկությունից, այլև ինստիտուցիոնալ ավանդույթներից և քաղաքական մշակույթի բնույթից: **Ցանցային փոփոխությունների և արդյունքների կառավարելիությունը** որոշվում է ցանցերում կառավարչական հարաբերությունների բնույթով: Ի տարբերություն պետական կառավարմանը՝ ցանցային ղեկավարումը (governance) ենթադրում է ցանցային անդամակցության, կառուցվածքի նոր հանգամանքներին արձագանքելու և նոր ինստիտուցիոնալ տարբերություններին հարմարվելու այնպիսի ունակություն, երբ ցանցերում նստած դերակատարներն արագ և ճկուն արձագանքելով «նուտքի» ազդակներին, պարտավոր են շահագրգռել զանգվածներին՝ մասնակցելու կառավարմանը:

Հանրագումարենք, քաղաքական ցանցերի հայեցակարգը հանրային քաղաքականության ձևավորման, մշակման, իրականացման և բնականոն արդիականացման գործընթացում որոշիչ դեր ունի քաղաքացիական հասարակության և պետության, քաղաքական ընտրանու և ճնշման խմբերի փոխհարաբերությունների ուսումնասիրման կառուցակարգում: Այս նոտեցման օգնությամբ հասարակական համակարգի հետխորհրդային կերպափոխմանն ուղեկցող անկայունության և ռիսկի աճի պայմաններում հնարավոր է հանրային քաղաքականության կառուցվածքում հստակեցնել քաղաքական որոշումների մշակման, ինչպես նաև սոցիալական հարաբերությունների գլոբալացման և պետության ու քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների ձևաչափերը: Քաղաքական ցանցերի միջոցով միաժամանակ կարելի է բացահայտել հանրային քաղաքականության վերլուծության տեղեկատվական աղբյուրները և ճանաչողական հնարավորությունները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Schmitter Ph.**, Still the Century of Corporatism? // Review of Politics. 1974. Vol. 26. № 1.
2. **Хардин Рассел**, Корпоративная демократия. – Журнал “Прогнозис” (PROGNOSIS.ru), 2006.
3. **Rhodes R.**, Policy Understanding Governance. Policy Network, Governance, Reflexivity and Accountability. Buckingham, Philadelphia: Open University Press, 1997.
4. **Knoke D., Pappi F., Broadbent J., Tsujinaka Y.**, Comparing Policy Networks. Labor Politics in the US, Germany and Japan. Cambridge. Cambridge University Press. , N. Y.; 1996.
5. **Бейтсон Г.** Экология разума. Избранные статьи по антропологии, психиатрии и эпистемологии / Пер. с англ. М.: Смысл, 2000.
6. **Хантингтон С.** Политический порядок в меняющихся обществах. М.: Прогресс-Традиция, 2004; **Фукуяма Ф.** Великий разрыв / Ф. Фукуяма; Пер. с англ. под общ. ред. А. В. Александровой. – М.: ООО «Издательство АСТ», 2003; **Кастельс М.** Информационная эпоха. экономика, общество и культура/ Пер. с английского. Под научной ред. проф. О. И. Шкаратана, М.: 2000.
7. **Хантингтон С.** Политический порядок в меняющихся обществах. М.: Прогресс-Традиция, 2004.
8. **Reinicke, Wolfgang, H.** Global public policy: governing without government? / Wolfgang H. Reinicke,
9. **Кастельс М.** Информационная эпоха: экономика, общество и культура.
10. **Börzel T.** Organization Babylon-on the Different Conceptions of Policy Networks // Public Administration. 1998a. Vol. 76. № 2.
11. **Peters G.** Governance Without Government? Rethinking Public Administration // Journal of Public Administration: Research and Theory. 1998. Vol. 8. № 2.
12. **Milward H., Provan K.** Principles for Controlling Agents: The Political Economy of Network Structure // Journal of Public Administration Research and Theory. 1998. Vol. 8. № 2.



**MARIAM MARGARYAN**

*Head of the Chair of Political Science of Public  
Administration Academy of the RA,  
Doctor of Sciences (Political Sciences)*

## **POLITICAL NETWORKS PROMOTING PUBLIC POLICY**

Political networks are studied as actors' system carrying out non-hierarchical, relatively independent activities and promoting public policy. With the help of this approach the public policy with versatile benefits of its political actors supposes cooperative culture.

Studying S. Hantingon, F. Fukujama, E. Kastels, T. Byorcer's approaches, we have viewed political networks with the help of not "management" but "governance" conception. The latter enhances us a chance to carry out public policy not only with the help of state governing but institutions of civil society. The abstract offers to converge communicative, negotiation and contract systems of the public policy.

We suppose, that such an approach will give us an opportunity, while improving the public policy in the RA, to rationalize not only the procedures of adoption of political decisions and of their realization, but their information-communication sources as well.

## ԳՈՌ ՍԵՎՈՍՅԱՆ

*ՀՀ ՊԿ ակադեմիայի քաղաքագիտության  
ամբիոնի ասպիրանտ*

### **ԷԹՆԻԿ ԽՄԲԵՐԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԵՐՊԱՓՈՒՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ**

Ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում կենտրոնական և արևելյան Եվրոպան, ինչպես նաև հետխորհրդային երկրներն ու ժողովուրդները, հայտնվելով քաղաքական նոր տարածության և ժամանակի մեջ, բախվեցին անցումային ճգնաժամերի հաղթահարման բազմաչափ գործընթացներին: Հետխորհրդային տարածքում նոր արժեհամակարգի ընկալման հետ կապված խնդիրների ամբողջությունն իր մեջ ներառում է հասարակության գործունեության քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և մյուս ոլորտները:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նորանկախ երկրներում ընթացող տարածքային սահմանների փոփոխությունները սոցիոմշակութային և էթնոմշակութային ցնցումներ առաջացրեցին Արևելք-Արևմուտք աշխարհաքաղաքական խճանկարում: Այդ երկրներում սկիզբ առած միգրացիոն գործընթացների աճին զուգահեռ գնալով գերակա է դառնում բազմաշերտ և բազմամշակույթ հասարակությունների բնականոն արդիականացման և զարգացման անհրաժեշտությունը: Այս նկատառումներով կենտրոնական արևելյան Եվրոպայի և նախկին խորհրդային Միության երկրներում տարբեր ազգերի և էթնոսների ներկայացուցիչների համար էթնոազգայնականությունը դառնում է ոչ միայն մշակութային ինքնության պահպանման, այլև քաղաքական զարգացման (հատկապես՝ նույնականացման և շարժունակության) ճգնաժամերի հաղթահարման հիմնական կռվաններից մեկը:

Որպես բազմաչափ երևույթ՝ էթնոազգայնականության քաղաքական դրսևորումները կարևորվում են հատկապես, երբ գլոբալացման շրջանակներում հավասարության նշան է դրվում քաղաքական և մշակութային նույնականացման գործընթացների միջև: Այստեղ ի հայտ է գալիս օրեցօր ընդլայնվող Եվրոպական հանրության հիմնական գործառույթներից մեկը. այն է՝ համապատասխան հավասարակշռության ապահովում քաղաքական նույնականացման և մշակութային բազմազանության միջև [1, c. 160]:

Հավասարակշռության պահպանման հիմնախնդիրները դրսևորվում են հատկապես վերոնշյալ երկրներում, քանի որ դրանք զուգահեռաբար գտնվում են ազգային պետության կառուցման և պետականության ամրապնդման, ինչպես նաև Եվրոպական ընտանիք ինտեգր-

վելու, այնտեղ իրենց քաղաքական, տնտեսական, մշակութային տեղի և դերի խնդիրները լուծելու բազմաշերտ գործընթացների մեջ:

Նմանօրինակ մոտեցումը հնարավորություն է ընձեռում հիմնվել ավստրիացի քաղաքագետ Ու. Ալտերմադի այն կարծիքին, որ արևմտաեվրոպական ազգային պետություններում գերիշխող ժողովուրդներն իրականացնում են պետության կառավարումն իրենց արժեշահային պատկերացումների համաձայն՝ միաժամանակ, որպես ինքնադրսևորման և ինքնահրացման միջոց ներակայացնելով իրենց սեփական մշակույթը [2, շ. 19]: Սակայն ժողովրդավարական ինստիտուտների հաստատման և արդյունավետ գործառնման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու «նոր ժողովրդավարների» փորձը ոչ բոլոր դեպքերում նույնությամբ կիրառելի դարձավ: Եվ եթե վերլուծելու լինենք ազգային քաղաքական և մշակութային տարածություններում տեղի ունեցող իրողությունները, կտեսնենք, որ ի սկզբանե գծային զարգացում ենթադրող ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող հասարակություններում ստեղծվել է քաղաքական վարչակարգերի, իշխանության բաշխման և վերարտադրման կառույցների չափազանց լայն տարրապատկեր, և ձևավորվել են տարբեր քաղաքական համակարգեր [3, շ. 64]: Չնայած այս փաստի առկայությանը՝ հետկոմունիստական տարամետ քաղաքական կերպափոխումների օրինաչափությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժողովրդավարացման գործընթացներում գտնվող երկրները ենթարկվել են քաղաքական զարգացման որոշակի ներքին տրամաբանության, որն ենթադրում է բարեփոխումներ ինչպես *վերևից* (ազատական, բնականոն), այնպես էլ՝ *ներքևից* (հեղափոխական) [4, էջ 159]:

Վերջին տարբերակը կիրառվեց այն երկրներում, ուր առկա են միջէթնիկական բախումներ, սոցիալական բևեռվածություն, բնապահպանական խնդիրներ և սերունդերի համերաշխության խաթարվածություն: Վերլուծելով հետխորհրդային տարածքներում տեղի ունեցած գունավոր հեղափոխությունների փորձը՝ քաղաքագետ Տ. Թորոսյանը շեշտադրել է այն հանգամանքը, որ վերոհիշյալ խնդիրների առկայության պայմաններում ներքևից պարտադրված բարեփոխումները միշտ չէ, որ ապահովում են հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների հարահոս կերպափոխության գործընթացները՝ և ժողովրդավարության՝ որպես գերակա արժեքի հաստատումը [5, էջ 96-98]: Ելակետ ընդունելով այս մոտեցումը՝ նշենք, որ դիտարկվող երևույթը տարածված է բազմաէթնիկ և կառուցվածքային առումով աստիճանական զարգացման կանոններին չենթարկվող տարածաշրջաններում: Փաստորեն, նոր քաղաքական ժամանակի և տարածության մեջ կողմնորոշվելու, անցյալ-ներկա-ապագա եռամիասնության մեջ սեփական տեղի, դերի, անվտանգության խնդիրները լուծելու, ինչպես նաև քաղաքական ու մշակութային զարգացումներում անորոշություններից խուսափելու համար միակ «հավատարիմ» արժեքը էթնոազգայնականությունն է:

Քաղաքական զարգացման բնականոնություն ենթադրող գլոբալ ինտեգրման գործընթացներում բազմաթիվ երկրների քաղաքական համակարգերի արդյունավետ կերպափոխման հնարավորությունները պարզելու համար նպատակահարմար ենք համարում էթնիկ խմբերը դիտարկել սոցիո և էթնոմշակութային տեղեկատվության **«ընդունիչ-հաղորդիչ»** տերմինների հարաբերակցության մեջ: Նման մոտեցման ընտրությունը պայմանավորված է այն փաստով, որ միջէթնիկական և ներէթնիկական կապերն արտահայտող սոցիո և էթնոմշակութային տեղեկատվության հետ մեկտեղ այդ խմբերն իրենց վրա կրում են նաև արտաքին միջավայրից եկող տեղեկատվական տարաբնույթ հոսքերի ազդեցությունը: Միաժամանակ քաղաքական զարգացման բնականոնությունը ազգերի, էթնոսների, ժողովուրդների և, ընդհանրապես, մարդկային որոշակի հանրույթների մասնակցության ու ինքնակազմակերպման գործընթացների ամբողջություն է, որի ժամանակ առաջ է գալիս **ստացվող, պահպանվող և փոխանցվող** տեղեկատվության նկատմամբ ունեցած վարքի դրսևորման հնարավորությունների և կառուցակարգերի բացահայտման անհրաժեշտություն: Այս տեսանկյունից էթնիկ խմբերը, որպես ինքնակազմակերպվող, ինքնկառավարվող և ինքնաիրացվող քաղաքական համակարգերի ենթահամակարգեր, նման են տեղեկատվական բարդ համակարգերի կառուցվածքային տարրերին: Քաղաքական տարածության և ժամանակի մեջ ստանալով համապատասխան տեղեկատվություն՝ նրանք դառնում են այդ ամենի կրողները: Ելնելով քննարկվող նյութի բազմակողմանի ուսումնասիրման անհրաժեշտությունից՝ նպատակահարմար ենք համարում համակարգերի ընդհանուր սիներգետիկական տեսությունից փոխառել «էներգիայի մեծ լարում» [6 c. 258] հասկացությունը, որի արդյունավետ օգտագործման միջոցով փորձելով դիտարկել պատմականորեն կուտակված և սերունդներին փոխանցվող տեղեկատվությունը՝ հնարավոր է իրատես փոփոխության ենթարկել դրա արժեքային համակարգը: Պետք է նկատել, որ այդ փոփոխություններն եթե արդյունավետ են, ապա տվյալ համակարգն հասնում է իր նպատակին, թուլանում է համակարգի ներքին լարվածությունը:

Նման մոտեցումը հարաբերական բնույթ ունի, քանի որ այն միաժամանակ կարող է օգտակար լինել ինչպես սոցիո և էթնոմշակութային տեղեկատվության բնաշրջման առանձնահատկություններն հասկանալու, այնպես էլ էթնիկ խմբերի՝ որպես քաղաքական համակարգի կերպափոխման տեղեկատվական գործոնի դերն ու նշանակությունը բացահայտելու համար: Սույն խնդիրը լուծելու, տեսական և գործնական մակարդակներում առվել կիրառելի դարձնելու նպատակով հիմնվել ենք ամերիկացի քաղաքագետ Կ. Դոյչի՝ հասարակության քաղաքական համակարգերի տիպաբանության «հաղորդակցական ձևաչափի» վրա [7, c. 144-147]: Վերջինիս համաձայն քաղաքական համակարգի ամբողջական գործառությունը կախված է քաղաքական կյանքի մասնակիցների միջև տեղեկատվության **մշտական փոխանակման**

(ընգծված է մեր կողմից) փաստից: Քաղաքական համակարգի կառուցվածքային տարբեր տարրերի, ինչպես նաև քաղաքական և սոցիալական համակարգերի միջև քաղաքական տեղեկատվության փոխանակման գործընթացներն անվանելով *քաղաքական հաղորդակցություններ*<sup>4</sup> Կ.Դոյչը կարևորում է հատկապես կառավարողների և կառավարվողների միջև ընթացող տեղեկատվության փոխանակությունը, որն ուղղված է այդ կողմերի միջև համաձայնության հաստատմանը [7, c. 146]: Համաձայնվելով Կ. Դոյչի նման մոտեցմանը և հանրագումարելով այդ երկրների քաղաքական զարգացման փորձը՝ կարծում ենք, որ տեղին է ավելացնել նաև ընտրանու և զանգվածների, ընտրանու և հակաընտրանու միջև տեղի ունեցող տեղեկատվական հոսքերի շրջանառությունը:

Տարբեր մակարդակներում շրջանառվող քաղաքական տեղեկատվության *ուղղվածությունը, ծավալը, շարժունակությունը և շերտավորվածությունը* (կախված սոցիալական խմբերի արժեքային կողմնորոշումներից) պայամանավորված են հասարակության սոցիո և էթնոմշակութային տեղեկատվա-հաղորդակցման հագեցվածության աստիճանով:

Ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում տեղի ունեցող բազմաշերտ և բազմաչափ կերպափոխման գործընթացների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հասարակական համակարգի ներսում նոր արժեհամակարգի հաստատումն ուղեկցվում է քաղաքական համակարգի կառուցվածքում շրջանառվող քաղաքական տեղեկատվության վերոնշյալ չափումների որակաքանակական հատկությունների ընթացող փոփոխությամբ: Փոփոխության են ենթարկվում քաղաքական տեղեկատվության շրջանառության թե՛ ուղղվածությունը, թե՛ շարժունակությունը, թե՛ շերտավորվածությունը և թե՛ ծավալը՝ հանգեցնելով նոր արժեհամակարգի համալիր ներդրմանը: Այս բաղադրատարրերից յուրաքանչյուրի՝ այս կամ այն չափով փոփոխության պատճառահետևանքային կապերի ուսումնասիրություններն առանձին-առանձին լայն քննարկման առարկաներ են: Այդ իսկ պատճառով սույն հոդվածի ներքին տրամաբանությունը պահպանելու, ինչպես նաև էթնիկ խմբերը սոցիո և էթնո-մշակութային տեղեկատվության «ընդունիչ-հաղորդիչ» տերմինների հարաբերակցության մեջ դիտարկելու՝ մեր կողմից արված առաջարկի նպատակայնությունն ապահովելու համար շեշտադրել ենք հասարակության տեղեկատվա-հաղորդակցման ծավալներն և դրանք ընդգրկող տարածությունների միջև գոյություն ունեցող աններդաշնակ դրսևորումները: Ինչպես նշում է քաղաքագետ Գ. Պոչեպցովը. «Տեղեկատվական հոսքերը հիմնականում իրենցից ներկայացնում են միակողմանի գործընթացներ, որտեղ համապատասխան տեղեկատվությունն իրացնող կողմը գտնվում է *պասիվ* վիճակում, այն ինչ հաղորդակցակցությունների շրջանառության դեպքում խոսքն առավելապես վերաբերում է երկկողմանի գործընթացներին, որտեղ տեղեկատվության թե՛ հաղորդող և թե՛ իրացնող

կողմերն օժտված են տվյալ հաղորդակցության կառուցվածքայնությունն ամբողջացնող *ակտիվ* դերերով» [8, c. 296]:

Քանի որ քաղաքական համակարգի կերպափոխության գործընթացն ենթադրում է նախկինում գոյություն ունեցող արժեշահային պատկերացումների փոխարեն միանգամայն նոր մշակութային տեղեկատվության ներմուծում և ըստ այդմ՝ սոցիո- և էթնո-տեղեկատվության ծավալի որակաքանակական փոփոխություն, ուստի համակարգի արդյունավետ կերպափոխության տեղեկատվական հագեցվածության գործակիցը գտնելու համար հարկավոր է չափելի դարձնել նաև այդ փոփոխությունների արժեքային գերակայությունները: Ֆիզիկոսներ Վ. Էբելինգը և Ա. Էնգելը անդրադառնալով տեղեկատվության քանակական չափման միավորին, որոշիչ են համարում տվյալ տեղեկատվությունը կրող համակարգի հիշողության ծավալի մեծությունը, որը ներկայացվում է հիշողության տարբեր հնարավոր վիճակների թվի լոգարիթմով: Սակայն այդ մեծությունը գրեթե ոչինչ չի փաստում տեղեկատվությունը կրող համակարգի՝ այդ իսկ տեղեկատվությամբ բեռնավորված (ոչ թե ծանրաբեռնված) լինելու աստիճանի մասին [6, c. 263]: Իսկապես, եթե տեղեկատվության քանակական չափման սույն սկզբունքը կիրառենք արտաքին միջավայրից բազմաէթնիկ տարածաշրջաններ ներհոսող սոցիոմշակութային նոր տեղեկատվության մեծության քանակական բնութագրման համար, կարող ենք հաստատել, որ այս կամ այն էթնիկական խմբի՝ նոր տեղեկատվությամբ ծանրաբեռնված լինելու փաստն ամենևին էլ չի նշանակում, որ վերջիններս նաև ամբողջովին բեռնավորված են այդ տեղեկատվությամբ: Այսպիսով, նոր տեղեկատվության նկատմամբ գտնվելով պասիվ վիճակում և կրելով այն, բայց չլինելով դրա յուրացնողն ու կուտակողը, ինչպես նաև փոխակերպողը, էթնիկ խմբերը ականա վտանգի են ենթարկում խորհրդանիշների հաջորդականության բարդություն ներկայացնող պատմական հիշողությունից տեղեկատվական կանչ տալու կառուցակարգերը: Անցյալից ժառանգած էթնոմշակութային տեղեկատվության պիտանելիության վերաբերյալ առաջացած անվստահության և դրա կիրառելիության նկատմամբ ունեցած թերի պատկերացումները իրական խոչընդոտ են դառնում բազմաէթնիկ տարածաշրջաններում այս կամ այն էթնիկ խմբերի համար անցյալ-ներկա-ապագա համատեքստում կողմնորոշվելու, իրենց տեղի և դիրքի խնդիրները քաղաքական զարգացման գործընթացում հստակեցնելու ճանապարհին:

Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում նոր արժեշահային համակարգի հաստատման համար վտանգավոր կարող են լինել ոչ թե հասարակության տարբեր ոլորտներ ներթափանցող տարաբնույթ տեղեկատվական հոսքերը, այլ դրանց՝ տվյալ հանրույթի համար կենսական նշանակություն ունեցող խորհրդանիշերով չբեռնավորված վիճակը: Իսկ նոր քաղաքական տարածության և ժամանակի մեջ հայտնված հասարակական համակարգերում նման իրավիճակի տևական բնույթը կարող է

արժեքային դաշտի ներհոսք-արտահոսք շարունակական հաջորդականության դինամիկ հավասարակշռության խախտման պատճառ դառնալ, որն իր հերթին կարող է ուղղակի վտանգի ենթարկել վերջիններիս հասարակական լինելիության փաստը [9, էջ 68]:

Այս իրավիճակի շարունակական բնույթը կարող է հանգեցնել սոցիոմշակութային փոփոխությունների արդյունքում հաստատված հասարակական կեցության նոր պայմանների և ձևերի վերաբերյալ աններդաշնակ կոլեկտիվ պատկերացումների ձևավորմանը, ինչը գերակա կդարձնի իռացիոնալացումը: Ընդ որում, այդպիսի պատկերացումները ոչ միշտ կարող են համահունչ լինել տվյալ հանրույթը կամ դրա օրգանական մասը կազմող էթնիկական խմբի՝ անցյալից ժառանգած էթնիկական տեղեկատվության՝ կենսական նշանակություն ունեցող տարրերի հետ: Նոր քաղաքական ժամանակի, տարածության ինչպես նաև քաղաքական համակարգի ժողովրդավարացման պայմաններում սոցիոմշակութային փոփոխությունների իռացիոնալ գնահատականով են պայմանավորված սոցիալական երկխոսության և սերունդների համերաշխության թույլ արտահայտվածության պատճառով առաջացած քաղաքացիների օտարվածությունը:

Վերոհիշյալ կառուցակարգը համակողմանի ուսումնասիրելով՝ սոցիոլոգ Պ. Սորոկինը իր «Սոցիալական և մշակութային դինամիկա» աշխատության մեջ զարգացրել է սոցիոմշակութային փոփոխությունների առաջացման պատճառահետևանքային կապերի ուսումնասիրությունների վերաբերյալ երեք հիմնական ուղղություն:

**Առաջին՝ էքստենզալիստական** տեսության համաձայն, ցանկացած սոցիոմշակութային համակարգում փոփոխությունների առաջացման ուսումնասիրության մեջ շեշտը դրվում է արտաքին նշանակություն ունեցող որոշակի «փոփոխականների» վրա, որոնցով էլ պայամանավորված են դրանց առաջացման համար նախապայման հանդիսացող «գործոնների» և «շարժիչ ուժերի» առկայությունը [10, c. 798]:

**Երկրորդ՝** սոցիոմշակութային **իմանենտ** փոփոխությունների տեսության համաձայն սոցիոմշակութային համակարգերը փոփոխության են ենթարկվում վերջիններիս ներքին գործառույթների, պաշարների և հատկությունների շնորհիվ [10, c. 801]:

Եվ վերջին՝ **երրորդ** տեսությունն իրենից ներկայացնում է երկու տեսությունների միջանկյալ վիճակը, որի համաձայն սոցիոմշակութային փոփոխությունները միաժամանակ թե՛ ներքին, թե՛ արտաքին գործոնների և պաշարների ազդեցության արդյունք են համարվում [10, c. 802]:

Պ. Սորոկինը միմյանցից զատ քննարկելով այս տեսությունները՝ սոցիոմշակութային փոփոխությունների ուսումնասիրության գործընթացում որոշակի սահմանափակումներով ընդունում է էքստենզալիստականի միայն օժանդակ դերը, իսկ հիմնականում հակված է իմանենտ տեսությանը: Վերջինիս կարծիքով ինտեգրվող մշակութային համակարգերն ու ենթահամակարգերը՝ քաղաքական, տնտեսական, սո-

ցիալական կազմակերպման ձևերը, գիտությունը, կրոնը, փիլիսոփայությունը, իրավունքը, երաժշտությունը, ճարտարապետությունը, քանդակագործությունը, գեղանկարչությունը և այլն, փոփոխության են ենթարկվում, քանի որ դրանցից յուրաքանչյուրը, գտնվելով անընդհատ գործառնման գործընթացում, իր մեջ կուտակում (հավաքում) է այդ փոփոխությունների պատճառը [10, c. 807]:

Համաձայնվելով ճանաչված գիտնականի կողմից մշակված դրույթներին՝ նշենք, որ ժողովրդավարացման գործընթացներում գտնվող բազմաթեքիկ տարածաշրջաններում արտաքին միջավայրից ներթափանցող սոցիոմշակութային տարաբնույթ տեղեկատվական հոսքերի օժանդակ նշանակությունն իր արտահայտությունը կգտնի միայն այն դեպքում, եթե տվյալ էթնոսի կամ նրա ներկայացուցիչների կողմից ստեղծված և ապահովված կլինեն այդ հոսքերի շրջանառման, ինչպես նաև դրանց՝ կենսական նշանակություն ունեցող մասի բեռնավորման՝ կերպափոխման արդի պահանջներին համապատասխանող կառուցակարգերը: Մեր կարծիքով, հենց այստեղ ի հայտ է գալիս էթնոսի «ընդունիչ-հաղորդիչ» տերմիններից մեկի՝ «ընդունիչ» բաղադրատարրի գործառույթը:

Լինելով կենդանի օրգանիզմ, իր տեսակի պահպանման և բնականոն վերարտադրման կենսական պահանջներով պայմանավորված՝ էթնոսն արդեն իսկ օժտված է՝ ա) գեներտիկ, բ) գլխուղեղում և ներվային համակարգում պահպանվող, գ) օրգանիզմից դուրս գտնվող էքստերասոմատիկ (արտաքին ծագում ունեցող) տեղեկատվություն [6, c. 260] փոխանցելու կենսական հատկություններով: Եվ մեր կողմից առաջարկված «ընդունիչ-հաղորդիչ» տերմիններից երկրորդի՝ «հաղորդիչ» բաղադրիչի կենսաբանական գործառույթը, ըստ երևույթին, իր մեջ ներառում է վերոբերյալ տեղեկությունները միասին վերցրած: Սակայն սոցիոմշակութային տեղեկատվության հասարակական փոխանցելիության գործառույթն իր դրսևորումն է գտնում հատկապես այն պայմաններում, երբ հասարակական ենթահամակարգերը, իրենց ամբողջության մեջ վերցրած, համագործակցության նպատակով *փոխազդեցության* և *փոխներգործության* մեջ են գտնվում պատմական հիշողություն «կուտակած» տվյալ միջավայրի (մեր պարագայում՝ բազմաթեքիկ տարածաշրջանների) արժեշահային համակարգերի հետ: Սոցիոմշակութային փոփոխությունների իմանենտ տեսության համաձայն, եթե ենթահամակարգերից յուրաքանչյուրը, իր ներսում պարունակում է մի պատմական վիճակից մեկ այլ վիճակի դինամիկ անցման կենսահասարակական շարժառիթներն ու նախադրյալները, ապա այդ փոխազդեցություններն առավել տեսանելի են դարձնում ընդհանուր համակարգի հետագա կերպափոփոխության գործընթացները:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ պետք է նշենք, որ քաղաքական համակարգի կերպափոխման գործընթացներում գտնվող էթնիկ խմբերը սոցիո և էթնոմշակութային տեղեկատվության «ընդունիչ-հաղորդիչ» տերմինների հարաբերակցության մեջ դիտարկելու մեր կողմից



արված փորձը կարևոր նպատակ է հետապնդում. հասարակության հաղորդակցական «ելք-մուտք» ուղիների արդյունավետ գործառնման հնարավորությունները բացահայտելով՝ անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել բազմաէթնիկ տարածաշրջաններում համագործակցության մշակույթի ձևավորման, հաստատման և արդյունավետ գործառնման համար, ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա այդ տարածքներում քաղաքական զարգացման գործընթացների տարբեր մակարդակներում բացահայտված հակամարտությունները լուծել բանակցությունների միջոցով:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ефременко Д.В.*, Драма европейской идентичности, Политическая наука. М, 2005, №3.
2. *Альтермад У.*, Этнонационализм в Европе, М.: Российск. гос. гуманитар. ун-т, 2000.
3. *А.Ю.Мельвилл*, О траекториях посткоммунистических трансформаций. Полус, 2004. №2.
4. *Մարգարյան Մ.*, Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Պետական ծառայություն», 2006.
5. *Թորոյան Տ.*, Ուր են տանում «գունավոր» հեղափոխությունների ճանփաները, «Հանրային կառավարում», 2005թ., քիվ 3:
6. *Эбелинг В., Энгель А.*, Физика процессов эволюции, М.: Эдиториал УРСС, 2001.
7. *Мухаев Р.Т.*, Теория политики, М.: ЮНИТИ-ДАНА, 2005.
8. *Почепцов Г.Г.*, Теория коммуникации. М.: "Рефл-бук", 2001.
9. *Մարգարյան Մ. Մ.*, Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, Եր. «Պետական ծառայություն», 2004:
10. *Сорокин П.А.*, Социальная и культурная динамика. Пер. с англ. М, Астрель, 2006.

**GOR SEVOSYAN**

*Post-graduate PAA of RA*

**ETHNIC GROUPS AS INFORMATIVE FACTOR IN POLITICAL  
SYSTEM'S TRANSFORMATION**

The article touches upon the role and importance of ethnic groups as an informative factor in the processes of political system's transformation.

To solve this issue theoretically we suggest that one should base on K. Deutsch's communicative model of political systems typology as well as consider the ethnic groups in the context of "receiver-communicator" relationship of socio-cultural and ethno-cultural information.

«Հանրային կառավարում» գիտական հանդեսն իր էջերում հրապարակում է հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները:

Խմբագրությանն ուղարկված հոդվածները չեն վերադարձվում, հանդեսի պայմաններին չհամապատասխանող նյութերը չեն ընդունվում: «Հանրային կառավարում» հանդեսի հրապարակումներում ներկայացված մոտեցումներն արտահայտում են հեղինակների տեսակետը:

### **Հոդվածների ներկայացման ձևը**

1. Հոդվածները ներկայացվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն, տպագիր (1 օրինակ) և համակարգչային շարվածքով՝ կրիչով (*MS WORD* ծրագրով), հայերենը՝ «Arial Armenian», ռուսերենը՝ «Times New Roman» (*Unicode*) և անգլերենը՝ «Times New Roman» տառատեսակներով, 11 տառաչափով (Font): Պարտադիր է «և» տառի օգտագործումը: Բացակը (*space, пробел*) համարվում է առանձին նիշ: Բառերը տարանջատել միայն մեկ բացակով:

2. Էջը պետք է համապատասխանի A5 (Width 14.8 cm, Height 21 cm) չափսին, ունենա լուսանցքեր՝ ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 1 սմ: Էջերը պետք է համարակալված լինեն էջի ներքևում կենտրոնում: Տողերի միջև բացվածքը՝ 1,5 (1,5 lines): Ձեռագիրը պետք է ունենա կողմնորոշում էջի աջ և ձախ եզրերից (Justify):

3. Հոդվածն սկսվում է վերնագրով առաջին տողի կենտրոնում՝ մեծատառերով, որին հետևում է **հեղինակ(ներ)ի անունը և ազգանունը, պաշտոնը և կոչումը**: Հոդվածի վերջում ներկայացվում է ամփոփագիրն անգլերեն՝ ոչ ավելի, քան 0.5 էջ ծավալով (անգլերեն ներկայացված հոդվածների ամփոփագիրը պետք է լինի ռուսերենով): Հոդվածի ընդհանուր ծավալը՝ ոչ ավելի, քան 15 էջ:

4. Հոդվածը պետք է ձևակերպված լինի հստակ, վերջում պետք է տրվի գրականության ցանկը: Հոդվածը եզրափակվում է հեղինակ(ներ)ի ստորագրությամբ (ձախից) և աջից՝ նյութը խմբագրության հանձնելու թվականը (օրինակ՝ 15.04.2005 թ.):

5. Նկարները, գրաֆիկները և այլ վիզուալ նյութերը ներկայացվում են էլեկտրոնային տեսքով՝ առանձին ֆայլով կամ ներմուծված հոդվածի մեջ WORD ծրագրում իբրև նկարներ (*paste special/as picture*) և առանձին EXCEL ֆայլով (գրաֆիկների, դիագրամների և այլ դեպքերում): Միևնույն նյութի ներկայացումն աղյուսակի և նկարի ձևով չի թույլատրվում: Հոդվածում նկարների հղումները բերվում են հապավումով [օրինակ՝ «(տես նկ. 8)» կամ «ինչպես հետևում է նկ. 4-ից»:

6. Ընդունված խորհրդանշանների (% , \$) օգտագործումն անհրաժեշտ է: Թվականի հապավումները բերվում են բացակով և կետով (օրինակ՝ «1824 թ. պայմանագրով» կամ «1980-2000 թթ. ընթացքում»):

7. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մե-

կից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ «էջ» (հայերեն), с. (ռուսերեն), р. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ), օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով: Հաջորդաբար նշվում են կարգային համարը (առանց քառակուսի փակագծերի), հեղինակների ազգանուններն ու անվանատառերը՝ **նգացված (Bold)** և *շեղ (Italic)*, հրատարակության վերնագիրը, հրատարակչության անունը, վայրը (քաղաքը), թվականը և էջերի ընդհանուր թիվը: Պարբերական հրատարակությունների համար հեղինակի անվան և ազգանվան ու հրապարակման վերնագրին հաջորդում են պարբերականի անվանումն առանց չակերտների, հրատարակման թվականը, հատորի հ/կամ թողարկման համարները, վայրը, հերթական համարը և էջ(եր)ը: Էլեկտրոնային աղբյուրների դեպքում վերնագիրը (եթե կա), web-հասցեն ամբողջությամբ և անսաթիվը, ամիսը, տարին: Օրինակ՝

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Հարությունյան Ա.*, Եվրոպական Միության հանրային ծառայությունը, «Հանրային կառավարում», 2004 թ., թիվ 3-4, էջ 4:

2. *Борусов А.Б.*, Большой экономический словарь, М., Книжный мир, 2006, 860 с.

3. *Yasha Lange*. Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>,

4. <http://www.oecd.org/dsti/sti>.

8. Ենթատողային մեկնաբանությունները կամ հավելումները (footnotes) բերվում են տվյալ էջի ստորին հատվածում՝ յուրաքանչյուր էջում սկսելով 1 թվային համարակալումով (Restart each page), 9 տառաչափով:

9. Հոդվածի վերջում գրել հոդվածի վերնագիրը 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն (մեծատառերով):

10. Անձնական տվյալներ.

- անուն, ազգանուն, պաշտոն, կոչում՝ 3 լեզուներով,
- հեռախոսի համարը, էլեկտրոնային հասցեն:

*Խմբագրական խորհուրդ*

Խմբագիր՝  
Համակարգչային շարվածքը և  
ձևավորումը՝

**ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐԶՈՅԱՆ**

**ԱՆՆԱ ՂՈՒՇՉՅԱՆԻ**

Չափսը՝ 70x100<sup>1/16</sup>, թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ,  
ծավալը՝ 6.1 մամուլ, տպաքանակը՝ 300:

Տպագրվել է «Տիգրան Մեծ» տպագրատանը  
(հասցեն՝ Երևան, Արշակունյաց 2)